

ԲԱԳԻՐՆ *Pakine*

ՃԱ. տարի, քիւ 1



Գրականութիւն - Արուեստ - Իմացական Աշխարհ

Յունուար / Փետրուար / Մարտ 2013

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ՔԱՐՏՈՒՂԱՐ
Նազո Գէորգեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սարգիս	(Լիբանան)
Կիրակոսեան	(Լիբանան)
Մովսէս	(Լիբանան)
Հերկելեան	(Լիբանան)
Շուշիկ	(Լիբանան)
Տասնապետեան	(Լիբանան)
Յակոբ	(Լիբանան)
Տէր Դուկասեան	(Լիբանան)
Զաքար	(Լիբանան)
Քէշիշեան	(Լիբանան)
Անուշ	(Հայաստան)
Թրուանց	(Հայաստան)
Արքմենիկ	(Հայաստան)
Նիկողոսեան	(Հայաստան)
Հրանդ	(Մ. Նահանգներ)
Սարգարեան	(Մ. Նահանգներ)
Անտիս	(Մ. Նահանգներ)
Հաճեան	(Մ. Նահանգներ)
Յարութիւն	(Գանատա)
Պէրպլեբեան	(Գանատա)

ԷԶԱԴՐՈՒՄ՝
Անի Փէիլիվանեան-Սարգիսեան

Հասցէ՝
Պուրճ Համուտ
Շաղղոյեան կեդրոն
Բ. յարկ
E-mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան»
տպարանի

Յրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղղոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռ. (01) 241263/4
Ֆաքս՝(01)260329
Փոստարկդ՝ 80-1096 Պ.
Համուտ
E-mail:imphamaz@inco.com.lb



Հրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան

ԲԱԳԻՆ

ՅՈՒՆՈՒԱՐ, ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ 2013

ԾԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

■ ՓՈՒՆԸ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԱՐԻ ԵՒ ՄԱԳԱՂԱԹԻ ՄԱՍԻՆ ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԻՒՆԵՐՈՒՆ	1
■ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ ՓԵՆԵԼՈՓԵ - Մարուշ	4
■ ՄԵՐ ԿՈՐՈՒՍՆԵՐԵՆ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՈՒՐԻՇ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ - Ս. Կիրակոսեան	6
■ ԱՐՉԱԿ ՍԱՆՆԻՆԻ ԳԱԳԱԹԸ - Պէյո Սիմոնեան ՄԻ ԳԻՇԵՐՈՒՄՅ ՍՊԻՏԱԿ ԶԻՒՆԸ - Սաթենիկ Խաչատրեան	8 11
■ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ ԽՕՍԸ - Սեդա Գրիգորեան «ԲԱԳԻՆ» ԻՆ՝ ՏԱՐԵԿԻՑ ԵՂԲՕՐ ԻՐ ՅԻՍՆԱՍՏԵՂԻՆ ԱՌԹԻ - Արթուր Անդրանիկեան	15 15
■ ԱՐՉԱԿ ՏԵՆՉԵՐՈՒ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ (Խառնած) - Յակոբ Պալեան	16
■ ԻՄԱՅԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒՄԵՍԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ - Աննա Յակոբեան	22
■ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՍՕ ԵԱՆ - Գրականութեան Նուպէլեան դափնեկիր - Յ. Պ.	38
■ ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ԲԱԲԳԵՆ ՄԻՍՈՆԵԱՆԻ «ԽԱՉԶԱՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՍՐՏԻ ԵՒ ՄՏԵԻ ԱՆՄԱՐ ՂՕՂԱՆՁՆԵՐ - Էմմա Կոստանդեան	44
■ ԱՐԽԻՒ ՇԱԲԱԹՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ - Փրոֆ. Մանասէ Սեւակ	50
■ ԱՐՈՒՅՍ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ ՓՈԽԱՆՅՈՒՄԵԱՆ ԳՈԹԱԿԱՆ ՈՃԻՆ - Կարպիս Արմէն	61
■ ԳՐԱԿԱՆ ԳԵՄԲԵՐ ՄԵԾ ԳՐՈՂԻՆ 100-ԱՍՏԵԱԿԸ ԱԼՊԵՐ ԶԱՄԻՐ՝ ՀԱՄԱՄԱՐԴԱՅԻՆ ԵՒ ՄԻՇՏ ՆԵՐԿԱՅ - Յ. Պ.	65
■ ԱՐՈՒՅՍ ԼՈՒՄԱՆԿԱՐԵԼՈՒ ԱՐՈՒՄԵՍԸ Կ՝ԱՆՁԱՏՈՒՐ՝ ԶԲՕՍԱՇՐՋԻԿԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԵՆ - Յ. Պ. ԶԱՂԱԶԸ ԼՍՈՂ ԵՒ ՎԵՏԿԵՏԱՅՈՂ ԳՈՅՆԵՐՈՎ ԶԱՅՆ ԴԱՋՈՂ ՄԻՐԵՅ ԿՈԿԻԿԵԱՆ	65 73

ԿԱՐԵԻՈՐՈՒԹԵԱՄԸ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐՈՒ
ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
ԿԸ ՅԱՆՉՆԵՆՔ ՀԵՏԵԻԵԱԼԸ.

ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԶՂԿԵԼ
ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐՈՆՔ ՆԱԽԱՊԵՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ
ԳԻՐԵՈՎ, ՄԱՍՈՒԼՈՎ ԿԱՍ ՀԱՄԱՅԱՆՅՈՎ

Կողքի նկար՝ Au gré des barques,
«Հետեւելով նաւակներու քմայքին»
Միքէլ Կոկիկեանի



RETROSPECTIVE
«ՆԵՐԱՇԽԱՐՅԻՍ ՈՍՊՆԵԱԿԷՆ»
ԳԱԼՈՒՍ ՊԱՊԵԱՆ
Թորոնթո, 2011

«5 ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ»
Հեղինակ **ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ**
Պեյրուք, 2012




«ՊՏՈՅՑ ՄԸ ՀԱՅՈՑ ԼԵՃՈՒԻ ԲԱՌԱՐԱՆԻՆ ՄԷՋ»
ՅՈՒՇԱՏԵՏՐ - 78
Հեղինակ **Ռ. ՀԱՍՏԵՃԵԱՆ**
Հատոր Ա.
Իսթանպուլ, 2012




«ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 5»
Հեղինակ **ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ**
Նիւ Ճըրզի, 2012



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»
Հեղինակ **Մ. Յ. ՊՈՒՆՏՈՒԳԵԱՆ**
Փոխ-կառավարիչ Լիբանանի Կեդրոնական դրամատան 1985-1990
Պեյրուք, 2012




«ՈՐԲԱՄ ԵՒ ԾԻԾԱՂԻՄ»
Հեղինակ **ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԿՈԱՆԵԱՆ**
2013



«ԷՕԺԷՆ ԵՈՒՆԵՍՔՕ» ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿ
«ԱՆՋԵԹԵԹ»Ի ԴԻՄԱԿՈՎ ՆՈՐԻՐԱՊԱՇՏ ԳՐՈՂԸ ԵՒ
«ԱՐՔԱՆ ԿԸ ՄԱՐԱՆԱՅ»
Հեղինակ **ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ**
Պեյրուք, 2012

«Guide de la Mémoire Arménienne en France»
Հեղինակ **HRANT NORSEN**



3. ՊԱՆԵԱՆ

ՄԱՐՄԱՐԻ ԵՒ ՄԱԳԱՂԱԹԻ ՄԱՍԻՆ ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԻՒՄՆԵՐՈՒՆ


ՓՈԽԱՆ
ԽՈՐԵՐԳՐԱԿԱՆՆԵՐ

Օշականի հետևություններ, երբեմն կը մտածե՞նք մագաղաթի եւ մարմարի մասին, մեր երկրում, ներկայի եւ ապագայի կեանքի պարագաներուն:

Երիտասարդները պիտի ըլլային յաջորդութիւնը ապահովողները, ոչ միայն ընտանեկան անունի մը, այլ նաեւ հաւաքականութեան, զոր կը կոչէին եւ կը կոչեն ԱԶԳ: Առանց իրաւ շարունակութեան ապահովման, ԱԶԳ-ը կը խամրի:

Ճառերու մէջ յիշուած շարունակութիւն ապահովող հայ երիտասարդութիւնը կա՞յ այսօր: Կան հայաժմունդ երիտասարդներ, որոնց մէկ մասին համար միայն կրնանք ըսել հայ երիտասարդներ, եւ կան ծագումով հայաժմունդ երիտասարդներ, որոնց քիւր կ'աճի ի հեճուկս առաջիններուն: Երկու տեսական բայց ոչ արուեստական խմբաւորումներուն միջեւ կա՞յ բաժանարար գիծ:

Ազգի մը պատկանելութիւնը ինքնութեամբ կը ճշդուի: Եաքութները կամ Էսքիմոները ոչ Հնդիկ են եւ ոչ ալ Չինացի, Եաքութ են կամ Էսքիմո: Եագութներ, Էսքիմոներ, Չինացիներ, կամ Հայեր կան, որոնք այդպէս ալ չեն այլեւս, որդեգրուած ըլլալով ուրիշ մշակոյթի մը մէջ, ոչինչ պահելով իրենց ծագման ազգակերտ արժէքներէն, իրենց լեզուէն, մշակոյթէն, իրաւունքերու գիտակցութենէն, նոյնիսկ երբ գոյն կամ դիմագիծ պահած են: Իրենց ինքնութիւնը ֆրանսացիի, անգլիացիի, ռուսի, կամ այլ ազգի ինքնութեան պատճէնն է: Կորսուած է իրենց տարբերութեան առաքինութիւնը,



2013. ՅԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1

«virtus»-ը, հոգեկան ուժը:

Իրենց ծագման յիշողութիւնը, բախտաւոր պարագային, օտարալեզու պատկերազարդ գիրք մըն է, գրադարանի ապակեփեղկի ետին: Որպէսզի ըսեն, թէ իրենց հայրը, կամ մեծ հայրը, հայ էր:

Առանց արդարացումներու հաճոյակատարութեան, անհատը, այս պարագային հայ(ածնունդ) երիտասարդը, ինքնութեան գոյութեանական հարցումը պէտք է ուղղէ, ուղղած ըլլար: Մարդոբնական իրարանցումներէ հեռանալով, երէցներն ալ այդ հարցումը պէտք է ուղղեն, իրենք իրենց, իրենց զաւակներուն, սերունդին:

Երիտասարդութեան անորոշ տարագով երբ ուռուցիկ եւ զարդարանքի նմանող խօսքեր կ'ըսենք, ինքնութեան հարցը ի մտի պիտի ունենանք: Կ'ունենա՞նք:

Մեր վաղը աւելի լաւ կ'ըլլայ եթէ գիտնանք աշակերտել, երբ գրասեղաններու ետին ենք եւ երբ այլեւս չենք: Արդի համարուած կեանքը մեզ գրկած է աշակերտելու կամքէ:

Անհատապաշտութիւնը եւ սպառողական ընկերութեան հետ քայլ պահելու կիրքը ժամանակակիցներս կը բանտարկեն անմիջականի, մակերեսայինի եւ քիւր ըմբռնուած արդիականութեան մէջ, որ յաճախ հայերէն գիրքը արտաքսած է մեր միտքի հորիզոնէն:

Երբեմն գրադարանս կը խնամեմ, որպէսզի անոր տակնովրայութեան մէջ չկորսուիմ:

Դիզուած գիրքերու տակէն աչքը քթեց Դօդոս Սնապեանի խմբագրութեամբ 1983-ին լոյս տեսած Յակոբ Օշականի «Կայսերական Յաղթերգութիւն» գիրքը: Այդ գիրքը այսօրուան երիտասարդութեան տարիքը ունի: Բայց այդ երիտասարդութենէն, նոյնիսկ անոնց երէցներէն, մէկ ձեռքի մատներուն վրայ համրուողներ քերելս գիտեն, որ նման գիրք կայ: Եթէ հայերէն չըլլար, կը գիտնայի՞ն: Բայց ապահովաբար աւելի հակամէտ կ'ըլլային գիտնալու:

Դադրեցուցի աշխատանքս: Բացի գիրքը: Խմբագիրը գիրքին սկիզբը գետեղած է Յակոբ Օշականի խօսքը («Զուարթնոց», 1930, քիւ 7): Գիրքի մը հրատարակութեան եղած նպաստի մը կ'անդրադառնայ Օշական: Ժամանակակիցներս բազմաթիւ ձեւերով կրնանք բանալ ըստածը, եթէ խզուած չենք հայ գիրքէն, հայերէնէն եւ ընդհանրապէս գիրքէն:

Երիտասարդները, որոնց վրայ պէտք է գործուրալ,- այս ալ բեմէն ըստածի պէս խօսք է,- չեն տեսներ եւ չեն լսեր Օշականի խօսքը, հետեւաբար չեն աշակերտեր պատմութեան եւ իրաւ մեծերուն:

Օշական կ'ըսէ. «Նոր քաղքենին գուցէ կ'անգիտանայ իր ժեսքին տարողութիւնը: Աւելորդ չէ յիշեցնել իրեն, թէ մագաղաթը աւելի կ'ապրի, քան մարմարը: Ի՞նչ է եկած մեզի մեր պատմութենէն, անոր այսպէս կոչուած փառքերէն, քանի մը գիրքերէ դուրս: Ու ի՞նչն է նորէն, որ այսքան կործանումներէ յետոյ, քանդուած ծիածանի մը նման մեր գլուխներուն կը յամառի քրքռալ ու տելել: Ունի՞նք աւելի կախարդ յուռութք մը, քան մեր գրականութիւնը: Որ մեր տղաքը կապէ մեր ցեղին ու մեր ճակատագրին: Անոնք, որ գիրք մը կը տպեն, նեցուկ կը կապեն մեր հոգիին խորտակուաղ սիւններուն»:

Մագաղաթը կ'ապրի եւ կ'ապրեցնէ:

Դանիէլ Վարուժանի նկարագրած Բակուր իշխանի «արքենի դուռ» ունեցող ապարանքը չկայ, բայց մեր ձեռագիր մատենաները դարեր անցած են եւ կան որպէս հարբստութիւն: Այդ մատենաներուն տէր եղող, զանոնք ընթերցող, պահող եւ աճեցնող երիտասարդութիւն ունի՞նք:

Հայածնունդներ օտար լեզուներով մատենաներ կ'աճեցնեն, որո՞ւ համար եւ ի՞նչ ընելու:

Օշական կ'ուղղե
հարցումը, զոր չենք
ուղղեր երիտասարդ-
ներուն. «Ու ի՞նչն է
նորէն, որ այսքան
կործանումներէ յե-
տոյ, քանդուած ծիւ-
ծանի մը նման մեր
գլուխներուն կը յա-
մառի քրքռալ ու տե-
ւել: Ունի՞նք աւելի
կախարդ յուռութք մը,
քան մեր գրական-
ութիւնը»...

Այսօր ՀԱՅ ԳՐԱ-
ԿԱՆՈՒԹԻՒՆը «կը
յամառի քրքռալ»...
հագուազիտ դարձող
երեցներով, որոնց
օղակը կը նեղնայ,
քանի որ նոր երեց-
ներն ալ անմիջական անցեալի նորերն են: Անոնք եւ նորերը այլ ուղղութիւններու վրայ
են:

Երիտասարդութիւնը, բախտաւոր պարագային, կարգախօս կը կրկնէ: Ե՞րբ ինքնու-
թեան հպարտութեամբ ան պիտի վերանուաճէ իր ազգային լեզուն, որ Շաւարշ Միսաք-
եանի բնութագրումով չըլլայ սոսկ, «հաց պանիրի հայերէն» մը, եւ հանդիսանայ կրողը
իր ազգի գրականութեան, որպէս ընթերցող եւ որպէս աճեցնող:

Հարցում է, զոր գործնապաշտութեամբ, դադրած ենք ուղղելէ, որպէսզի վշտացողներ
չըլլան:


Հայ հեղինակ մը կ'ըսէր, որ այլեւս պիտի վճարենք հայերէն գիրք կարդացողին... Ի՞նչ
իրապաշտութիւն:

Կ'ըսեն, թէ պէտք է գորգուրալ երիտասարդութեան վրայ: Հայ գրականութեան դռնե-
րը բաց են: Եկող պէտք է ըլլայ: Գորգուրացողներ կը գտնեն:

Եթէ մեր բանիմացները, գործնապաշտները եւ երեցները նուազ հպարտանային օտա-
րալեզու հայաձնունդ գրողներով, կարմիր գորգ չփռէին օտար լեզուներով հին եւ նոր
ինքնահաստատում փնտռողներու առջեւ, թերեւս նորերը կը մտածէին աւելի տէր ըլլալ
Օշականի «կախարդ յուռութք»ին:

Մագաղաթի մասին մտածող սերունդի պէտք կայ, աղմուկէ հեռացած, որ հաւանօրէն
կը սպասէ մարմարը նպատակ չհամարող նաեւ երեցներու ... «օրինակ»ը:

Կամ, ինչպէս յաճախ յիշած եմ Վիքթոր Հիւկոյի խօսքը, երբ ան կ'ըսէ. «Կարմիր
գլխարկ դրի հին բառարանին»: Այսի՞նքն...



«Պատասխան», Վահրամ Յովակիմեան, 2004



ՓԵՆԵԼՈՓԷ

Ողիսեսը այս անգամ
 Անվերադարձ մեկնեցաւ
 Յռուկով մութ անդունդները ձեռքելով
 Ալիքները գրոհեցին բարկաձայթ
 Ափին մինակ ու տատանող սիլուէթին
 Ինչպէ՞ս սանձել թափը հսկայ
 Ինչպէ՞ս ապրիլ առանց կայմի
 Զտատանիլ ու չիյնալ
 Առանձնութեամբ խորտակուած

Փենելոփէն
 Իր շուրջ հաւաքեց բոլորը
 Եւ մնաց առանձնութեան մէջ
 Որովհետեւ
 Խօսքերը բոլոր ասեղնագործեր էր
 Ու դրեր բարձրուն
 Բոլորը տեսան արիւնը որ կը լերդանար
 Զեռագործի կուտերուն մէջ
 Եւ աչքերը փակեցին

Կրկին դարձաւ գիշերին
 Հագաւ ամպերը
 Եւ աստղերով հաւաքեց մազերը սաթէ.
 Լռութիւնը նստաւ կողքին
 Ու միասին ըմպեցին դառնութիւնը
 Որ իբր ցօղ
 Անձրեւեց բոլոր հոգիներուն
 Մոռցուած
 Ապերջանիկ

Բայց սպասումը
 Այն էր որ կը կարկտէր
 Յերեկը գիշերուան
 Կը ջնջէր եղածները ցաւի սրբիչներով
 Նորովի գրելու համար սէր մը



«Հանրապետութիւն»,
 Անատոլի Աւետեան, պղինձ, 2009



Որ քառսէն դեռ չէր ծնած
 Չէր ծնած
 Ու երկունքի ցաւերուն մէջ
 Պրկեր էր զինք
 Յետոյ եղաւ մայր մեծ-մայր
 Ու դարձեալ կին
 Մատանին էր որ զլորուող օրերուն
 հետ
 Կը գլորէր
 Ու կը նշէր ձակատագրին ուղիները
 Պատահական
 Կամ զնշուհին ամէն առտու
 Գաւաթներուն մրութիւնները կարդացող
 Ու հեռացող կաթիլներ ցըրցքելով
 Ծատեր եկան ու նայեցան
 Հարցադրեցին ափսոսացին հեռացան
 Մինչ իր սիրտը կը թփռտար
 Ամէն քայլի
 Ու կ'օրօրուէր ամէն սիրէ
 Մօտեցող
 Արձագանգները փնտռելով ձայնին
 որ կար
 Տակաւին
 Սակայն հեռու եւ անտարբէր
 ծածկուած

Քակուած թելերը հովերը
 Տարտղնեցին
 Տարին մօտիկ բերին հեռու
 խառնշտեցին կեանքը արդէն
 դասաւորուած
 «հոն հոն» ըսին ու քաշեցին
 Թռուցիկի նման զինք ալ քաշկռտեցին
 Ու հանեցին վեր-վեր անդին
 Մինչեւ ձիւնոտ գագաթները
 Եւ անունը «Հաննա» դրին

Գիշերները գելարան
 Չաւարտեցան թելերուն հետ
 Ու թելերը մազերուն հետ խձձուած
 Կախեցին զինք յոյսի անյոյս օրրանէն
 Պէտք էր կտրել թելերը թէ՛ մազերը
 Պէտք էր կանչել տատրակները
 քիւերէն
 Ու քնանալ քաղցր խաբկանքի
 տրուած
 Մինչեւ հասնի ժամանակը
 Մինչեւ կրկին գան ապրելու օրերը
 Որոնք կը քակեն կեանքը
 Կուտ առ կուտ
 Զայն վերստին հիւսելու
 խոստումներով
 Ու կը հրեն երազներու օրրանին
 Ու կը տանին մրափի
 - տատրակներ զուր կը մնչեն -
 Բայց երբ կու գայ արթնացումը
 ուշացած
 Ճշմարտութեան մը վրայ
 Կեանքը հեռուէն «բացակայ եմ»
 կը պոռայ

6 Յուլիս, 2012
 Հալէպ



ԲՈԼՈՐՈՎԻՆ ՈՒՐԻՇ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ



Անողորմ հիւանդութեան դէմ շուրջ երկու տարի իր կենաց մահու գոյակուրդ մղելէ ետք, 7 Փետրուարին, հայրենի տաղանդաւոր բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակագիր եւ գրական-մշակութային գործիչ Յովհաննէս Գրիգորեան ընդմիջտ փակեց իր աչքերը՝ խոր սուգի մատնելով Հայաստանի գրական շրջանակները, իր գրչեղբայրներն ու ընթերցողները։ Յովհաննէս Գրիգորեանի վաղաժամ մահով հայ գրականութիւնը կորսնցուց բոլորովին ուրիշ բանաստեղծ մը, որ հայ գրականութեան անդաստանէն ներս մուտք գործած առաջին իսկ օրէն եւ մինչեւ վերջին շունչը քալեց հայ քերթողութեան ծանօթ հովերուն դէմ, պարզեց իր ընդդիմադիր բանաստեղծութեան դրօշը, պայքարեցաւ բանիւ եւ գործով, բացաւ իր ուրոյն ուղին եւ քերթողագիրք առ քերթողագիրք կատարելագործեց իր բանաստեղծական ծրագիրը, որ խոր ազդեցութիւն թողուց յետ-անկախացման շրջանի երիտասարդ բանաստեղծներէն ոմանց վրայ։

Հեւ վերջին շունչը քալեց հայ քերթողութեան ծանօթ հովերուն դէմ, պարզեց իր ընդդիմադիր բանաստեղծութեան դրօշը, պայքարեցաւ բանիւ եւ գործով, բացաւ իր ուրոյն ուղին եւ քերթողագիրք առ քերթողագիրք կատարելագործեց իր բանաստեղծական ծրագիրը, որ խոր ազդեցութիւն թողուց յետ-անկախացման շրջանի երիտասարդ բանաստեղծներէն ոմանց վրայ։

Բախտաւոր աստղի տակ ծնած բանաստեղծ էր Յովհաննէս Գրիգորեան, Գիւմրիի գուլարթախոհ ու կենսուրախ մթնոլորտին մէջ հասակ նետած պարզ ու սրամիտ սրտամօտ ներկայութիւն մը, որուն նկարագրային բնորոշ յատկանիշներէն անմասն չմնացին իր ստեղծագործութիւնները։ 1970-ական թուականներու ծանր օրերուն գուգահեռ եւ իր սերունդին յարափոփոխ ժամանակէն վեր, շուրջ յիսուն տարի Յովհաննէս Գրիգորեան լծուեցաւ իր բանաստեղծական ժամանակը կատարելագործելու տենդագին աշխատանքին՝ իրարու կամրջելու համար այդ օրերու դաժան առօրեան եւ իր ապրած ու չապրած օրերուն անդր-ժամանակը, այսինքն՝ տագնապահար ու տեսլապաշտ բանաստեղծի երազները, տեսիլներն ու կարօտները։ Աւելի ուշ՝ Հայաստանի վերանկախացումէն ետք, նորանկախ հանրապետութեան հիմնահարցերն ու տագնապները շարունակեցին մաս կազմել իր ամէնօրեայ ներքին փոթորկումներուն, տառապանքներուն եւ երազներուն։ Քաղաքացիական պատասխանատուութեան խորագոյն գիտակցութեամբ, հայավայել խիզախութեամբ եւ ամբողջական նուիրումով ինքզինք կերտած Յովհաննէս Գրիգորեան ձեռնածալ չէր կրնար մնալ, մնաց եւ ամենայն հաւատարմութեամբ եղաւ նաեւ նոր ժամանակներու մէկ հարազատ վկայագրողը՝ իր սերնդակից գրչեղբայրներէն Դաւիթ Յովհաննէսի եւ Արտեմ Յարութիւնեանի հետ։ Բայց միշտ տարբեր եւ անձնադրոշմ՝ ինչպէս վայել է տաղանդաւոր

նգովեալ բանաստեղծներուն:

Հիմա չկայ ինք: Բայց մեզի հետ են եւ պիտի շարունակեն ապրիլ «առանց երաժշտութեան» իր սքանչելի, տաք ու վարակիչ երգերը, իր տարօրէն ինքնատիպ եւ բարախուն թարմաշունչ քերթողութիւնը, որ, անկասկած, պիտի արժանանայ համակողմանի ընթերցումի, արժեւորումի եւ գնահատանքի:

Յովհաննէս Գրիգորեան: Մէկ խօսքով՝ հոսանքին դէմ թեւատարած սրբազան խենթ մը: Նոր խօսքի եւ բանաստեղծական թարմ եւ կենսախայտ արձագանգներով ու նշաններով ձեւաւորուած հակաբանաստեղծութիւն մը, որ ծնաւ արդի ժամանակներու դժոխքէն, մերկացուց բանաստեղծութիւնը աւանդապաշտ տաղերգուներու հնաբոյր հանդերձանքներէն, մէկդի չպրտեց սպառած ու գրքունակ ծանօթ լեզուին պաճուճանքներն ու ժանեակները, քանդեց տաղաչափութեան քարացած կաղապարները եւ բանաստեղծութիւնը վերաջերմացուց պարզ ու համեստ մարդոց լեզուին անմիջական գրաւչութեամբ: Պարզ ըսած՝ հաստատեց գոյութեան իրաւունքը նոր ու անառակ այնպիսի՝ բանաստեղծութեան մը, նոր ծնած մանուկի մը չափ կենսաթրթիւ եւ բիրտ ըլլալու աստիճան անպաճոյճ այնպիսի լեզուամտածողութեան մը, որ արձակունակ ժուժկալ խօսքը բարձրացուց նոյնքան ջղապիրկ գոյակերպ մը ըլլալու ոլորտներն ի վեր, ապրեցաւ իր լինելութեան հարցադրումները, եղաւ պատասխան հարցադրումներու ինքնակատարելագործում, ստեղծագործական մշտաբորբոք արկածախնդրութիւն եւ շարունակ ինքզինք գերազանցեց:

Արդարեւ, 1979-ին, լոյսին եկած իր առաջին քերթողագիրքէն՝ «Բոլորովին ուրիշ աշուն»-էն մինչեւ իր վերջին հատորը՝ «Երբեք չմեռնես - ահա քէ ինչ ասում եմ քեզ», Յովհաննէս Գրիգորեան միշտ պեղեց «դանդաղ ժամեր»ուն «առաջին բառեր»ը՝ դառնալով համար իր ժամանակաշրջանի անդրանիկ վկայաբերը: Եւ որովհետեւ բանաստեղծութիւնը եղաւ իր միակ ազատութիւնն ու կոչումը, ամբողջական յանձնառութեամբ ան տէր կանգնեցաւ մերօրեայ հայ գրողի իր պատասխանատուութեան՝ իր ենթագիտակցական աշխարհի մոլթ ու լոյս եղանակներուն բացառապատումը հաւասարեցնելով անհրապոյր ու սովորական առօրեային հետ, որպէսզի ծնի եւ ամբողջանայ Պարոյր Սեւակի երազած անբանաստեղծական բանաստեղծութիւնը:

Այս իսկ պատճառով ազատ բանաստեղծութեան իր նախասիրած ձեւին հաւատարիմ՝ Յովհաննէս Գրիգորեան իջաւ փողոց, որովհետեւ, ինչպէս պիտի ընդգծէր իր առաջին յօդւածներէն մէկուն մէջ, «պոեզիան հիմա խօսել է նշանակում (առաջ՝ երգել)»: Այսպիսով, տակաւ առ տակաւ, կենդանի կեանքը, ցուրտ ու զգուելի, առօրեան, քաղաքական ու ընկերային ցնցիչ իրադարձութիւնները, ողբերգազաւեշտական պատկերները, կեանքի անհեթեթ իրականութիւններն ու մանկական զուարթախոհ յուշերը միահիւսուեցան «երկու ջրհեղեղի արանքում» իր տեղը փնտռող նոր օրերու բանաստեղծին անկատար երազներուն հետ, իր բանաստեղծական ծրագիրին տուին նոր թափ ու թռիչք՝ իր ամբողջական կատարելութեան առաջնորդելու համար սեփական ջղապիրկ կենսափորձին, պատկերաւոր լեզուամտածողութեան, կեանքի շօշափելի մանրամասնութիւններուն եւ զուարթախոհ վերյուշին հիմնասիւններուն վրայ բարձրացած արձակ քնարերգութիւն մը, մէկ խօսքով՝ Յովհաննէս Գրիգորեանի վերիրապաշտ անդր-բանաստեղծութիւնը:

Պէյրութ



ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԵՐ

ՍԱՆՆԻՆԻ ԳԱԳԱԹԸ

Մասիսէն առաջ տեսած էի Սաննինի գազաթր: Ճերմակ սաւանով ծածկուած: Մինչեւ հիմա ամէն պատշգամ ելլելուս կը դիտեմ Սաննինի գազաթր, որ երկինքի կապոյտին միանալով հոգեթով տեսարան մը կը պարզէ: Մայրիները եւ Սաննինը արդէն Լիբանանի խորհրդանիշներն են՝ որպէս յաւերժութեան կադրեր: Չէի կրնար պատկերացնել, որ օր մը կրնամ Սաննինի գազաթր բարձրանալ: Այնքան անմատչելի թուած էր ան ինծի: Անմերձանալի թուացող ուրիշ բաներու նման խորհրդաւոր:

Թաղեցի երիտասարդէ մը լսած էի, որ ինք քանի մը ընկերակիցներով բարձրացած է Սաննինի գազաթր: Տուած էր, որ կարդամ իր օրագրութիւնը: Ոչինչ կը յիշեմ անկէ: Բայց կը յիշեմ իմ ընկերներով բարձրանալու արկածախնդրութիւնս:

Չորս հասակակից ընկերներով որոշած էինք, երբ օր մը մօրս յայտնեցի որոշումը:

- Մամա՛, ընկերներով որոշած ենք Սաննինի գազաթր բարձրանալ, այնպիսի չեչտով մը, որ անվերադառնալի էր:

- Ի՞նչ, - լսաւ, - հայրդ թող չլսէ:
- Հայրս չլսելու համար քեզի կ'ըսեմ:
- Բացակայած օրերուդ համար ի՞նչ բացատրութիւն պիտի տամ հօրդ:
- Կ'ըսես որ ընկերներով պտոյտի գացինք:
- Երեք օր պտոյտ կ'ըլլա՞յ, ես իմ պատասխանատուութեամբս չեմ արտօներ:
- Արտօնես կամ չարտօնես, ես պիտի երթամ:

Պատրաստութիւնները տեսնուեցան: Ամէն մէկս իրեն սահմանուածը: Չորեկէն ուտելիքներս, դանակ եւ այլ պիտոյքներ: Հաստ լարէ պայուսակը մեր ուսերուն, ինկանք ճամբայ: Վրան լարելիքն ալ շալկեցինք: Պէյրութէն մինչեւ Պիսքէնթէ գիւղը գացինք փոխադրակառքով: Հին եւ յոգնած փոխադրակառք մըն էր: Գիւղին ճամբաները ասֆալթապատուած չէին: Փոխադրակառքը հեւալով, մերթ կանգնելով, մեզ հասցուց Պիսքէնթէ գիւղը: Ճամբան մտածեցի, որ մեքենակառքը մեզ դժուար կը քաշէ, հապա մենք ինչպէս ոտքով պիտի բարձրանանք Սաննինի գազաթր:

Քալելը աւելի հեշտ էր քան մագլցիլը: Թէեւ բռններով քալելն ալ դիւրին չէր: Խօսակցելով, կատակելով եւ երգելով ճամբան կարճուցինք: Մեր երգած երգերէն էր:

Մէկ ժամէ ի վեր կը քալենք, կը քալենք:
Ահա հասանք մեր մօտակայ գիւղը:
Հասած էինք հեռաւոր գիւղը Աաննինի, որ քիչարնակ իսկական գիւղ մըն էր: Հիմա
չեմ գիտեր ինչ զարգացումներ ունեցաւ: Այն ատեն նախնական էր: Զուրր առատօրէն
կը հոսէր աղբիւրներէն իր կարկաչող նուագներով: Աաննինի գիւղէն առաջին հանդի-
պած գիւղացին յարեց.
- Բարի եկած էք մեր գիւղը:
Մեր բեռներէն կ'երեւար, որ Աաննինի գագաթը պիտի բարձրանանք:
- Ան, որ Աաննինի ջուրէն կը խմէ, ըսաւ, առողջ կը մնայ եւ երկար կ'ապրի:
Գիւղացիի բարեմտութի՞ւնն էր, թէ՞ ոչ իրապէս կը հաւատար իր ըսածին: Անյա-
գօրէն խմեցինք: Գիւղացին մեզի օգնեց որպէսզի յարմար տեղ մը վրանը լարենք:
Լարեցինք չարչարանքով: Բերուած ուտելիքներէն կերանք եւ փորձեցինք քնանալ:
Ո՞վ կըցած է քնանալ վրանին տակ: Մէկ կողմէ ձորերու արձագանգները, հովերն
ու սողոցները, միւս կողմէ իմ վախս, որ իմ վեհերոտ մանկութեանս օրերէն կու
գար: Մեր պառկած վիճակին մէջ կարծես գայլեր մեր վրայ պիտի յարձակէին:
Վախս ամչնալէս ընկերներու չէի արտայայտեր: Բայց ինչ մեղքս պահեմ, մինչեւ
լուսնայ, վախը մէջս էր: Ընկերներու միջեւ խօսակցութիւնները որոշ մեղմացում
կը բերէին: Գիշերը անցաւ, բայց ինչպէ՞ս անցաւ: Դողերով...: Լոյսը ծագելուն առա-
ջին ոտքի ելլողը ես եղայ: Գիշերանոց չէինք տարած: Տաբատ չապիկով պառկած
էինք: Արեւը չելած պէտք է սկսէինք մեր մագլցումը: Արեւը կիզիչ կ'ըլլար: Իրարու



սիրտ տալով նետեցինք մեր քայլերը: Ի յնալով ետ ելլելով, շարունակեցինք: Խոստովանիմ, որ վհատութեան պահեր ալ անցուցինք: Նոյնիսկ ետ դառնալու տկարութիւններ ունեցանք: Պատանեկան մեր կամքը յաղթեց: Դժուար ժայռերէ մագլցելով հանգչելիք տեղեր կը գտնէինք եւ կը հանգչէինք: Բաւական քրտնեցանք, բայց քանի կը բարձրանայինք այնքան կը հովանայինք: Գազաթին վրայ մսեցանք ալ: Բայց պաշտպանուած էինք:

- Հասա՛նք, գոռաց ընկերներէս մէկը: Հաւատալի չէր: Բայց իրականութիւն էր: Սաննինի գազաթն էինք: Այդ բարձունքէն կը փոքրանային տեսողական հորիզոնի տարածքները, ճամբաները, մարդերը: Աւելի ուշ էր, որ օդանաւէն պիտի դիտէի վարերը եւ ունենայի նո՛յն զգացողութիւնը: Այդ զգացողութեան բարոյական արժէքին հետագային է, որ պիտի անդրադառնայի: Հարցերուն, խնդիրներուն վերէն նայելու:

Աւելի երկար չէինք կրնար մնալ: Բարձունքին վրայ ցուրտ էր: Բռնեցինք էջքի ճամբան: Բոլորովին ալ հեզասահ չէր էջքը, բայց մագլցելու դժուարութիւնը, անհարթութիւնները յաղթահարածին համար այլեւս հարց չէր: Սաննինի ձիւներէն մեր ջուրի ծարաւը յագեցնելով, հանգրուան առ հանգրուան, իջանք ստորոտ:

Ի՛նչ երանութիւն էր մեր ունեցածը: Ուրիշ ոչ մէկ բանով չէր փոխարինուեր: Միայն երանութիւն չէր, այլ նաեւ Սաննինի գազաթը բարձրացած ըլլալու հպարտութիւն:

Երբ գրեցի լիբանանեան պատերազմի ֆոնին վրայ «Մայրիներու Արմատները» գիրքս, ընթերցողներէս մէկը ըսաւ.

- Լիբանանցիէն աւելի Լիբանանցի ես այս գիրքիդ մէջ:

- Որովհետեւ, պատասխանեցի, Սաննինի գազաթին ջուրը խմած եմ:

«Մայրիներու Արմատները»էն ետք Սաննինի մասին այս գրութեամբս աւելի թեթեւցած կը գգայ հոգիս:

12 Սեպտեմբեր, 2012

* Սաննին.- Լիբանանի երկրորդ ամենաբարձր ու ձիւնապատ լեռը:

ՄԻ ԳԻՇԵՐՈՒԱՅ ՍՊԻՏԱԿ ՁԻԻՆԸ

ԻՆՇՈՒ

Ես հաւատում եմ, որ ինչ որ տեղ յասմիկները կարմիր են, իսկ կակաչները մանիշակագույն... որ միակողմանի են ճանապարհները ու հեռու տանող ուղիները փակ են՝ երեւանեան փողոցների պէս: Ես հաւատում եմ, որ աշխարհի բոլոր քաղաքները Երեւանի պէս են շնչում, երբ քնած են ու ինձ են տեսնում իրենց երազներում:

Ես հաւատում եմ...

Յուլիսի 25... օրը չորեքշաբթի, իսկ իմ սենեակում առաւօտից ձիւն է գալիս: Ես կարօտում եմ: Գուռ երազում էիր մարմնիս վրայ լեռներ ու ձորեր նկարել, յետոյ լեռնագնացի հետաքրքրութեամբ պեղել... իսկ մարմնիս մէջ՝ մաշկիս կիսաւեր ծակոտիներում ժայռեր կան, ուր ամէն անգամ թաքցնում եմ ինձ, երբեմն էլ՝ քեզ, իսկ աւելի յաճախ, շարաթուայ կենտ օրերին յուսահատութիւնս ինքն իրեն գցում է այդ ժայռերից, բայց երբեք չի մեռնում: Ափսո՛ս:

Ծիծաղիր... միշտ այդպէս ծիծաղիր, ես պաշտում եմ քո ծիծաղը, յատկապէս երբ այն խառնուում է սեւ գիշերուայ սպիտակ ձիւներին: Իսկ ես ինձ գիշերից գիշեր եմ նետում, ինձ նետում եմ գրկից գիրկ: Սպասիր: Գիտեմ, որ հիմա յսում ես ինձ, գիտեմ, որ հիմա հեռուում ես, գուցէ ուրիշ մարմինների վրայ ես փորձում նկարել ժայռապատկերներ: Գուցէ: Ես հաւատում եմ, հաւատում եմ, որ ինչ որ տեղ հեռուում գնացքներն անցնում են ծովերի միջով ու նաւերը օդապարիկով են տեղաշարժւում, ես հաւատում եմ, որ քո կանաչ, մոխրագույն աչքերում դու պահում ես իմ մատները՝ մետաղից, փայտից, քարից, ժայռերից:

...Այսօր լուսինը դարձաւ 22 տարեկան: Ես կը գնամ խանութ, կը գնեմ տորթ ու մոմեր, կը վառեմ մոմերն ու կը փչեմ: Ների՛ր, որ շա-



«Յասմիկ», Սվետլանա Յակոբեան, 2003

2013. ՅԱ. ՏԱՐԻ. ԹԻԻ 1



ԲԱԳԻՆ

տախտակում եմ: Քեզ համար եմ նարնջագույն զգեստ հագել, նարինջներով, նարնջային:

ՇԱ.- Դու ուզում ես ասել:

ԴՈՒ.- Մի քիչ համբերիր:

ՇԱ.- Երկա՞ր կը մնաս:

ԴՈՒ.- Չգիտեմ: Դուցէ՛: Իսկ դու՞:

ՇԱ.- (Լուում է)

ԴՈՒ.- Երէկ ամէնուր քո ժպիտն էի փնտռում:

ՇԱ.- Դտա՞ր:

ԴՈՒ.- Չգտայ:

ՇԱ.- Տեսնու՞մ ես...

ԴՈՒ.- Դիտէի, որ այդպէս կ'ասես:

ՇԱ.- Տեսե՞լ ես, թէ կայարաններում ինչքան շատ մարդիկ կան, որ սպասում են: Ես էլ եմ սպասում ու կայարանից կայարան սպասումն ուժեղանում է, իսկ զնացքը միշտ ուշանում է: Երէկուանից փորձում էի զանգել քեզ, որ ասեմ.

ՇԱ.- Շատ եմ կարօտել մատներդ՝ քարից, քամուց, փայտից, ժայռերից...

ԴՈՒ.- (Լուում է)

ՇԱ.- Կարօտել եմ...

ԴՈՒ.- (Լուում է)

ՇԱ.- Ոչինչ չունե՞ս ինձ ասելու:

ԴՈՒ.- Տեսե՞լ ես ձիւնը:

ՇԱ.- (Լուում է)

ԴՈՒ.- Քեզ փորձեցի նկարել ձեան մէջ... Չստացուեց:

ՇԱ.- էլի կը փորձե՞ս:

ԴՈՒ.- (Լուում է)

ՇԱ.- Կը փորձե՞ս էլի:

ԴՈՒ.- Չգիտեմ... Դուցէ՛... Երեւի:

ՇԱ հաւատում եմ, որ ինչ որ տեղ հիմա ցերեկ է ու դու քնած ես, եւ որ քնելուց առաջ հասցրել ես նկարել լուսաբացը:

Ողջ փողոցը հիմա խնկաբոյրով է լցուած, ու ինձ թուում է, թուում է, թուում է, թէ այդ խնկաբոյրը լողում է մաշկիս կիսաքանդ ծակոտիների միջով, ժայռերի ու լեռների ստորոտներին, զգու՞մ ես.

ԴՈՒ.- Կ'ուզէի... շատ կ'ուզէի զգալ:

ՇԱ.- Բայց չես զգում:

ԴՈՒ.- (Ժպտում է)

ՇԱ.- Ինչու՞ ես ժպտում:

ԴՈՒ.- Ինձ թուում է՝ կողքիս ես:

ՇԱ.- (Լուում է)

ԴՈՒ.- (Լուում է)

ՇԱ.- Խնկաբոյրը ուռնգերիս մէջ է:

ԴՈՒ.- Այսօր աղօթե՞լ ես:

ՇԱ.- Հա՛:

ԴՈՒ.- Իսկ ինձ գտա՞ր:

ՇԱ.- Ինչպէս միշտ:

Մէկը երգում է գիշերուայ մէջ, մէկը՝ մատները քարից, քամուց, փայտից, ժայռերից։ Ինչպէս միշտ։

Մենք իրար այնքան լաւ գիտենք, որ գրեթէ մոռացել ենք։

Դու մենակ ես։ Խիստենքերի ականջներում ծովի խոստովանութիւնն է, ծովի համբոյրն է խիստենքերի մաշկի մէջ... Հլի փորձիւր նկարել ինձ, այդպէս ինձ միայն դու ես տեսել։ Դու ինձ փորձում էիր անգիւր անել, բայց չէ՞ որ ես քոնր չեմ, նրանն էլ չեմ, նոյնիսկ ծովի- նր չեմ։ Փակիւր կանաչ-մոխրագոյն աչքերդ, նրանց մէջ քամիներ կան, իսկ ես մըսում եմ։

Խրն-կա-բոյ-րը՝ տունս լցուել է խնկարոյրով, ինչպէս աչքերս՝ քո սիգարէտի ծխով։ Դու լիսս պտտուում է։ Օդի մէջ մատներս հաւաքում են քո հեռախօսի համարը։

Ես.- Սլլօ...բարեւ, քնած չե՞ս։

Դու.- (Լռում է)

Ես.- Դիտեմ, որ քնած չես։ Վաղը կը գամ քո տուն։ Սենեակովդ իսկական ցունամի է ան- ցել...երեւի։ Նայում եմ, նայում, ու ինձ այնտեղ չեմ կարողանում գտնել։

Ես.- Դո՞ւ ես ինձ թաքցրել, թէ՞ ցունամին է ինձ չարտել մի անկիւն։

Դու.- Զգո՞ւմ ես... լուսինն իր գոյնը փոխել է։

Ես.- Ես քեզ արթնացրի՞։

Դու.- Ներիւր, դարձեալ չհասցրի աղօթել։

Ես.- Ես արթնացրի՞. քեզ։

Դու.- Ես արթուն եմ ...միշտ։ Ուզում էիր ասել...

Ես.- Ուզում էի ասել, որ հեքիաթս եմ կորցրել... չե՞ս գտել։

Դու.- (Լռում է, չի շնչում)

Ես.- Եթէ գտնես, վերադարձրո՞ւ, խնդրում եմ։ Բարի...

Դու.- Դիշեր...

(Տո՛ւ-տո՛ւ)

Երբ փակ կոպերն են համբուրում, ուրեմն բաժանումը երկու քայլի վրայ է։

Ես.- Դա ինձ ծանօթ է։ Ինչո՞ւ համբուրեցիր իմ փակ կոպերը։ Ես յաճախ եմ կարօտում քեզ, գրեթէ միշտ։

Դու.- Զգում եմ, որ քնած չես։

Ես.- Կոպերս վառւում են դեռ։ Ինչո՞ւ համբուրեցիր իմ փակ, իմ թաց կոպերը։ Դու գի- տէիր, դու վստահ էիր... իսկ ես միայն կասկածում էի... ուրեմն մօտ էր, արդէն մօտ էր... այդքան մօտ էր։

Խիստենքերի կոպերը ոչ ոք չի համբուրել։ Սւազահատիկները նրանց ամուր գրկել էին, երբ նրանք հեկեկում էին ծովի սիրուց, իսկ ինձ ոչ ոք չգրկեց։ Դուցէ ես նրանցից մէ՞կն եմ։ Դուցէ։

Ես.- Ինձ թւում է, ես գիտեմ քեզ։

Դու.- Ինձ թւում է՝ ես գիտեմ քեզ։

Ես.- Կ'երգե՞ս ինձ համար... յոգնած եմ ու շատ։

Դու.- Սիրում եմ կոպերդ, նրանք նման են խիստենքերի, որ թաքնւում են լազուրի մէջ, երբ ամաչում են ծովից։ Սիրում եմ կոպերդ։ Երբեմն ինձ թւում է, որ դու կարող ես տիե- ղերքի գաղտնիքները թաքցնել կոպերիդ մէջ, բայց եւ մի օր անփոյթ՝ ժպիտիդ հետ շաղ տալ ամէնուր։ (Ծիծաղում է)

Ես.- Ծիծաղիւր... ես պաշտում եմ քո ծիծաղը։

ԲԱԳԻՆ

Դու.- Ձեմ լսում քեզ...բայց եթէ դու ինձ լսում ես, պահիր ինձ կոպերիդ մէջ ու հետդ տար:

Ես.- Ծիծաղիր...ես սիրում եմ քո ծիծաղը...

Եկեղեցու զանգերը, որ այդպէս էլ չհասան իմ ականջներին եւ որոնց մէջ ամէն անգամ փնտռում էի քո ձայնը, այսօր յայտնուել էին բոլոր հայելիներում, տետրիս էջերում, մագերիս մէջ: Կարօտից ձեռքս էի առնում քո սիգարէտներն ու ուզում էի ծամել դրանք... ինձ թւում էր՝ դու նրանց մէջ ես, քո հոտն էլ նրանց մէջ է: Դու ուրիշ ես, դու ուրիշին ես: Երբ ես ծխում էի քո սիգարէտը, նրա ծխի հետ թռքերիս մէջ էր իջնում քո ձայնը, ես համբուրում էի քեզ... չատ... չատ: Այրուում էին մատներս...իսկ ես...: Պատմիր ինձ, ասա՛:

Ես.- Երբ տիեզերքում բոլոր հրեշտակները տխրում են, ի՞նչ են երգում:

Դու.- (Լռում է)

Ես.- Ի՞նչ...

Դու.- (Լռում է)

Ես.- Ես քեզ չեմ լսում:

Դու.- Աիրում եմ...

Ես.- Ի՞նչ...

Դու.-

(Տու-տու-տու-տու-տիկ-տակ-տու-տիկ-տակ-տու-տու-տու-տիկ-տակ-տու)

Աղօթիր ինձ համար...ես գիտեմ, որ դու երբեք չես աղօթում, բայց եթէ աղօթես, ասա նրան, որ քեզ սիրում եմ:

Հեռախօսալարերի միջով ամբողջ մի կեանք է գնում ու գալիս, ու այդ միլիարդաւոր կեանքերի մէջ իմն էլ ապրում է դառը ժպիտը դէմքին: Իսկ ես աշխարհում, աշխարհի չափ, աշխարհից էլ շատ ուզում եմ լսել քո ձայնը՝ իմին ի պատասխան: Աշխարհի բոլոր հեռախօսալարերը խճճուում են կոկորդիս մէջ ու խեղդուում եմ...ես խեղդուում եմ:

Յասմինները քթների տակ հոգեհանգստի մեղեդիներ էին մրմռում կատուի պէս: Իսկ հոգեհանգստի օրն այնքան շատ ծաղիկներ կային, որ մի պահ դու կորար նրանց մէջ, դարձար նրանցից մէկը: Ու ես հաւատացի իմ մտապատկերին... մինչեւ հիմա էլ հաւատում եմ:

Ես հաւատում եմ, որ ինչ որ տեղ յասմինները թափանցիկ են, իսկ կակաչները մոխրագոյն... որ միակողմանի են փողոցներն ու հեռու տանող ուղիները փակ են՝ երեւանեան փողոցների պէս:

Իմ ցանած եւ քո աճեցրած մանուշակները գնալուցդ յետոյ գժուեցին, ցաւից պոկեցին իրենց շորերն ու թռան:

Դու երագում էիր մարմնիս վրայ լեռներ ու ձորեր նկարել, այնինչ աշխարհի բոլոր ժայռերը, ձորերն ու լեռները քեզ հետ տարար:

Յուսահատութիւնս երէկ նորից փորձեց ինքնասպան լինել՝ նետուելով ժայռից, բայց նորից կենդանի մնաց: Ափսո՛ս:

Յուլիսի 25... օրը երեքշաբթի: Շնորհաւոր ծնունդդ, սիրելիս: Տես իմ սենեակում ինչքան ձիւն է եկել...

Ես.- Այլօ, դու ինձ լսո՞ւմ ես...

Դու.-

(Տու-տու-տու-տու-տիկ-տակ-տու-տիկ-տակ-տու-տու-տու):

25.07.07թ.

ՄՐՏԻ ԽՕՍՔ

Քուրմի մը երկիւղածութեամբ խոնարհեցանք տաճարիդ, դուն մեր առաջին սէր, առաջին երկրպագութիւնն. ուրիշ էին օրերը, պահանջները, կարիքները. ծարաւ էինք գիտութեան, հերոսական էինք երազներով, գինիներուն ամէնէն ընտիրն էիր մեր քիմքերուն. հարբեցանք լեզուական չքեղութիւններովդ, խռովեցանք իմաստութիւններովդ, ամրացանք հովանիիդ ներքեւ, անեցանք էջերուդ լայնքին...

Հիմա դարձեալ ուրիշ են օրերը: Յիսնամեակ մը ձգած ետիդ, կանգնած ես նորին դիմաց: Մենք եւս ուրիշ ենք արդէն: Կեանքի բազում բովերէն ու ծովերէն անցած տարեկիցներ ենք համարեա: Եւ արդէն ուրիշ են մեր ներքին զգայնութիւնները, լայնատարած լիճեր են մեր ջուրերը, արմատին ամուր կառչած՝ ենք նաեւ աշխարհի որդի: Ուրիշ թող ըլլան օրերդ գալիքի: Բացուէ՛ նոր հորիզոններու, ազգայինէն բարձրացիր միջազգայինին, գրաւէ աշխարհի լուսարձակները, մի՛ մնար տասանորդներու կարօտ, այլ գանձարանդ լեցուր նոր սխրանքներով: Բաշխէ՛ աշխարհին ոսկին անուիդ եւ ընդերքդ լեցուր նոր տեսիլքներով:

Շնորհաւոր տարեդարձդ, մեր բոլորին սիրելի ԲԱԳԻՆ:

Ընդառաջ՝ աղամանդեայ յորելեանիդ...

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«ԲԱԳԻՆ»ԻՆ՝ ԻՔՐԵՒ ՏԱՐԵԿԻՑ ԵՂՔՕՐ ԻՐ ՅԻՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

50-ամեակդ է ու ես շուարուն՝ նշանակալից տարեդարձիդ խորանի առջեւ կ'երեւակայեմ. «Միլլաս» տպարանը, եւ երկիւղածօրէն ծնունդիդ սպասող Կարօ Սասունիին, Եղուարդ Պօյաճեանին, Պօղոս Մնայեանին, - ներկայումս Յակոբ Պալեանի հոգածու խմբագրապետութեամբ, - որոնց շնորհիւ եւ ձեռամբ շունչ ու մարմին ստացար, որ հետագային փառաւորապէս սնուցանէիր Հայ Գիրը եւ Միտքը՝ իմացական շարժումով, եւ կարծես թէ զօրում էիր շարունակել աւագ եղբօրդ՝ Բոստոնի «Հայրենիք» հանդէսի ողջախոհ սկզբունքայնութիւնը՝ Հայոց տարածութեան եւ ժամանակի մէջ՝ պահպանելով լեզուի եւ ոճի քո ինքնօրինակութիւնը՝ շնորհիւ այն բանաստեղծների, գրողների, գրադատների, որոնք ակամայ բազինական էին դարձել, եւ «ձայն հառաչանաց հեծութեան սրտի» քեզ էին վերընծայում իրենց ի խորոց սրտի խօսքը եւ «կ'երգէին ձեռամբ»: Նրանցից շատերն այսօր ապրում են, նրանք առաջին օրհնեալ քայլերն արել են քո հոգածու ուղեկցութեամբ եւ վստահ եմ որ տակաւին քո գերիվեր ոյժի ազդեցութեան տակ արդ իրենց սքանչացումն են ապրում յորելեանիդ առթիւ:

Սիրելի եւ վաստակեալ յորելեար,

Անմնացորդ եւ շարունակական է սէրդ ու նուիրումդ Հայ գրին եւ առինքնող. եւ ես՝ հասունութեանդ վկան՝ քեզ երեք տարագիր չեմ համարել ու պատկերացրել, որովհետեւ Գու՝ «Փիւնիկէն աւելի փիւնիկ է Հայր» սարաֆեանական խտացեալ պատգամի եւ ոգեկոչումի որդեգիրն ես եղել՝ միշտ «պատնէշին վրայ», սփիւռքեան հայ հաւաքականութեան ներգործուն սիրոյ ոգով կենսահաստատ:

Քոյդ՝ ԳՈԿՏ. ԱՐԹՈՒՐ ԱՆԳՐԱՆԻԿԵԱՆ
Բանաստեղծ, գրականագետ

Երեւան, 9 Օգոստոս, 2012



ՏԵՆՉԵՐՈՒ ՄԵՐՈՒՆԴ ՄԸ

(Հաաուած անախպ վէպէն)

Յոյցը նախորդող երկու օրերուն Օհան թերթեր կը դնէր: Աշխարհի հեռու եւ մօտ անկիւններու մասին լուրեր կ'ալին, մեծ ու պզտիկ պատերազմներ, մահեր, անծանօթ անուններով երկիրներու մէջ: Աւագակներու մասին առատաբան զգայացունց տեղեկութիւններ կը տրուէին, զգայացունց թուղթ եւ մելան ծախելու միջոց էր: Գեղուհիներ՝ սլացիկ եւ մերկապարանոց էջեր կը գրաւէին: Միշտ վերսկսող՝ տարբեր անուններով:

Օհան քանի մը թերթերու մէջ հանդիպեցաւ երկարապատում յօդուածներու՝ Փիրէնեան լեռներու արջերուն մասին, հեռատեսիլը հաղորդումներ կատարեց: Աղմուկ բարձրացուցին, ըսելով որ անոնք կ'անհետանային, զանոնք բազմացնելու համար Ռումանիայէն նորերը պէտք էր որ բերէին: Ի գուր մէկ տող կը փնտռէր հայոց մասին, անոնց վերագրուած նոյնիսկ «Դատապարտելի» արարքներուն մասին, չէր գտներ, ինչ որ իր հոգիին մէջ անգործութեան զգացումէ բխած ընդվզում կը յառաջացնէր: Արջերու անհետացումով կը տազնապէին, հեռատեսիլը անոնց մասին նկարահանումներ կը սփռէր: «Կուշտերու քաղաքակրթութիւն», ըսաւ ինքնիրեն:

Հապա՞ անհետացող լեզուները, ժողովուրդները, սովահար ուռած փորով մանուկները:

Միջօրէի դադարին ուսանողները հաւաքուած էին Կասդոնի սրճարանը: Հոն էին լրագրողի որդին Ալէն Մորիէն, Սումայան, Զապէլը: Օհան մօտեցաւ Ալէնի եւ շնորհակալութիւն յայտնեց նախորդ օրուան իր միջամտութեան համար, որ ինք ազնուութեամբ տեղը նստեցուցած էր քաղքենիի շփացած ձախլիկը:

- Կարդացի ինծի տուած պրակը: Որպէս Փրանսացի, զարմանալի կը գտնեմ, որ այլ նմանօրինակ պարագաներու այնքա՛ն չատախօս քաղաքական գործիչներ եւ թերթեր, ներառեալ ձախակողմեանները, լուռ կը մնան: Պրակը տուի հօրս, որպէսզի կարդայ: Ինծի ըսաւ որ խմբագրութիւն պիտի տանի: Իսկ յայտնեց որ ներկայ պիտի ըլլայ ցոյցին, ըսաւ Ալէն:

Օհան միացաւ Զապէլին եւ Սումայային: Զգուշութեամբ կրկին հետաքրքրուեցաւ բացակայ Հաչէմով: Սումայա պահ մը լռեց: Խուսափեցաւ պատասխանելէ: Փոխարէն ըսաւ, որ Զապէլին պիտի ընկերանայ ցոյցի օրը: Երբ դուրս կու գային սրճարանէն, քանի մը հոգի ըսին, որ կարդացած էին պրակը, իրենց զարմացումը յայտնեցին, որ այդ դէպքերուն մասին չէին լսած: Զէր խօսուեր: Օհանի համար նորութիւն չէր մարդոց անտեղեկութիւնը: Մտմտաց, որ եթէ համալսարանականները տեղեակ չէին, ինչպէ՞ս

տեղեակ պիտի ըլլային ժողովրդական խաւերը: Ի՞նչ պէտք էր ընել եւ չէր ըլլար:

Յետմիջօրէի դասին նկատեց որ Սումայա զգուշութեամբ սրահ մտաւ: Երիտասարդ կին դասախօս մը կը ներկայացնէր կարգ մը կղզիներու բնակչութեանց մօտ ամերիկացիներու կողմէ կատարուած ուսումնասիրութիւնները, որոնք կը վկայէին մշակոյթներու եւ այդ ժողովուրդներու հոգիի եւ միտքի հորիզոններու այլազանութեան մասին, որոնց շտեմարանը անոնց ինքնութիւն տուող լեզուներն էին, որ բառերը խտացեալ պատմութիւնն էին: Գերադասութիւն տեսնել մէկ մշակոյթ միւսին բաղդատելով, անընդունելի սխալ մըն էր, իսկ զանազան ձեւերով անոնց փճացումը՝ ոճիր, - կ'ըսէր տիկինը:

Օհան մինչեւ դասի աւարտը հետեւեցաւ, մանաւանդ որ դասախօս տիկինը շատ հասկնալի կերպով եւ օրինակներով կը բացատրէր: Սումայա միշտ հոն էր, եւ ապահովաբար զինք կը սպասէր: Գրան առջեւ զիրար գտան, եւ հակառակ կրօնական արգելքի, Սումայա բարեւելու համար համբուրուեցաւ: Բոլորն ալ այդպէս կ'ընէին, ինչո՞ւ Սումայա պիտի չարդիականանար: Սյդ կրօնական արգելքը ինք չէր ընտրած: «Վիլլրթանէօզ»ը ազատութեան դաշտ էր: Սումայա յանդուգն աղջիկ էր եւ ըսի-ըսաւներէն վեր էր:

- Ինչպէ՞ս կը պատահի, որ այս օրերուն քեզ չեմ տեսներ, չես տեսնուիր, - հարցուց Օհան:

- Գործեր ունէի:

- Հաշէմ վերադարձա՞ւ, - նիւթը փոխելու համար հարցուց Օհան:

- Տեղեակ չեմ, - ըսաւ Սումայա:

Կը թուէր թէ ան չէր ուզեր խօսիլ ոչ իր եղբոր եւ ոչ ալ իր զբաղումներուն մասին:

Շեշտը պրկուած էր, արտայայտութիւնը սառած:

Պահ մը լուռ քայեցին կողք կողքի, դէպի ելքի դարպասը: Ուսանողները կ'աճապարէին տուն հասնելու համար:

- Տես, անոնք երթալիք տեղ ունին, սպասող ունին, - ընկճուածի ձայնով խօսեցաւ Սումայա:

- Եթէ ոչ հոս, բայց հեռուն մենք ալ սպասող ունինք, եթէ հոս ենք, այդ իրենց մեր վրայ դրած յոյսերուն համար է, - արեւելքցի իմաստունի պէս ըսաւ Օհան:

- Համայնարանին մէջ բաժնած պրակդ կարդացի: Կրօնակիցներուս հաշույն ամչցայ: Ձեր ցոյցին պիտի գամ, ցոյց տալու համար որ գործուած ոճիրը կրօնական չէր, այլ նուաճողական, կայսերական: Գիտես, որ նոյն լուծին տակ եղած են նաեւ պաղեստինցիները, արաբները, մէկ լուծէն անցած են միւսը:

- Գիտեմ, Սումայա: Բայց հազուադէպօրէն կրօնական պատենչը յաղթահարելու ճիգ կ'ըլլայ: Պատմութիւնը կրօնական անհասկացողութիւնները եւ անոնց հետ եկած ոճիրները կը յիշեցնէ, բայց մարդիկ չեն լսեր: Քաղաքական շահերը արդարութեան ճամբան կը խցեն, եւ յաճախ կրօնքը որպէս միջոց կը գործածեն: Եւ տկարները կը շահագործեն: Սնոնք ալ կարծելով որ քաղաքականութիւն կը խաղան, կը շահագործուին: Սյդ շահագործումը օր մը կրնայ առաջնորդել, կրօնքի դիմակին տակ, միջազգային բախումի:

- Գաստիարակութեան հարց է: Ես իմ ժողովուրդիս պիտի բացատրեմ: Սնոնք դիւրաւ պիտի հասկնան: Իսկ եթէ ձեզմէ մէկը գայ եւ ինք բացատրէ, ազդեցութիւնը տարբեր կ'ըլլայ: Հայերու պահպանողականութիւնը կը հասկցուի իրենց կրած տառապանաքով:

Հասած էին գետնուղիի կայանը:

Սումայա անակնկալի բերելով Օհանը՝

ԲԱԳԻՆ

- Կրնա՞մ բնակարանդ գալ եւ հոն կը շարունակենք այս գրոյցը: Խօսակիցի պէտք ունիմ: Այս խօսքերը կ'ըսէր Սոլմայա առանց զանոնք չպարելու, չփոթի մատնելով Օհանը:

Ակներեւ էր, որ Սոլմայա հոգեկան տակնուվրայութիւն մը կ'ապրէր, բայց չէր բանար իր հոգին: Կը տառապէր: Այդպէս է առանձնութեան ազդեցութիւնը, ան կը բազմապատկէ յուզումները, եւ այդ պահերուն ամէն տեսակ խենթ մտածումներ կը ծնին: Օհան չէր հասկնար իր զգացումները Սոլմայայի հանդէպ, հիմա կիներ չէր տենչար, ան կը նմանէր վիրաւորի մը՝ որ ապաստան կը փնտռէր: Ինչպէ՞ս կրնար զլանալ այդ ապաստանը:

Օհան չէր ուզեր, որ Սոլմայա տեսնէր իր խեղճ սենեակը: Արեւելքցիի հպարտութիւն ունէր: Բայց չէր ուզեր նաեւ անոր առջեւ իր դուռը փակող ըլլալ: Ի՞նչ պիտի մտածէր ան եթէ իր առջեւ փակէր իր բնակարանի դուռը:

- Սոլմայա, - ըսաւ Օհան, բայց չշարունակեց:

- Ըսէ՛...

- Սոլմայա, շատ խեղճուկ սենեակ մը ունիմ, յուսախաբ պիտի ըլլաս:

- Սենեակով մը խանդավառուելու կամ յուսախաբ ըլլալու վիճակին մէջ չեմ: Կարեւորը այն է որ քովդ ըլլամ: Առանձին չըլլամ:

Երբ աստիճաններէն կը բարձրանային, Սոլմայա ուժգնօրէն բռնեց Օհանի ձեռքը:

- Հայերու ցոյցին պիտի գամ եւ կողքիդ պիտի ըլլամ: Ոչ միայն քեզի համար: Այլ պարտականութեան համար: Նոյն պայքարն է: Երանի մարդիկ հասկնան, որ միասին պէտք է ըլլան ընդդէմ չարութեան:

Օհան բացաւ դուռը: Ներսը փակի հոտ կար: Բարձրացուց լուսամուտի փեղկը, հրաւիրեց Սոլմայան որ նստի իր սեղանին առջեւ:

Նեղիկ եւ անապատի նմանող սենեակը բնակուած էր, յանկարծ կենդանացած էր: Եթերը տարբեր էր: Օհան կը սպասէր, որ Սոլմայա իր հոգեկան խռովքի մասին խօսի, գիտնալով հանդերձ որ ան ցարդ խոստովանութիւններէ խուսափած էր: Լռութիւնը խզելու եւ խօսակցութիւնը փոխադրելու համար չէզոք գետնի վրայ, հարցուց.

- Դասերուն կրնա՞ս հետեւիլ, լեզուի դժուարութեան արգելքը յաղթահարեցի՞ր: Ես յաճախ բառարանի օգնութեան կը դիմեմ երբ գիրքերը կը կարդամ: Իսկ երբ արագ խօսին, կը կորսուիմ, չեմ հասկնար:

Խօսակից փնտռող Սոլմայա լուռ կը մնար: Իր դէմքին վրայ կը կարդացուէր ճմլող ցաւ մը: Օհան իր նեղիկ անկողինին եզերքը նստեցաւ: Կը նախզգար որ ծանրակշիռ լուր մը ունէր աղջիկը, որ զինք զգետնած էր, զոր չէր կրնար եւ չէր ուզեր խոստովանիլ:

- Օհան՛ն:

- Այո՛, Սոլմայա:

- Կողքիդ կրնա՞մ նստիլ:

- Եթէ կ'ուզես:

Սոլմայա անսպասելիօրէն գլուխը հանգչեցուց Օհանի ուսին:

- Հաշմը պիտի չգայ:

Ըսաւ եւ փղձկեցաւ: Ամբողջ մարմնովը կը դողար: Ալ չշարունակեց:

Օհան ըսելիք բառ չէր գտներ: Միաժամանակ ինկած էր ենթադրութիւններու մէջ:

Եթէ Հաշմ մեռած ըլլար, պիտի ըսէր որ մեռած էր եղբայրը:

Պատուհանէն դուրս նայեցաւ, արդէն մութ էր: Աղջկան ցնցումները մեղմացած էին,

բայց կը մնար պրկուած, կրկին փղձկելու պատրաստ:

Ձգուչութեամբ իր վրայ կռթնած մարմինը հեռացուց: Բաժակ մը ջուր բերաւ:

- Խմէ՛, կը հանդարտիս:

Սղիկը առաւ բաժակը, ումպ մը կուլ տուաւ, վերսկսաւ հեծկլտուքը:

- Քոփէս մի՛ հեռանար,- լաստի կառչողի մը պէս խօսեցաւ Սումայա:

Գատապարտուածի աղաչական շեշտ մը կար Սումայայի խեղդուկ ձայնին մէջ: Սյն-պէս զգաց, որ ան կը փնտռէր, իր չխոստովանած ցաւի ծանրութեան տակ փուլ չգալու համար, դուռ մը:

Պահ մը ետք Օհան անդրադարձաւ, որ Սումայա կը մրափէր: Ձգուչութեամբ հեռացաւ անկէ եւ բարձին վրայ դրաւ աղջկան դուռը: Ի՞նչ ահաւոր գաղտնիք մը ունէր ան, ի՞նչ մեծ դժբախտութիւն պատահած էր:

Սյդ վիճակին մէջ Սումայա աւելի գեղեցիկ էր եւ մանաւանդ՝ խորհրդաւոր:

Ինք անզօր էր անոր ցաւը բռնելու: Եւ փորձեց գիրք մը կարդալ: Բայց ինչպէ՞ս կեդրոնանալ:

Գիշերը յառաջացած էր, երբ Սումայա աչքերը բացաւ, ժամացոյցին նայեցաւ:

- Ի՞նչ եղաւ ինծի,- ըսաւ բարձրաձայն:

- Ոչինչ, յուզուած էիր եւ քնացար:

Պատրաստուեցաւ մեկնելու:

- Ուշ է: Կրնաս հոս պառկիլ այս գիշեր:

- Չեմ կրնար: Քովս նստիր:

Երբ Օհան Սումայայի կողքին պիտի նստէր, ան փարեցաւ իրեն, կատաղութեամբ, բան մը յափշտակողի պէս: Պահ մը ետք, Սումայայի այրող մարմինը կը հանգչէր Օհանի կողքին, գիրկընդխառնուած էին նեղլիկ անկողնին վրայ, եւ այդպէս մնացին մինչեւ առաւօտ: Ոչ Սումայա յանձնուած տրուած էր, ոչ ալ Օհան աղջկան տիրանալու փորձ րրած էր:

Սումայա պաշտպանուած էր Օհանի մարմինով եւ քնացաւ: Յաջորդ առաւօտ, երբ տունէն դուրս պիտի գային, Սումայայի աչքերը կարմրած էին:

- Եթէ այս խենթութիւնը չընէի, ես իրապէս պիտի խենթանայի, շնորհակալ եմ, Օհան:

Չես կրնար երեւակայել թէ որքա՛ն շնորհակալ եմ:

Սյդպէս ալ Օհան չհասկցաւ թէ ի՞նչ կար «Հաշմը պիտի չգայ» խօսքի ետին:

Գիտէր որ ազատագրական պայքար մղողի մասին հարցում չէր ուղղուեր: Սյդ սորվեցուցած էին իրեն, երբ դեռ պատանի էր:

Չհարցուց եւ չհասկցաւ:

* * *

«Սպրիլ 24»:

Ինչպէս անցեալ կամ նախանցեալ տարիներուն, կէսօրէ ետք ընդհանրապէս ցանցնուած թոշակառուներու, քանի մը կիներու, եւ երիտասարդներու ներկայութեամբ, աւանդականօրէն կրկնուող հոգեհանգստեան պաշտօնը կատարուեցաւ եկեղեցիին մէջ:

Օհանի ըսած էին, որ հոս սովորութիւն չէր որ հայերը իրենց վաճառատուները փակէին կամ գործի չերթային «Սպրիլ 24»-ին, հակառակ անոր որ պետութիւնը այդ արտօնած

ԲԱԳԻՆ

էր: Ի հարկէ կային քանի մը հազուագիւտ օրինակելի բացառութիւններ:

Միայն պետական պաշտօնեաները կ'օգտուէին այդ արտօնութենէն, այդ օրը արձակուրդ կը համարէին, երբեմն նոյնիսկ առանց «տողանցք»ին մասնակցելու:

Կը սպասուէր երեկոն, որպէսզի մարդիկ վաճառատուները փակելէ եւ գործը դադրեցնելէ ետք գային եւ թափօրը կազմուէր:

Օհան Սումայայի ընկերակցութեամբ երբ հասաւ եկեղեցիին առջեւ, նկատեց որ ապահովական մեծ թիւով ուժեր եւ կառքեր արդէն դիրք գրաւած էին թաղամասի փողոցներուն տարբեր անկիւնները: Ժամը վեցի երբ կը մօտենար, բարձրախօսները արդէն կը թնդային կարգախօսներով կամ ազգային երգերով, խլացնող աղմուկ՝ որ թաղեցիները պատշգամ կը հրաւիրէր: Թափօրը կը կազմուէր, պաստառները եւ ցուցանակները սկսած էին բարձրանալ: Պատշգամներէն մարդիկ պահ մը կը դիտէին, անցորդները կանգ կ'առնէին, պաստառի մը վրայ գրուածը կը կարդային եւ կը հեռանային: Զապէլ զիրենք նկատեց հեռուէն եւ առանց մեծ գոհունակութեան միացաւ իրենց: Երբ գանոնք միասին տեսնէր, կ'անհանգստանար, բայց ոչինչ կ'ըսէր:

- Այն Մորիէն տեսա՞ր, - հարցուց Օհան Զապէլի:

Զէր տեսած:

Պաստառներուն ետեւ կանգնած երիտասարդներու խումբի շարքին մէջ տեղ գրաւեցին:

Այն պահուն երբ թափօրը պիտի շարժէր, չչուկ մը շրջան ըրաւ բազմութեան մէջ: Յոյցի երթը դէպի Թուրքիոյ դեսպանատունը կրնար արգիլուիլ:

Խուլ եւ տարերային աղմուկ մը բարձրացաւ եւ տարածուեցաւ: Բռուկները վեր բարձրացած էին: Երիտասարդները, հակառակ երէցներու արգելքին, շարժեցան դէպի դեսպանատուն տանող պողոտային վրայ: Պողոտան ամբողջ լայնքով փակուած էր սահաւարտակիր ապահովութեան ուժերով: Իրարանցում մը տեղի ունեցաւ եւ ոստիկանական կառքերուն մէջ դրուեցան երիտասարդներ, որոնք որեւէ ակնառու նախաձեռնութիւն չէին ունեցած: Տղայ, աղջիկ, ոստիկանատուն տարուեցան:

Գիշերը ուշ ատեն գանոնք ազատ արձակեցին, անուն, մականուն եւ հասցէ արձանագրելէ ետք: Աւելի խիստ եղած էին օտարահպատակներու նկատմամբ, նախազգուշացնելով եւ սպառնալով, որ կրնային երկրէն արտաքսուիլ երկրի կարգը եթէ խանգարէին:

Սումայա եւ Օհան եւս, կարգախօսներ պողոտայի երիտասարդներու հետ տարուած էին ոստիկանատուն: Վերջին պահուն ազատ ձգուածներու խումբին մաս կը կազմէին իրենք, երբ գիշերը յառաջացած էր արդէն: Զիրար գտան ոստիկանատան առջեւի մայթին վրայ: Զապէլ հոն չէր, հաւանօրէն, մտածեց Օհան, օտարահպատակ չըլլալով, գայն աւելի շուտ ազատ ձգած էին:

Պահ մը լուռ մնացին:

Այդ ժամուն գետնուղին չէր բաներ:

Ապա, անզգայաբար, անխօս, քալեցին մինչեւ «Նասիոն» հրապարակը: Շատ բնական կերպով, Սումայա ինք գրկած էր Օհանի մէջքը, յոգնութեան եւ դառնութեան դէմ պաշտպանութիւն փնտռողի պէս, եւ բարձրացան սենեակ:

- Օհան, կ'ուզէիր գիտնալ, բայց չհարցուցիր: Հաշմ ջոկատի մը հետ կը մարզուի: Պիտի մասնակցի մեծ գործողութեան մը, կրնայ ըլլալ որ ողջ չվերադառնայ: Հիմա կը հասկնա՞ս չզսպուող յուզումներուս պատճառը: Ամէն բանով տարբեր ենք, ըստ ընկալ-

եալ սովորութիւններու, տարբերութիւններ՝ զորս մենք չենք ընտրած, Օհան, բայց զիս առ թեւերուդ մէջ, մեր կեանքի անհեթեթութիւններուն վրայ մէկ հատ ալ աւելցնենք: Մեր խենթութիւններուն պատճառով աշխարհ պիտի չդադրի դառնալէ:

Անեհակի պզտիկ լուսամուտէն նայող սպիտակ լուսինը վկայ եղաւ ինքնատիպ սիրոյ արարողութեան մը:

Օհան գտաւ արեւելեան հեքիաթներու իրական-անիրական հրաշք կրակէ կիներ: Գեղեցիկ եւ փարթամ:

Հեթանոսական արարողութեան մը եւ քուրմը եղած էին եւ նոխազը:

Գիտէին, որ այդ ծէսը կրկնուելու կամ տեւելու կարելիութիւն պիտի չունենար: Անվաղորդայն երջանկութեան մը անձնատուր եղած էին:

Առումայա ուզած էր Հաշէմի, թերեւս ալ իր, չապրելիք կեանքին վրայ յաղթանա՞կ տանիլ:

Օհան հասկցաւ, որ իրաւ երջանկութիւնը չի կրկնուիր, չի տեւեր, որ կ'աճի երազի եւ յիշողութեան մէջ: Որ ան ընկերութեան կողմէ ընդունուած նկարագրուած երջանկութենէն տարբեր է:

Ուսումնական տարուան աւարտը նախորդող օրերուն, թերթերը մեծ վերտառութիւններով, եւ որոշ գոհունակութեամբ, հաղորդեցին պաղեստինեան ջոկատի մը բնաջնջման լուրը: Առվորական էր: Նոյն օրը մոռցողող լրատուութիւն, երբ յաջորդ օրը նոր վերտառութիւններ ուղարկութիւն գրաւէին: Այդ լուրերը սպառման ապրանք էին՝ թուղթ մրոտելու, ծախելու եւ դրամ չահելու համար: Շատ ալ կարեւոր չէին անոնց ետին անհետացած կեանքերը:

Ոչ ոք յուզուեցաւ: Ըսին որ ահաբեկիչներէն վերապրող չեղաւ, եւ այդ յաղթանակ համարողներ եղան:

Հայ ալ չէին, որ միտիթարութեան համար հոգեհանգիստ կազմակերպէին:

Առումայա լաւ ուսանողուհի էր: Յաջողեցաւ:

Օհան հմայուած էր: Այդ հոգեվիճակներուն մէջ գտնուող աղջիկը ո՞ւր գտած էր այդքան հաւասարակշռութիւն եւ ուժ:

Ամառնային արձակուրդը սկսած էր: Քաղաքէն հեռանալու հեւքը կը զգացուէր մրթնոլորտին մէջ եւ փողոցները կը խճողուէին գրօսաշրջիկներով, որոնք շորորալով կը քալէին եւ կը լուսանկարէին շէնքեր եւ հրապարակներ, որոնց քովէն տեղացին կ'անցնէր եւ չէր նկատեր:

Զբօսաշրջիկները թանգարան պիտի երթային, բազմատեսակ պանիրներու անունները պիտի լսէին, պիտի կրկնէին եւ մոռնային: Ոչ ոք իրենց քայլերը պիտի առաջնորդէր «սպասուհի սենեակ» մը: Պիտի վերադառնային առանց այդ բառը լսած ըլլալու:

Զբօսաշրջիկները չեն նկարեր «սպասուհի սենեակները», կը տեսնեն դղեակները:

(Անտիպ վէպէն, հատուած)



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ծանօթ. Աննա Յակոբեան Երեւանի համալսարանէն, Գրականութեան Դոկտոր է, փրոֆեսոր, թարգմանիչ եւ թարգմանչական աշխատանքի մասնագետ: Ան թարգմանած եւ հրատարակած է Ալպեր Զամիւի գործերը, Մարկրիթ Տիրասը, Մորիս Մեթերլինկը, Սէն-Ճոն Փերսը, Փոլ Վալերին, Փոլ Էլուարը, Ռընէ Շարը: Ան հեղինակ է բազմաթիւ յօդուածներու, թարգմանչական տեսութեան մասին: 1955-ին, տղթորական աւարտաճառ պաշտպանած է Էքս-ան-Փրովանսի համալսարանին մէջ, Մարսիլիա: 2005-ին տղթորական աւարտաճառը պաշտպանած է Երեւան: Կը դասախօսէ Երեւանի համալսարանին մէջ:

Աննա Յակոբեանի յօդուածը խիստ ուշագրաւ է, օտար լեզուներէ հայերէնի փոխադրութեան պարագային: Անցեալին ընդհանրապէս թարգմանութիւնը կ'ընդգրկէր օտար հեղինակներու հայերէնի թարգմանութիւնը: Հայաստանի մէջ դեռ կը շարունակուի այդ բնական ընթացքը: Բայց արտասահմանի մէջ, անցեալին հայերէն գիրքը կը թարգմանուէր օտարին ծանօթացնելու համար հայ գրականութիւնը: Այժմ այդ թարգմանութիւնը կը ծառայէ առաւելաբար օտարախօս դարձած սերունդներուն ծանօթացնելու սեփական ժողովուրդի գրականութիւնը: Երրորդ հանգրուանը պիտի ըլլայ հայ գրականութիւնը օտար լեզուներով թարգմանելու, տարածելու եւ զայն միջազգայնացնելու: Չինացի նոպէլեան դափնեկիրը նախապէս թարգմանած էր բազմաթիւ լեզուներու, լայնածիր ցրուումի հնարաւորութիւն եւ կազմակերպութիւն ունեցող հրատարակչատուներու կողմէ: Անծանօթ հեղինակին մրցանակ չի տրուիր: Այս թարգմանական երրորդ հանգրուանի իրականացման համար, ազգային, պետական եւ իրաւ քաղաքական որոշում եւ հետապնդում պէտք է, Աննա Յակոբեանի կողմէ ճշդուած որակային ըմբռնումներով, որպէսզի անմիջական տնավարին եւ անորակը կանոն չըլլան:

Բ.

Գեղարուեստական քարգմանությունը կատարում է իրաքանչիւր դարաշրջանի գեղագիտական պահանջներին համապատասխան: Փոխում են ժամանակները, փոխում են նաեւ քարգմանութեան սկզբունքները: Այսպիսով, ստեղծում են միեւնոյն ստեղծագործութեան մի քանի քարգմանություններ, որոնցից իրաքանչիւրը կարող է դրուել իր ժամանակի պահանջների մակարդակին համապատասխան, բայց չի կարող փոխարինել ուրիշին: Իրաքանչիւր քարգմանություն համապատասխանում է իր ժամանակին:

Գեղարուեստական գրություն (տեքստ) քարգմանելու համար անհրաժեշտ է հաշուի առնել այն ամէնը, ինչ վերաբերում է դրա ստեղծմանը՝ հեղինակի գաղափարների ձեւաւորման ժամանակաշրջանը, հասարակական պայմանները, հեղինակի կենսագրությունը, նրա ոճը, աշխարհայեացքը, զգացումները, ենթագիտակցական մղումները, եւ այլն:

Այստեղ արդէն հնարաւոր է ըմբռնել հեղինակի ոճը՝ որպէս մտալոյացում եւ որպէս ընտրություն: Ոճն արտացոլում է գրողի հոգեբանությունը, նրա եւր: Ըստ իր աշխարհայեացքի, քարգմանիչն արտացոլում է նոյն գեղարուեստական իրողությունը, ինչ արտացոլել է գրողը իր ստեղծագործութեան մէջ: Ժամանակին որոշ քննադատներ չէին ընդունում գեղարուեստական քարգմանութեան գնահատման չափանիշների հարցը: Օրինակ, Վիլիելմ Լեիկի կարծիքով կարող է գոյություն ունենալ գնահատման միայն մէկ չափանիշ, եթէ գեղարուեստական քարգմանությունն ընդունում է իբրեւ արուեստի գործ, իբրեւ արուեստ⁽¹⁾:

«Գրող-քարգմանիչի ստեղծագործութեան դժուարությունն այն է, որ օտարալեզու գրողի ստեղծագործությունը վերստեղծելու համար պէտք է ելնել միաժամանակ եւ գրքից, այսինքն՝ բնագրից, եւ կեանքից, այսինքն՝ քարգմանիչին շրջապատող կենդանի իրականությունից: Այո, գրում է քարգմանութեան տեսութեան նահապետներից մէկը՝ Էտկինդը, ընթանալ համաժամանակ, եւ երկրորդ անգամ արժարժուած խօսքային արուեստի ստեղծագործութեան արտացոլման մէջ ստեղծել գրքայինի եւ կենդանիի, օտարի եւ իւրայինի, ընթերցուածի եւ ընկալուածի միասնություն»:

Գեղարուեստական քարգմանութեան առանձնայատկություններից թերեւս ամենակարեւորն էլ հէնց այն է, որ նրա մէջ որոշակիօրէն արտացոլում է նաեւ քարգմանիչի անհատականությունը: Սակայն, «պէտք է խոստովանել, որ քարգմանիչի սեփական ինքնատիպությունը (առաւել եւս փորձառու քարգմանիչի) գործնականում իր կնիքն է թողնում քարգմանութեան վրայ, ... եւ դրանից հնարաւոր չէ խուսափել»⁽²⁾: Օրինակ՝ այնպիսի դժուարին եւ խստապահանջ բանաստեղծ, ինչպիսին էր Սեն-Ժոն Պերսը, ճշգրտում էր իր իրաքանչիւր բառի քարգմանությունը: Թոմաս Ս. Էլիոթը, երբ ֆրանսերէնից անգլերէն էր քարգ-

(1) Сту` Левик И. И
верность, и вдохновение.
Художественный перевод.
Ереван, 1982, էջ 313:

(2) Ст`у Гачечиладзе Г.,
Введение в теорию
перевода., Тбилиси.,
1970. էջ 169:

ԲԱԳԻՆ

մանում Սեն-Ժոն Գերսի **Անաբասիս** պոեմաչարը, ամիսներ շարունակ նամակագրական կապի մեջ է եղել բանաստեղծի հետ և ապշեցուցիչ համբերատարությամբ ճշդել է իրաքանչիւր բառ, իրաքանչիւր միտք, և որպէս բարեբախտութիւն՝ արդիւնքում զգալիօրէն կատարելագործել թարգմանութիւնը: Այդուհանդերձ, Էլիոթեան թարգմանութիւնը փորձարկման ենթարկելիս գրականագէտ Սլոմոյ Էլբազը պարզել է, որ ամերիկացի մի գիտակ ուսանողուհի անմիջապէս «ճանաչել» է բանաստեղծ Էլիոթի ոճը, հնչերանգը և բանաստեղծական արտայայտչաձեւը⁽³⁾: Այս դէպքում գուցէ իրաւացի է մեքսիկացի բանաստեղծ Օկտաւիոյ Պազը, երբ գրում է. «Տեսականօրէն միայն բանաստեղծները պէտք է թարգմանեն բանաստեղծութիւններ: Իրականում հագուագիւտ բանաստեղծներ կը գտնէք, որոնք լաւ թարգմանիչներ են: Որովհետեւ նրանք գրեթէ միշտ օտարալեզու բանաստեղծութիւնն օգտագործում են որպէս ելման կէտ՝ իրենց սեփականը գրելու համար»⁽⁴⁾:

Ինչ վերաբերում է ժամանակաշրջանի արտացոլմանը, ապա հարկ է նշել, որ հնարաւոր են միեւնոյն ստեղծագործութեան տարբեր ոճերի թարգմանութիւններ տարբեր ժամանակներում: Ճիշդ է, որ թարգմանութիւնները հնանում են, և վաղ թէ ուշ հարկ է լինում դրանք վերաթարգմանել: Սակայն այս մտահոգութիւնը միայն մեր ժամանակներին չի վերաբերում. պատմականօրէն կարելի է գտնել հումանիտար գիտութիւնների աւելի լայն դաշտ, աւելի «ճշգրտօրէն» այն վերաբերում է փիլիսոփայութեանը, կրօնին, հոգեվերլուծութեանը, էքնոլոգիային, լեզուաբանութեան այլ ճիւղերին»⁽⁵⁾:

Ուստի, անհրաժեշտութիւն է դարձել տալ գեղարուեստական թարգմանութեան լիարժէք սահմանումը: Թարգմանութեան ընկերային (սոցիալական) նախասահմանումը գոյութիւն ունի առարկայօրէն (օբյեկտիւօրէն), այսինքն՝ անկախ թարգմանիչների, սպառողների և պատուիրատուների կարծիքներից և ցանկութիւններից: Թարգմանութիւնը նպատակասլաց գործունէութիւն է, որը համապատասխանում է որոշակի պահանջների և չափանիշների: Գ.Գաչէչիլաձէի սահմանումը գեղարուեստական թարգմանութեան վերաբերեալ ունի համընդհանուր բնոյթ. «Գրական-գեղարուեստական թարգմանութիւնն իրենից ներկայացնում է բնագրին համարժէք համապատասխանութիւն ոչ թէ լեզուաբանական, այլ **գեղագիտական** ըմբռնումով: Այն ասես նահանջ է բնագրի լեզուից՝ նրա գեղագիտական էութեանը աւելի մօտենալու նպատակով»⁽⁶⁾:

Գեղարուեստական թարգմանութեան վերաբերեալ գրողների, բանաստեղծների և թարգմանիչների դատողութիւնները, նրանց տեսական ընդհանրացումներն, ըստ էութեան, յանգում են մէկ խնդրի՝ պարզել թարգմանական արուեստի ստեղծագործական բնոյթը: Դրան հակառակ լեզուաբանների ջանքերն առաջին հերթին ուղղուած են պար-

(3) Տե՛ս Shlomo Elbaz «Lecture d'Anabaze de S.-J. Perse», Paris, L'Age d'homme, 1991, էջ 195:

(4) Տե՛ս La Nouvelle Revue Francaise, No 224, 1971, p. 29.

(5) Տե՛ս J.-R. Ladmiral, «Traduire: theoremes pour la traduction», Gallimard, 1994, VII, էջ 24:

(6) Տե՛ս Գաչէչիլաձէ Դ. Մ., 1970, էջ 148.

զաբանելու թարգմանական գործընթացը, նրա կախումաբանությունը լեզուների միջև գոյություն ունեցող արդեն հաստատուած յարաբերություններից:

Այսօր անհրաժեշտություն է նաեւ հաստատել ոչ միայն գեղարուեստական թարգմանութեան լիարժէք սահմանումը, այլեւ **ստեղծագործութեան գեղարուեստականութիւնն ապահովող չափորոշիչների բնորոշումը**: Քանի որ այդ հասկացութիւնն անչափ տարողունակ է, ուստի մեզ հարկ է պարզել, թէ թարգմանութեան տեսութեան մէջ գոյություն ունենա՞ն չափանիշներ, որոնց համաձայն հնարաւոր է որեւէ գրական թարգմանութիւն, տուեալ դէպքում՝ բանաստեղծութեան թարգմանութիւնը, որակել լաւ, **հաւատարիմ, ընդունելի** կամ **յաջողուած** մակդիրներով: Տեսակետները խիստ տարբեր են, բայց հիմնականում կենտրոնացած երկու հակադիր բեւեռում՝ մի կողմից հաւատարմութիւն բնագրին, միւս կողմից՝ թարգմանութեան ազատութիւն՝ հարազատութիւն մտքին: Ոմանք էլ ձգտում են փոխզիջման գնալ, գտնել ոսկէ միջինը: Օրինակ, գրականագէտ ԱՅ. Եղիազարեանը նշում է յաջող թարգմանութեան անհրաժեշտ երկու պայման. «գեղարուեստական թարգմանութեան առաջին պայմանը՝ թարգմանութիւնը պէտք է ընկալուի իբրեւ տուեալ գրականութեան լիարժէք գործ, իսկ երկրորդ պայմանը՝ հարազատօրէն վերարտադրել թարգմանուող բանաստեղծի ստեղծագործական անհատականութիւնը, նրա ոճը, նրա տուեալ կոնկրետ ստեղծագործութիւնը»⁽⁷⁾:

(7) Տես՝ Եղիազարեան Ա. **Գեղարուեստական թարգմանութիւնը եւ ժողովուրդների մերձեցումը**, Երեւան, 1977, էջ 120 - 121:

(8) Տես՝ Левик И. И. **Истина, и вдохновение. Художественный перевод**. Ереван, 1982, էջ 313:

(9) Տես՝ Antoine Berman, **Pour une critique des traductions**, John Donne, «Gallimard», Paris, 1995, էջ 15:

Ժամանակին որոշ քննադատներ չէին ընդունում գեղարուեստական թարգմանութեան գնահատման չափանիշների հարցը: Օրինակ, Վիլիելմ Լեւիկի կարծիքով, կարող է գոյություն ունենալ գնահատման միայն մէկ չափանիշ, եթէ գեղարուեստական թարգմանութիւնն ընդունում է իբրեւ արուեստի գործ, իբրեւ արուեստ⁽⁸⁾:

Միջնադարից սկսած գոյություն ունեն թարգմանութեան քննադատական վերլուծութիւններ կամ «քննադատութիւն», որ կանտեան (Էմմանուէլ Բանք, Բ.) լեզուով՝ նշանակում է դատողութիւն կամ ըստ արդի թարգմանաբանութեան եզրոյթի՝ գնահատում, **արժեւորում**⁽⁹⁾:

Բայց եթէ **քննադատութիւն** ասելով հասկանում ենք թարգմանութեան մանրամասն վերլուծութիւնը՝ իր խորքային բնորոշ գծերով, նրան ծնունդ տուող ծրագիրը, մթնոլորտը, որի մէջ յառնել է գեղարուեստական թարգմանութիւնը եւ թարգմանչի դիրքորոշումը, եթէ **քննադատութիւն** ասելով հասկանում ենք **թարգմանութեան ճշմարտութեան բացայայտումը**, ուրեմն հարկ է խոստովանել, որ թարգմանաքննադատութիւն մեզանում գոյություն չունի:

Միւս կողմից դեռ սպառնում չէ **անթարգմանելիութեան** խնդիրը, յատկապէս բանաստեղծութեան (պոէզիայի) առընչութեամբ: Երկար ժամանակ կասկածի տակ էր դրում բանաստեղծութեան թարգմանելիութեան հնարաւորութեան հարցը: Բանաստեղծութիւնը համարում

ԲԱԳԻՆ

Էր իր լեզուի կամ առնուազն բնագրի սեփականությունը, եւ նրա փոխ-պատուաստումը դիտում էր որպէս սպանություն կամ առնուազն կմախք՝ զուրկ բանաստեղծական կարեւորագոյն բաղադրատարրերից՝ հնչերանգից, կշռոյթից (ռիթմիկայից), ոճաարտայայտչական միջոցներից: Օրինակ՝ Ռոման Եակոբսոնի կարծիքով «պոէզիան, իր բնոյթով, անբարգմանելի է, միայն հնարաւոր է կատարել ստեղծագործական փոխադրում»⁽¹⁰⁾:

Խնդիրը հիմնականում եզրոյթների հակասականությունն էր: Սակայն հետագայում, ինչպէս օրինակ, Էդգար Ալլեն Պոյի եւ Շառլ Բոդլերի հայեցակէտերում, բացայայտուեց այն, ինչը պէտք է լինի քարգմանութեան տեսութեան ամենաակտիւ գործօնը՝ **գերյաւելուկը**⁽¹¹⁾: Բոդլերը գրում է՝ «Երկար պոէմ գոյություն չունի: Եթէ ասում են՝ երկար պոէմ, ուրեմն կայ եզրոյթի հակասություն»⁽¹²⁾: Բոդլերը բազմաթիւ օրինակներ է բերում Էդգար Պոյի համար, որպէսզի բացատրի, թէ ինչ է պէտք հասկանալ՝ ասելով բանաստեղծական հակիրճություն: Ամերիկացի բանաստեղծին որպէս օրինակ Բոդլերը բերում է Շելլիի 24 տուն պարունակող պոէմի **Հափազանց հակիրճ** քարգմանությունը եւ զուգահեռաբար՝ Ուիլիսի 30 տողանոց **Հափաժոյի երկարաշունչ** քարգմանությունը: Նա գրում է. «Պարզ է, որ բանաստեղծությունը կարող է լինել Հափից աւելի հակիրճ: Սակայն անհարկի հակիրճությունը հնչում է որպէս աղճատուած էպիգրամ: Հափազանց հակիրճ բանաստեղծությունը, եթէ երբեմն թողնում է փայլուն կամ ուժեղ ազդեցություն, երբեք չի թողնի խոր ու երկարատեւ ազդեցություն»⁽¹³⁾: Ժան-Պոլ Մարտրը համակարծիք է Բոդլերի հետ. «Եթէ բանաստեղծությունը պատմում է, բացատրում կամ ուսուցանում, դառնում է արձակունակ (պրոզայիկ), ուրեմն նա տանուլ է տուել խաղը»⁽¹⁴⁾:

Սամուիլ Մարշակը գտնում էր, որ քարգմանիչն այնքան լաւ պիտի իմանայ մայրենի լեզուն, այնքան խորը զգայ այն, որ չընկնի օտար լեզուի ազդեցութեան տակ, չդառնայ նրա գերին: Ըստ Մարշակի, «Բառացի քարգմանութեան ձգտումը յանգեցնում է [...] բռնութեան սեփական լեզուի նկատմամբ: Հետեւաբար բանաստեղծությունն անքարգմանելի է»⁽¹⁵⁾: Պոլ Վալերին աւելի խիստ էր. «Որքան բանաստեղծությունն աւելի դիրքին է փոխանցում մէկ այլ լեզուի, այնքան այն աւելի նուազ բանաստեղծական է, քանի որ իմաստը եւ հնչիւնը անբաժանելի են բանաստեղծութեան մէջ»⁽¹⁶⁾: Անցած դարի մեծագոյն բանաստեղծներից մէկը՝ մեքսիկացի Օկտաւիոյ Պազը գրում է. «Տեսականօրէն միայն բանաստեղծները պէտք է քարգմանեն պոէզիա: Իրականում հազուադիւս բանաստեղծներ կը գտնէք, որոնք լաւ քարգմանիչ են: Որովհետեւ նրանք գրեթէ միշտ օտարալեզու բանաստեղծությունն օգտագործում են որպէս ելման կետ՝ իրենց սեփականը գրելու համար»⁽¹⁷⁾:

Բանաստեղծութեան անքարգմանելիութեան հիմնաւոր տեսու-

(10) Մեքերումս ըստ «On Linguistic Aspects of Traslation», in On Translation, ed. R. A. Brower. Traduction française in Essais de linguistique generale, 1963, էջ 86:

(11) Տե՛ս՝ Charles Baudelaire, **Notes nouvelles sur Edgar Poe**, Ed. Garniers Freres, 1962, էջ 633:

(12) Տե՛ս՝ Charles Baudelaire, նշ. աշխ., էջ 634-638:

(13) Տե՛ս՝ Charles Baudelaire, նշ. աշխ., էջ 638:

(14) Մեքերումս ըստ Daniel-Henri Pageaux-ի «Litterature generale et compatee» Paris, Ammand Colin, 1995, p. 11:

(15) Տե՛ս՝ *Собрание сочинений 4-х томах*. М., 1999, TOM 4, էջ 216, 218:

(16) Մեքերումս ըստ Yvonne Batard-ի «**Sur la traduction poetique de la Divine Comedie**» in Langue et Littérature, 1961, էջ 87:

(17) **La Nouvelle Revue Francaise**, No 224, 1971, էջ 29:

(18) Mounin G., *La Communication poetique, precede de Avez-vous lu Char?*, Paris, 1969, էջ 231.

(19) Տե՛ս՝ Mounin G., *Աշխատություններ*, էջ 226:

(20) Տե՛ս՝ Mounin, Georges, *Les problemes theoriques de la traduction*, Paris, Gallimard, 1963, ch. III, IV, V, Conclusion.

(21) Տե՛ս՝ Benjamin Walter, *Oeuvres I, Folio, essais*, Gallimard, 2010, էջ 251:

թիւնը սնունդ է համեմատաբար վերջերս յայտնուած այն յայտնի ճշմարտութիւնից (աքսիոմայից), թէ չափածոն անհաղորդակցելի է: Սակայն Ժորժ Մունենը, անդրադառնալով Ռընէ Շարի բանաստեղծութեանը, ջանում է հերքել այն փաստարկները, որոնք պոեզիայի էութիւնը որակում են լռութեամբ, բացակայութեամբ, անհաղորդակցելիութեամբ կամ անթարգմանելիութեամբ, համարելով, որ «Շարի բանաստեղծութիւնները զարմանալիօրէն պարզ են ու վճիտ»⁽¹⁸⁾: Նրանց, ովքեր չեն ընդունում, թէ բանաստեղծութիւնը կարող է հասկացուել եւ անգամ բացատրուել, աւելի լաւ կը լինի միայն յիշեցնել այն քարգմանչի դէպքը, որը չի կարող ձեւացնել, թէ հասկանում է⁽¹⁹⁾: Ժորժ Մունենը ընդունում է քարգմանական չափածոյի ըմբռնելիութիւնը, եւ ելնելով իր թեզից՝ բանաստեղծութեան քարգմանելիութիւնից, նշում է քարգմանութեան դժուարութիւնները (լեզուաբանական, ինչպէս նաեւ մշակութային, փիլիսոփայական), որոնք ծառանում են քարգմանչի առջեւ ցանկացած դէպքում, այդ թւում եւ արձակ ստեղծագործութիւն քարգմանելիս: Այդ խոչընդոտներն անհնարին են դարձնում ամբողջական, «անքակտելի, բնագրին, ոգուն, բառերին կատարելապէս հաւատարիմ քարգմանութիւնը»⁽²⁰⁾:

Եւ եթէ բնագրի հեղինակի առջեւ կանգնած է կենդանի իրականութիւնը, ապա քարգմանչի առջեւ միջնորդաւորուած գեղարուեստական իրականութիւնն է՝ քարգմանուող ստեղծագործութեան տեսքով: Պատկերաւոր է արտայայտուել Վալտեր Բենեամինն այդ առիթով. «Թարգմանութիւնը երկու մեռած լեզուների անիմաստ հաւասարութիւնը չէ, հարկ է ուշադրութիւն դարձնել օտար խօսքի յետմահու հասունացմանը եւ իր սեփական խօսքի երկունքի ցաւերին»⁽²¹⁾:

Բայց այսօր կասկած չկայ, թէ նման քարգմանութիւնը հնարաւոր է: Այն արդէն ընդունուած է, եւ այժմ կարծիքների փոխանակութիւնը ծաւալում է միայն հնարաւոր **հաւատարմութեան** եւ բնագրի այն կերպաւորումների շուրջ, որոնք պէտք է գլխաւորապէս պահպանել եւ կամ, ծայրայեղ դէպքում զոհաբերել: Դրանից բխող տարբերակումն ու դասակարգումը (գրական քարգմանութիւն, նմանակում, փոխադրում, վերարտադրում եւ այլն), ակնյայտօրէն ձեռք են բերում առանձնայատուկ նշանակութիւն, երբ խօսքը վերաբերում է չափածոյին, հաւատարմութիւնը դարձնելով լրիւ յարաբերական գործ, որի գնահատման չափանիշները փոխւում են ըստ քննադատների:

Եզրակացութիւնները, որոնց յանգում է Ժ. Մունենը իր տեսական աշխատութեան մէջ, զգալի պարզաբանումներ են մտցնում այս հարցում: Հիմնուելով ժամանակակից լեզուաբանական որոշ ըմբռնումների վրայ (անձնական փորձի եւ տարբեր լեզուների հիմնային միավորների հաղորդակցման անհնարինութեան, սակայն խօսողի եւ ունկրողի, հեղինակի եւ քարգմանչի մասնակի հաղորդակցման հնարավորութեան)՝ նա հաւաստում է. «Փոխանակ քարգմանութեան նախկին

ԲԱԳԻՆ

մասնագետների նման ասելու, որ թարգմանությունը միանշանակ հնարարություն է եւ կամ միանշանակ անհնար, միանշանակ ամբողջական կամ միանշանակ կիսատ, ժամանակակից լեզուաբանությունը կարողացել է սահմանել թարգմանությունը իբրեւ մի գործողություն, որը յարաբերական է իր յաջողության մէջ, փոփոխական իր հասած հաղորդակցական առումով»⁽²²⁾: Մունենն իր աշխատութիւնն աւարտում է լաւատեսօրէն, նշելով, որ հաղորդակցությունը թարգմանութեան միջոցով շարունակելի է, երբեք չի աւարտուելու, այսինքն՝ «դա նշանակում է, որ թարգմանությունը հաստատապէս հնարարութիւն է»⁽²³⁾: Ըստ որոշ գիտնականների գեղարուեստական թարգմանութեան ճշգրտութիւնը յանգեցնում է բանասիրական, գիտական թարգմանութեան, որի դէպքում անուշադրութեան է մատնում գեղարուեստական կողմը: Աւելի գնահատելի է համարում բառացի թարգմանությունը [...], «նման թարգմանությունը ստեղծագործութեան այլեւայլ կողմերը վերարտադրում է ճշգրտօրէն, որովհետեւ տաղաչափութեան օրէնքները չեն բռնանում թարգմանչի վրայ»⁽²⁴⁾: Թարգմանչի նպատակն է համարժեքութիւն հաստատել աղբիւր եւ քիրախ լեզուների միջեւ, այսինքն, այնպէս անել, որ երկու գրություններն (տեքստերն) էլ ունենան միեւնոյն իմաստը, (ընդամին հաշուի առնելով գոյութիւն ունեցող որոշակի հակասական երեւոյթներ՝ համա-տեքստ, քերականութիւն եւ այլն) , որպէսզի այն հասկանալի լինի աղբիւր լեզուին չտիրապետող մարդուն, որը չունի նոյն մշակոյթը կամ իմացութեան նոյն պաշարը: Թարգմանելու համար բաւարար չէ աղբիւր լեզուի իմացութիւնը, անհրաժեշտ է նաեւ յատկապէս տիրապետել քիրախ լեզուին, որը ընդհանրապէս մայրենի լեզուն է:

Գեղարուեստական թարգմանութեան վերաբերեալ գրողների, բանաստեղծների եւ թարգմանիչների դատողութիւնները, նրանց տեսական ընդհանրացումներն, ըստ էութեան, յանգում են մէկ խնդրի՝ պարզել թարգմանական արուեստի ստեղծագործական բնոյթը: Դրան հակառակ լեզուաբանների ջանքերն առաջին հերթին ուղղուած են պարզաբանելու թարգմանական գործընթացը, նրա կախումաւորութիւնը լեզուների միջեւ գոյութիւն ունեցող արդէն հաստատուած յարաբերութիւններից:

Գրականագէտները, գեղարուեստական թարգմանությունը հետազօտելիս, մնում են գրականագիտական եւ գեղագիտական, սոցիալ-հոգեբանական եւ պատմական համադրությունների եւ օրինաչափութիւնների շրջանակներում: Նրանց կարծիքով թարգմանությունը ստեղծագործական գործընթաց է, որտեղ լեզուաբանական օրինաչափութիւնները ենթակայ դեր են խաղում:

Լեզուաբանները թարգմանութեան բոլոր ձեւերն ու տեսակները դիտարկում են որպէս լեզուական երեւոյթներ, որոնք ենթարկում են լեզուաբանական օրինաչափութիւններին, այսինքն՝ ուսումնասիրում են

(22) Տես՝ Mounin G., Աշ. աշխ., էջ 278:

(23) Տես՝ Mounin G., Աշ. աշխ., էջ 279:

(24) Տես՝ Ա. Կ. Եղիազարեան, *Գեղարուեստական թարգմանութիւնը - ժողովուրդների մերձեցումը*, Երեւան, 1977, էջ 101:

թարգմանության լեզուական խնդիրները՝ կիրառելով թարգմանական գործունեության լեզուաբանական եղանակները: Լեզուաբանական տեսության համար հիմնական եւ առաջնահերթ խնդիրը երկու լեզուների միջև համարժեք յարաբերությունների նկարագրությունն է: Այն մեծ ուշադրություն է դարձնում արտալեզուական գործօններին, համատեքստին, բնագրի եւ թարգմանության միջև եղած յարաբերություններին, թարգմանության գործընթացի արդյունքներին, նրա որակի գնահատման չափանիշներին: Լեզուաբանները կարելի էր ասել, որ այն ամենը, ինչը ստեղծագործության կառուցումը խաղում է գործառնության դերը:

Վ.Կոպտիլովը բառական պատկերապատկերի մի համեմատությամբ գրում է. «Գիտության այս շենքն առաջ կը կառուցուի, եթե շինարարները չշեղուին իրենց աշխատանքից՝ գրականագետների եւ լեզուաբանների ապարդիւն վեճերով՝ նուիրուած յաջորդ յարկի կառուցումը տնօրինելուն»⁽²⁵⁾:

Լեզուաբանների կարծիքով թարգմանության միաւորները բառակապակցություններն ու նախադասություններն են, որոնցից բաղկացած է տեքստը: Ըստ գրականագետների հայեցակետի, թարգմանության միաւորները պատկերներն են, որոնցից կազմում են նախադասությունները, լեզուական որոշակի միջոցներով արտայայտուած գեղարուեստական պատկերը՝ այլ պատկերների եւ ամբողջ ստեղծագործության հետ յարաբերության մէջ⁽²⁶⁾:

Ինչ վերաբերում է լեզուաբանությանը, այն նոյնպէս ընդունում է թարգմանությունը որպէս իրականություն. «Ոչ մի լեզուաբան չի կարող գիտականօրէն մեկնաբանել որեւէ լեզուական իրողություն առանց թարգմանության»⁽²⁷⁾:

Երկու ըմբռնումներն էլ ունեն իմացաբանական հիմք. թարգմանության բնոյթի մէջ առկայ են եւ լեզուաբանական, եւ գրականագիտական միաւորները: Հետեւաբար ցանկացած միակողմանի մօտեցումը, ըստ էութեան, փակում է թարգմանության գնահատման իրական հետազօտությունների ճանապարհը:

Միայն լեզուաբանութեան եւ գրականագիտութեան փոխազդեցութեան գործընթացում է հնարաւոր որոշել թարգմանութեան առարկայական (օբյեկտիւ) գնահատականը:

Ինքնին հասկանալի է, որ թարգմանական ոչ մի հետազօտություն չի կարող գլուխ գալ առանց վերլուծութեան կամ առանց թարգմանական քննադատութեան: Դեռեւս միջնադարից սկսած գոյություն ունեն թարգմանութեան քննադատական վերլուծություններ կամ «քննադատություն, որ կանտեան լեզուով՝ նշանակում է դատողություն կամ արդի թարգմանական դպրոցի լեզուով կոչում է գնահատում, արժեւորում»⁽²⁸⁾:

(25) Տէ'ս Կոպիլով Բ. *Перевод и оригинал из которых состоит текст. Художественный перевод*. Ереван, 1982, էջ 148:

(26) Տէ'ս Կոպիլով Բ. *Перевод и оригинал из которых состоит текст. Художественный перевод*. Ереван, 1982, էջ 41:

(27) Տէ'ս Berman, A., *La Traduction et La Lettre ou L'Auberge du Lointain*, «Seuil», Paris, 1984, էջ 27:

(28) Տէ'ս Կոպիլով Բ., «Gallimard», Paris, 1995, էջ 20:



ԲԱԳԻՆ

ԱՆՆԱ ՅԱԿՈԲԵԱՆԻ կարեւոր ուսումնասիրութեան կ'ընկերացնենք թարգմանական գրականութեան երեք օրինակներ.

ա. *Զապէլ Ասատուրի - Սիպիլ - (1863-1934) թարգմանութիւնը ֆրանսացի բանաստեղծ Փոլ Վերլէնի (1844-1896) CHANSON. D'AUTOMNE բանաստեղծութեան, ԱՇՆԱՆ ԵՐԳ խորագրով: Ընթերցողը, երբ կատարէ բնագրին եւ թարգմանութեան ընթերցումը, պիտի հաստատէ որ Զապէլ Ասատուր խոր ապրումով յաջողած է վերծանել Վերլէնի զգայուն, գողտր եւ անհունօրէն երաժշտական բանաստեղծութիւնը: Բանաստեղծը բանաստեղծութիւնը վերծանած է:*

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐԲԱՆԵՆ

Թարգմանութիւն
ՉԱՊԷԼ ԱՍԱՏՈՒՐԻ - ՍԻՊԻԼ

Բնագիրը
ՓՈԼ ՎԵՐԼԷՆ

ԱՇՆԱՆ ԵՐԳ

CHANSON D'AUTOMNE

Հեծերն անհուն
Ջութակներուն
Աշնային
Կը խոցեն զիս
Տալով սրտիս
Թալուկնին
Եւ շնչահատ
Համակ գունատ
Երբ գայ ժամ

Կը յիշեմ ես
Իմ հին օրերս
Ու կու լամ

Եւ կ'երթամ չար
Ուր հովեր չար
Ջիս տանին

Հոս հոն նրման
Գոս անկենդան
Տերեւին:

Les sanglots longs
Des violons
De l'automne
Blessent mon cœur
D'une langueur
Monotone.
Tout suffocant
Et blême, quand
Sonne l'heure,
Je me souviens
Des jours anciens
Et je pleure
Et je m'en vais
Au vent mauvais
Qui m'emporte
Deçà, delà,
Pareil à la
Feuille morte.



բ. Բանաստեղծ Մուշեղ Իշխան – Ճենյերեճեան – (1914-1990) քարգմանած է անգլիացի բանաստեղծ եւ վիպասան Ռիչարդսոն Բիրլինկի (1865-1936) համաշխարհային ճանաչում գրած IF բանաստեղծութիւնը, Եթէ, որուն ֆրանսերէնն ալ նոյնքան գեղեցիկ է, քարգմանութիւնը կատարած է գրող Անյորէ Մորուա: Հաւանօրէն Մուշեղ Իշխան նկատի ունեցած է անգլերէն բնագիրը եւ ֆրանսերէն քարգմանութիւնը: Որպէս քարգմանական արուեստ, անգլերէն բնագրին հետ, ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք նաեւ ֆրանսերէն եւ հայերէն վերծանումները: Ինչպէս յաճախ կը հանդիպինք, մօտաւոր քարգմանութիւններ չեն, այլ, ինչպէս կ'ըսուի, վերծանումներ:

Թարգմանութիւն ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ

ԵԹԷ

Եթէ կրնաս պահել գլուխդ առանձին,
Երբ խուճապի մէջ է չորս դիդ ամէն մարդ,
Եթէ կրնաս վստահ ըլլալ քու անձին,
Երբ ուրիշներ կը կասկածին քու վրադ,
Եթէ կրնաս միշտ սպասել անձանձիր,
Կամ չստել՝ շրջապատուած սուտերով,
Ատողներու միջեւ մնալ սիրալիր,
Եթէ կրնաս ըլլալ բարի, բայց ուժո՛ւյ.

Եթէ կրնաս դուն երազել եւ սակայն
Զրլլալ գերին երազներուդ գերիշխող,
Յաղթանակէն ետք հանդիպիլ պարտութեան
Եւ նոյն ձեռով ընդունիլ զոյգն այս խաբող.
Եթէ կրնաս լսել քու խօսքդ վճիտ
Զարափոխուած յիմարներու ծուղակի
Ու խորտակուած տեսնել մեծ երկը կեանքիդ,
Բայց վերստին զայն շինելու գաս ծունկի.

Եթէ կրնաս շահը հազար ձիգերու
Մէկ հարուածով յանձնել բախտի սեղանին
Եւ անտրտունջ, առանց երբեք ողբալու
Վերսկսիլ ծայրէն ամէն ինչ կրկին,

Եթէ կրնաս սիրտ ու ջիղեր ու մկան
Մաշումէն ետք նորէն լարել անդադար
Եւ դիմանալ, երբ կորած է ամէն բան,
Բացի կամքէն, որ կը մնայ մէջդ վառ.
Եթէ կրնաս արքաներու հետ պարզուկ,
Ամբոխին մէջ՝ առաքինի ըլլալ միշտ,
Եթէ մարդիկ անգօր են քեզ առթել վիշտ
Եւ ամէնուն կու տաս արժէքն իր արդար,
Եթէ սիրես, բայց սիրոյ խենթ չդառնաս.
Քու՛կդ է երկիրն ու իր գանձերն անհամար
Եւ առելին՝ այն առեն Մա՛րդ ես, տղաս:



ԲԱԳԻՆ

IF

If you can keep your head when all about you
Are losing theirs and blaming it on you,
If you can trust yourself when all men doubt you,
But make allowance for their doubting too;
If you can wait and not be tired by waiting,
Or, being lied about, don't deal in lies,
Or being hated don't give way to hating,
And yet don't look too good, nor talk too wise:

If you can dream - and not make dreams your master;
If you can think - and not make thoughts your aim;
If you can meet with Triumph and Disaster
And treat those two impostors just the same;
If you can bear to hear the truth you've spoken
Twisted by knaves to make a trap for fools,
Or watch the things you gave your life to, broken,
And stoop and build'em up with worn-out tools:

If you can make one heap of all your winnings
And risk it on one turn of pitch-and-toss,
And lose, and start again at your beginnings,
And never breathe a word about your loss;
If you can force your heart and nerve and sinew
To serve your turn long after they are gone,
And so hold on 'when there is nothing in you
Except the Will which says to them: "Hold on!"

If you can talk with crowds and keep your virtue,
Or walk with Kings - nor lose the common touch,
If neither foes nor loving friends can hurt you,
If all men count with you, but none too much;
If you can fill the unforgiving minute
With sixty seconds' worth of distance run,
Yours is the Earth and everything that's in it,
And which is more you'll be a Man, my son!

Rudyard Kipling

ՊԵՐԳՈՐԱՆՈՐՆ
ԱՅՍԻԲՈՍ



Ֆրանսերէն Թարգմանութիւնը՝ ԱՆՏՐԷ ՄՈՐՈՒԷ

IF (SI)

Si tu peux voir détruit l'ouvrage de ta vie
Et sans dire un seul mot te mettre à rebâtir,
Ou perdre en un seul coup le gain de cent parties
Sans un geste et sans un soupir;

Si tu peux être amant sans être fou d'amour,
Si tu peux être fort sans cesser d'être tendre,
Et, te sentant hai, sans haïr à ton tour,
Pourtant lutter et te défendre;

Si tu peux supporter d'entendre tes paroles
Travesties par des gueux pour exciter des sots,
Et d'entendre mentir sur toi leurs bouches folles
Sans mentir toi-même d'un mot;

Si tu peux rester digne en étant populaire,
Si tu peux rester peuple en conseillant les rois,
Et si tu peux aimer tous tes amis en frère,
Sans qu'aucun d'eux soit tout pour toi;

Si tu sais méditer, observer et connaître,
Sans jamais devenir sceptique ou destructeur,
Rêver, mais sans laisser ton rêve être ton maître,
Penser sans n'être qu'un penseur;

Si tu peux être dur sans jamais être en rage,
Si tu peux être brave et jamais imprudent,
Si tu sais être bon, si tu sais être sage,
Sans être moral ni pédant;

Si tu peux rencontrer Triomphe après Défaite
Et recevoir ces deux menteurs d'un même front,
Si tu peux conserver ton courage et ta tête
Quand tous les autres les perdront,

Alors les Rois, les Dieux, la Chance et la Victoire
Seront à tous jamais tes esclaves soumis,
Et, ce qui vaut mieux que les Rois et la Gloire
Tu seras un homme, mon fils.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԵՆԻԱՆ
ՍՐԲԵՏՈՒԹՅԱՆ

2013. ՅԱՍՄԻՆ, ԹԻՒՆ 1



ԲԱԳԻՆ

Գ.- Դանիել Վարուժան մեծ բանաստեղծ է (1884-1915), զոհ 1915 թուականի ցեղասպանության եւ հայ միտքի դեմ գործուած սեպագնութեամբ բնորոշուող ոճին: Երեսուն տարեկան բանաստեղծը եթէ ֆրանսացի բանաստեղծ Վիքթոր Հյուկոյի կեանքը ունենար, ութսուն տարեկան, կրնար երեսակայել այն ժառանգութիւնը զոր կրնար կրակել: Դանիել Վարուժանի «Կարմիր Հողը» բանաստեղծութիւնը քարգմանած է ֆրանսացի բանաստեղծ Լիւք-Անրիէ Մարսէլ, որուն գործակցած է գրող Կարապետ Փոլատեան (1914-1986):

ԿԱՐՄԻՐ ՀՈՂԸ

Գրասեղանիս վրայ, սա
Սկաւառակին մէջ կայ բուռ մը հող, բերուած հոն
Հայրենիքի դաշտերէն:

Նուէր է ան . - Զայն ինձ ձօնողը կարծեց
Սիրտն իր տրուած, առանց երբեք գիտնալու
Թէ կու տար իր պապերունն ալ միասին:

Զայն կը դիտեմ . - մերթ ժամեր
Բիբերս անոր վրայ յառած կը մնամ
Լո՛ւն եւ թախծո՛ւտ, իբր այդ հողին մէջ յուռթի
Նայուածքս արմատ արձակէր : -
Կը մտածեմ . - Գուցէ իր գոյնը բոսոր
Զէ պարգետուած բնութեան ներհուն օրէնքէն.
Վէրքերու սպունգ մըլլալով
Խմած է մաս մը կեանքի, մաս մ'արեւու.
Եւ իբր տարր անպաշտպան
Կարմիր հող մէ եղած, հայ հող մըլլալուն:

Գուցէ իր մէջ կը բաքախեն տակաւին
Դարերը հին-հին փառքին,
Կայծն ամրակուռ սմբակներու որոնց գոռ
Արշաւանքն օր մը ծածկեց
Հայկեան վաշտերն յաղթութեան տաք փոշիով:

Կըսեմ . - Իր մէջ դեռ կ'ապրի
Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,
Կեանքս իմ, քու կեանքդ, ու տուաւ,
Կարծես ձեռքով գիտակից,
Նոյն թուխ աչուին նոյն եւ նման հոգիով
Կիրք մ'Եփրատէն առնուած,
Սիրտ մը կամշոտ, թաքստոց
Ընթոստանքի ու նաեւ բո՛ւրն սիրոյ:



Իր մէջ, իր մէջ կը կայծկլտայ հոգի մ'հին՝
Հին դիւցազնի եղած փառք մը գուցէ՝
Կոյսի մաղուոր արցունքով.
Հիւլէ մը կայ Հայկէն, փոշի մ'Արամէն,
Անանիայէն բիր մը դէտ՝
Դեռ աստղերու ճաճանչներով թաթաղուն.

Ա՛գգ մը կայ հոն, սեղանիս վրայ ագգ մը հին,
Որ այսօր իր վերաշողշող այգուն մէջ,
Հողի բնատուր մարմնոյն տակ ինձ կը խօսի,
Կոզեզիմէ - եւ աստղերու ինչպէս ցանն
Անհունութեան մէջ կապոյտ -
Փոշիներովն իր հրաբորբ
Հոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոզէ:

Ու այն ատեն լարը ջղերուս կը դողայ
Սարսուռով մ'յորդ, ա՛յն սարսուռով՝ որ մտքին
Հերկերուն վրայ աւելի՛
Ըստեղծիչ է քան գարնան հովն արփագաղջ:
Ու կը զգամ անցքն ուղեղէս
Նոր յուշերո՛ւ, հոգիներո՛ւ դեռ կարմիր
Խոր վէրքերովն իրենց, վրէժի՛ շրթունքներ.

Եւ այդ հողն, այդ փոշին, զոր ես կը պահեմ
Այնքա՛ն սիրով՝ որքան հոգիս պիտ' չընէր
Եթէ մարմնոյս աճիւններն
Օր մը մահէն վերջ հովերուն մէջ գտնար.
Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ
Մնացած մեր յաղթ պապերէն,
Բժժանքն ու ձօնն այդ կարմիր,
Սիրտս սեղմած մագիլներով անձանօթ,
Երկինքն ի վեր, գրրքի մը վրայ, թանկագին
Ժամու մը մէջ ժպիտներու, սէրերու,
Կամ քերթուածի մը ծնած վեհ վայրկեանին
Զիս հապըշտապ կը մղէ
Մերթ լալու, մերթ մոնչելու,
Եւ զինելու բռունցքս, հոգիս բռունցքիս մէջ:



ԲԱԳԻՆ

Թարգմանությունը բանաստեղծ Լիլյ-Անտրե Մարսելի

LA TERRE ROUGE

Sur ma table de travail, dans ce vase,
repose une poignée de terre prise
aux champs de mon pays...

C'est un cadeau, - celui qui me l'offrit
crut y serrer son cœur, mais ne pensa jamais
qu'il me donnait aussi le cœur de ses ancêtres.

Je la contemple... Et que de longues heures passées
dans le silence et la tristesse
à laisser mes yeux se river sur elle, la fertile,
au point que mes regards y voudraient pousser des racines.

Et va le songe... Et je me dis
qu'il ne se peut que cette couleur rouge
soit enfantée des seules lois de la Nature,
mais comme un linge éponge des blessures,
de vie et de soleil qu'elle but les deux parts,
et qu'elle devint rouge, étant terre arménienne,
comme un élément pur que rien n'a préservé.
Peut-être en elle gronde encore le sourd frémissement
des vieilles gloires séculaires
et le feu des rudes sabots
dont le fracas couvrit un jour
des poudres chaudes des victoires
les dures armées d'Arménie.

Je dis: en elle brûle encore
la vive force originelle
qui souffle à souffle sut former
ma vie, la tienne, et sut donner
d'une main toute connaissante,
aux mêmes yeux noirs, avec la même âme,
une passion prise à l'Euphrate,
un cœur volontaire, bastion
de révolte et d'ardent amour.
En elle, en elle, une âme antique s'illumine,
une parcelle ailée de quelque vieux héros

ՎԵՐՆԻՔԱՆԻՔ
ՍՈՑԻԱԼԻՅԵ

2013 թվ. ՏԱՂԻ ԹԻՎ 1



si ducement mêlée aux pleurs naïves d'une vierge,
un atome de Haïg, une poussière d'Aram,
un regard profond d'Anania
tout scintillant encor d'un poudrolement d'étoiles.

Sur ma table revit encore une patrie,
- et de si loin venue cette patrie... -
qui, dans sa frémissante résurrection,
sous les espèces naturelles de la terre
ne ressaisit l'âme aujourd'hui,
et comme à l'infini cette semence sidérale
au vaste de l'azur, toute gonflée de feu,
d'éciairs de douceurs me féconde.

Les cordes tremblent de mes nerfs...
Leur intense frisson fertilise bien plus
que le vent chaud de Mai le vif des terres.
Dans ma tête se fraient la route
d'autres souvenirs, des corps tout rougis
d'atroces blessures
comme de grandes lèvres de vengeance.

Ce peu de terre, cette poussière
gardée au cœur d'un amour si tendu
que mon âme un jour n'en pourrait,
si dans le vent elle trouvait
le reste de mon corps devenu cendre,
cette poudre en exil d'Arménie, cette relique,
legs des aïeux qui savaient des victoires,
cette offrande rouge et ce talisman
serrée sur mon cœur de griffes secrètes,
vers le ciel, sur un livre,
quand vient cette heure précieuse
de l'amour et du sourire
à ce moment divin où se forme un poème,
cette terre me pousse aux larmes ou aux rugissements
sans que mon sang ne puisse s'en défendre,
et me pousse à armer mon poing
et de ce poing me tenir toute l'âme.



ՄՕ ԵԱՆ

(ԿԸ ԹԱԳԱՆԱԿԱՆՈՒԻՒՄ «ՄՆ ՈՐ ԶԻ ԽՕՍԻՐ»)

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ 2012-Ի ԴԱՓՆԵԿԻՐ

«Գրող մը պարտական է քննադատութիւններ եւ ընդվզում արտայայտել ընկերութեան մութ երեսներուն եւ մարդկային բնութեան տգեղութեան դիմաց»:

ՄՕ ԵԱՆ



Իսկական անունով Կուան Մոյէ: Ծնած է 17 Փետրուար 1955-ին Չինաստանի Շանտոնկ նահանգի Կաոմի քաղաքը, գիւղացի ընտանիքի մէջ: 1959-1961 տարիներուն անօթութիւնը ճանչցած են: 1966-ին, Մշակութային Յեղափոխութեան տարիներուն «անբաղձալի» համարուած է եւ զինք արտաքսած են դպրոցէն: Ընտանիքին հետ մեծ թշուառութեան մէջ ապրած է այդ տարիներուն:

Ժողովրդական ազատագրութեան բանակի մաս կազմելէ առաջ, եղած է գործարանի բանուոր, ապա անդամակցած է համայնավար կուսակցութեան: Երեսուն մէկ տարեկանին վկայուած է բանակի Արուեստից եւ գրականութեան ակադեմիայէն, եւ հինգ տարի ետք Փեքինի համալսարանէն:

Իր գրական կազմաւորումը դասական չէ եղած, իր մեծ-մօր պատմութիւնները եւ բանակին մէջ իր ստացած կրթութիւնը այլապէս դրոշմած են զինք:

Ընտանիքէն ստացած դաստիարակութեամբ, վարժուած է դուրսը չարտայայտուիլ, ուրկէ իր գրական անունը, ՄՕ ԵԱՆ, (ան որ չի խօսիր): Անմիջապէս կը նկատուի իր գրական տաղանդը:




Շուէտի Ակադեմիան գնահատած է չինացի գրողի «բանդա-գուշանքային իրապաշտութիւնը»:

Գրական անունով Մօ Եան (բուն անունով Կուան Մոյէ) ծնած է 1955-ին Կաոմի քաղաքին մէջ, Շանտոնկ նահանգ, արեւելեան Չինաստան:

Շուէտի ակադեմիան կ'ըսէ, որ ան «գոյգորդելով երեւակայութիւն եւ իրապաշտութիւն, պատմական եւ ընկերային տեսանկիւն, ստեղծած է աշ-

խարհ մը, որ իր բարդութեամբ կը յիշեցրնէ Ուիլեամ Ֆոլքնըրի եւ Կապրիէլ Կարսիա Մարքեզի պէս գրողներու աշխարհները, միաժամանակ խարսխած մնալով չինական հին գրականութեան եւ ժողովրդական պատումի ասանդութեան մէջ»:

Հակառակ ընկերութեան նկատմամբ իր քննադատական վերաբերումին, Մօ Եան կը համարուի իր սերունդի մեծագոյն դէմքերէն մին: Իր թարգմանուած երկերուն ճամբով ծանօթ է աշխարհի եւ մեծապէս գնահատուած: Հակառակ անոր որ իր երկերը ծաւալուն են, յաճախ անցնելով հինգ հարիւր էջի սահմանը, անոնք, շատ լաւ կը սպառին:



Մանկութեան եղած է «քչախօս», ինքնամփոփ, այդպէս դաստիարակած են զինք իր ծնողքը, կ'ըսէ իր գիրքերը ֆրանսերէնի թարգմանող Սիլվի Ժանթիլ: Իր ընտանիքը համարուած է անբաղձալի՝ «մշակութային յեղափոխութեան» օրերուն եւ ապրած խոր թշուառութեան պայմաններում մէջ: Հետագային որպէս գրչանուն ընտրած է «Մօ Եան»ը, որ կը նշանակէ «չըսել»: Բանակ կոչ-

ւած գորակոչիկը զարգանալու եւ ծաղկելու առիթ պիտի ունենայ: Մօ Եան անգրագէտ գիւղացի ծնողներէ սերած է եւ բանակի ծառայութիւնը զինք փրկած է: Մօ Եան երկար ժամանակ պիտի պահէ իր գիւղացի-գինուոր-գրողի տարազը, նոյնիսկ երբ խնդիրներ ունեցած է գրաքննութեան հետ, մասնաւորաբար իր առաջին եւ ժողովրդական վէպերէն՝ «Գեղեցիկ կուրծքեր, գեղեցիկ յետոյքներ»ի առաջին հրատարակութիւններուն ժամանակ:

Մօ Եան կը շարունակէ մնալ յամառ ընթերցող մը, կը գնահատէ արեւմտեան գրողները, նաեւ ռուսական, ճափոնական, հարաւ-ամերիկեան գրականու-

ԲԱԳԻՆ

թիւնը: Իր թարգմանիչներու վկայութեամբ, իւրաքանչիւր գիրքի հետ Մօ Եան նոր ոճ կը փորձէ: Իր ընտրած նիւթերը բազմերես են, կը գտնենք չին-ճարտնական պատերազմը, չինական չարչարանքները, խոզերու զենումը եւ կամ համայնավար վարիչներու փտածութիւնը:

Թէեւ, դառնալով Չինաստանի գրողներու միութեան փոխ-նախագահ, որ պաշտօնական հանգամանգ մըն է, ան երբեմն կ'ամբաստանուի ալլախոհներու նկատմամբ զօրակցութիւն չցուցաբերելու համար, երբ Չինաստան միակ երկիրն է որ դեռ բանտարկուած կը պահէ Նոպէլեան խաղաղութեան դափնեկիր մը:

Ըստ ամերիկացի գրական քննադատի մը, Մօ Եան մեծ գրող մըն է, որ «կը գրէ Չինաստանի վէպը»: Ընթերցողը կը նկատէ որ նուրբ եւ բանաստեղծական երգիծանքի ետին կ'ապրի ժողովուրդ մը, իր անցանկալի առօրեայով եւ ճապոնկ պատշաճեցումներով: «Հորթը» վէպ մըն է, որ թուրքի վրայ կը բեմադրէ կեանքեր եւ բարքեր, խորքի պատկերներով յուզող բանաստեղծականութեամբ, մանկութիւն, ծննդավայր եւ դժուարութիւնները յաղթահարելու համար ճարպիկութիւններ: (Տեսնել՝ թարգմանուած հատուածը):

Հեղինակ է շուրջ ութսուն երկերու, որոնք թարգմանուած են բազմաթիւ լեզուներով, 1984-էն մինչեւ այսօր: Իր գրականութիւնը պսակուած է բազմաթիւ մրցանակներով:

ՀՈՐԹԸ

(Հատուած՝ համանուն վէպէն)

Լսելով «Ժանտախտ» բառը, ամբողջ աշխարհագրական ցրուեցաւ:

Պարոն Սուէն կանչեց. «Ընկեր Տոնկ»*:

Ընկեր Տոնկ վազելով յառաջացաւ, կռակելու կռացած, ապա կանգնեցաւ պ. Սուէնի առջեւ, կրկին խոնարհեցաւ եւ ըսաւ. «Ձեր հրահանգը, պ. Սուէն»:

Պ. Սուէն ձեռքի շարժում մը ըրաւ եւ ըսաւ, շատ դժգոհ երեւոյթով մը. «Եթէ այս հորթը մեռած է վարակիչ սաստիկ հիւանդութեան մը հետեւանքով, ինչո՞ւ մինչեւ հիմա հոս մնացած է: Հոս շատ երթեւեկ կայ, չէ՞ք վախճար որ վարակում կրնայ պատահիլ: Ընկերներ, դուք շատ անփոյթ էք: Եթէ այս հիւանդութիւնը տարածուի, կ'երեւակայէ՞ք վնասները մեր ժողովրդական համայնքին համար: Նիւթական վնասները դեռ կրնան փոխարինուիլ, բայց ոչ քաղաքական հետեւանքները, կը հասկնա՞ք»:

Ընկեր Տոնկ իր ձեռքերը չփեց տաբատին վրայ եւ ըսաւ.

«Դէպքերը մեզմէ արագ ընթացան, աշխարհագրական կը քննեմ...

- Վերջ տուէ՛ք քննութեան մասին խօսելու: Կարեւորը արագ դործել է: Այս հորթը աշխարհագրական սպանդանոց պէտք է տանիլ: Ձայն պիտի կտրատէք, նմոյշ մը կը վերցնէք քննութեան դրկելու համար, ապա զայն հակառակելու տաք բարձր ջերմութեամբ սպանդանոցին մէջ պարարտացուցիչի վերածելէ առաջ»:

Ձղաճիղ, չեչոտ հօրեղբայր** միջամտեց. «Պարոն Սուէն, այս հորթը չմեռաւ վարա-

կի հիւանդութեամբ, այլ անո՛ր համար որ գայն ամորձահատեցին»:

Ընկեր Տոնկի դէմքը բացայայտօրէն դունաթափուեցաւ:

Չեչոտ հօրեղբայր գիտ եւ վարպետ Տիւն ցոյց տուաւ: «Եթէ ինծի չէք հաւատար, իրենց հարցուցէ՛ք»:

Պ. Սուլն նայեցաւ ընկեր Տոնկի կողմը եւ հարցուց. «Ի՞նչ է իրականութիւնը»:

Ընկեր Տոնկ կակազելով պատասխանեց. «Ճիշդ է, այդ հորթը նոր ամորձահատ-
լած էր, բայց ուժեղ վարակ մը ունեցաւ...»

Պ. Սուլն ձեռքի ջղադրդիւ շարժում մը բրաւ եւ ըսաւ. «Վերցուցէ՛ք, այս հորթը, կտրատեցէ՛ք, նմոյշ մը տարէք քնութեան եւ գայն վերածեցէ՛ք պարարտացուցիչի, եւ մաքրեցէ՛ք հրապարակը»:

Չեչոտ հօրեղբայր պնդեց. «Պարոն Սուլն, բարեհաճեցէ՛ք, թոյլ տուէ՛ք գայն դիւղ տանիլ...»

Պ. Սուլն կաս կարմիր կտրած գայրացաւ. «Տանիլ ի՞նչ ընելու: Ձեր դումարտակի ամբողջ արջա՛նը կ'ուզէք վարակել: Կ'ուզէք որ ան ամբողջութեա՛մը սատկի: Ինչ-
պէ՞ս է ձեր անունը: Ո՞ր դասակարգին կը պատկանիք»:

Չեչոտ հօրեղբայր դունաթափ եղաւ: Շրթները դողացին, բայց բառ չարտաբերեց:

.....

Մեր հորթի մահունէն երեք օր ետք, 1 Մայիս 1970-ին, արտակարգ խնդիր մը ծա-
ղեցաւ համայնքի կեդրոնատեղին, սննդական թունաւորում երեք հարիւր անձի,
որոնք ամէնք ալ կը յայտնաբերէին նոյն ախտանշանները — ջերմ, փսխում, փորհա-
րութիւն: Հիւանդներու մեծ մասը համայնքի պատասխանատուներ էին, պաշտօնեա-
ներ եւ անոնց ազդական-բարեկամները՝ որոնք կը սնանէին ազդային շտեմարաննե-
րու հացահատիկով: Այս խնդիրը նախ ցնցեց շրջանի յեղափոխական կոմիտէն, ապա
դաւառի, ըսին նաեւ որ ան հասաւ մինչեւ մայրաքաղաք: Շրջանի հիւանդանոցի
բժիշկները հիւանդատար կառքերով եկան, դաւառի հիւանդանոցի բժիշկները
եկան դնացքով, մայրաքաղաքէն եկող բժիշկ չեղաւ, բայց մայրաքաղաքը դրկեց ուղ-
ղաթիւ մը շտապ օղնութեան դեղերով: Համայնքի պատիկ հիւանդանոցը այդքան
մեծ թիւով հիւանդ չէր կրնար ընդունիլ: Ուստի արձակուրդ տուին նախակրթարա-
նին, եւ դրասեղանները հիւանդի մահճակալի վերածեցին եւ դասարանները՝ հիւան-
դանոցի սենեակներու: Թիւ 6037 զօրադունդը մօտակայ շրջաններուն մէջ գինավար-
ժութիւններ կ'ընէր, եւ զօրադունդի հիւանդանոցը լիովին տրամադրուեցաւ: Ըստ
հիւանդներուն, ժողովրդական Բանակի բժիշկներու մակարդակը շատ բարձր էր, եւ
երիտասարդ գինուորները, որոնք սրսկումներ կ'ընէին, ճշգրտութեամբ կը մտցը-
նէին ասեղը, եւ կը յաջողէին առաջին փորձով իսկ: Մինչդեռ մեր հիւանդանոցի տոք-
թէօրները երակի մէջ ասեղ կը խրէին, արիւն դուրս չէր դար, ուրիշ փորձ մըն ալ
կ'ընէին եւ կրկին չէին յաջողեր: Այնքան անդամներ կը վերսկսէին, որ հիւանդին թե-
ւը արիւնով կը ծածկուէր: Վերջապէս կը յաջողէին ինչպէս կոյր կատու մը սատկած
մուկ մը կը բռնէ:

Այդ պահուն չէին մտածած սննդական թունաւորման մասին, քանի որ այն օրէն ի
վեր ուր Փան Կիւ*** գատած էր երկինքը եւ երկիրը, այն օրէն ի վեր ուր երեք օդոստա-

ԲԱԳԻՆ

փառները եւ հինգ կայսրերը, եւ մինչեւ այսօր, մենք երբեք չէինք լսած որ կարելի էր ուտելիքով թունաւորուիլ: Համայնքի յեղափոխական կոմիտէն, չրջանի յեղափոխական կոմիտէին ուղղուած իր տեղեկադրին մէջ դրած էր, որ դասակարգային թշնամիներ ջրհորներուն մէջ թոյն դրած էին, կամ ալիւրին: Շրջանի յեղափոխական կոմիտէն նոյնը դրած էր դաւառի յեղափոխական կոմիտէին: Եւ ուրեմն, այս խնդրի սկիզբը, ամէն ոք ատամները սեղմած էր եւ կը մնար խորհրդաւոր: Ղեկավարները իրենց ամբողջ ուժը դրած էին. 1) հանելուկը լուծելու, 2) մարդիկը փրկելու: Ըստ վերլուծման մը, թունաւորողները 1) Թայուանի կողմէ դրկուած Գոլոմինթանիկի դործակալներն էին, 2) թաքնուած դասակարգային թշնամիներ: Անմիջապէս յայտնուեցան մարդիկ որ տեղեկացուցին այս առիթով ստեղծուած ժամանակաւոր հրամանատարութեան դիշերուան ընթացքին տեսած ըլլալ երեք լուսաւոր կարմիր ազդանշաններ, ուրիշներ դտան թշնամիին կողմէ լքուած ձայնասփիւռ դործիք մը: Ժամանակաւոր հրամանատարութեան դործակալները բոլորն ալ կու դային կից չրջաններէն եւ դրացի համայնքներէն, մեր համայնքի բոլոր ղեկավարները թունաւորուած ըլլալով, եւ յաճախ ծանրօրէն: Որպէս անմիջական հետեւանք, բարձրախօսը անդադար կը սփռէր հրահանգներ, պահանջելով միջին-թշուառ դիւղացիներէն ահագանդային վիճակը բարձրակէտին պահել եւ ընդդիմանալ դասակարգային թշնամիներու շարժումներուն: Այն ատեն բոլոր դիւղերը «չորս դաս»****երու անդամները արդելափակեցին զանոնք հսկողութեան տակ պահելու համար: Նոյնիսկ արտաքնոց երթալու համար անոնց կ'ընկերանար գինուորական մը: Միաժամանակ դիւղերը սկսան շարքով ստուգումներ կատարել, որպէսզի «չորս դասերը» խոստովանին իրենց ոճիրները, զանոնք արիւնաքամ ըլլալու աստիճան ծեծի ենթարկելով, մինչեւ որ երկինքէն շնորհ խնդրեն: Բանակը աշխուժութեամբ մասնակցեցաւ, փակելով համայնքի կեդրոնի մուտքը, անոր իւրաքանչիւր կողմը դնելով գինեալ պահակ մը եւ կազմակերպելով մեքենաներով օժտուած դիշերային հսկողութեան շրջուն ջոկատներ: Անդամ մըն ալ շրջեցան մեր դիւղին մէջ, որ մեր առջեւ բացաւ աներեւակայելի հորիզոններ: Ոչ ոք տեսած էր այնքան արագ շարժող բան մը: Նախ նկատեցինք արեւմուտքէն եկող լոյս մը, այդ յատակութեամբ նշմարելէ առաջ մեքենաներու շարժակներու դղրդոցը հասաւ մեր ականջներուն, եւ երբ կը պատրաստուէինք լաւ դիտելու, անոնք արդէն անհետացած էին: Անոնք իրապէս կը սուրային կայծակի պէս:

Այս հնարքներէն քանի մը օր ետք ոչ լրտես ոչ ալ թաքնուած դասակարգային թշնամի բռնուած էին: Հիւանդներու մեծ մասը հիւանդանոցէն ելած էր: Շրջանի առողջապահական սպասարկութիւնները վերջապէս յաջողեցան ճշդել, դաւառի նոյն ծառայութիւններուն հետ, այն՝ որ սնունդը թունաւորած էր շուրջ երեք հարիւր հոգի. ան մեր Զոյգ Քամակն էր (սատկած հորթը Բ.): Բացատրեցին որ անոր միսին եւ ընդերքին կար մանրէ մը, սալմոնէլը, որ կը դիմանար 3000 աստիճանէ բարձր ջերմութեան եւ զոր կարելի էր երեք տարի եռացնել առանց կարենալ ոչնչացնելու:

Երբ առանձնացուեցաւ սալմոնէլը, դասակարգային պայքարը վերածուեցաւ յանցաւորներու փնտրտուքի: Սալմոնէլով թունաւորման հարցով համայնքի հետախուզական կոմիտէն դիւղ դրկեց երկու քննիչներ, որոնք հարցաքննութեան կանչեցին

մեզ՝ Վարպետ Տիւն, չեչոտ հօրեղբայրը եւ գիտ: Մին հարցումներ կ'ուղղէր, միւսը կ'արձանագրէր: Ոչ մէկ պայմանով պիտի խօսէի: Երբ ճնշումը զօրաւոր էր, լալ կը ձեւացնէի: Վարպետ Տիւն ապուշի ձեւ առաւ: Ուրեմն ամէն բան պատմուեցաւ չեչոտ հօրեղբոր կողմէ: Ան նախ պատմեց թէ ինչպէս ընկեր Տոնկ վիրահատելով Զոյգ Քամակը մասնաւոր կտրած էր երակ մը, յետոյ թէ ինչպէս ան ուշացած էր անոր սրսկում մը ընել, որ նախօրօք համաճայնած էր տնօրէն Սունի հետ ձգելու համար որ Զոյգ Քամակը մեռնի եւ ձեռք գնել անոր միսին վրայ 1 Մայիսի տօնին համար: Բայց Տէրը կը հսկէր:

Մենք չենք գիտեր երկու քննիչներու տեղեկագրին բովանդակութիւնը, բայց գիտենք թէ ինչպէս հարցը իր լուծումը գտաւ:

Վերջաւորութեան, ամբողջ պատասխանատուութիւնը վերագրուեցաւ վարպետ Տիւնի չորրորդ փեսային, Սոնկ Վուլումի — որ կ'աշխատէր ժողովրդական համայնքի սպանգանոցը: Ան չէր հնազանգած պ. Սունի կողմէ տրուած հրահանգին եւ թունաւորուած միսը վաճառած էր համայնքի ամէն աստիճանի ղեկավարներուն եւ վարչական մարմիններու անգամներուն եւ յառաջացուցած այս տխուր հարցը: Եւ նոյնիսկ երբ ինք ալ թունաւորուած էր, այլապէս բաւական ծանրօրէն, իր պաշտօնը կորսնցուց եւ Կուսակցութենէն կախակայուեցաւ մէկ տարիով:

Մօ Ջէտոնկի միտքի անպարտելի լոյսով, եւ ժողովրդական ազատագրութեան Բանակի անշահախնդիր օժանդակութեամբ, գաւառի, շրջանի եւ համայնքի յեղափոխական կոմիտէներու ղեկավարութեամբ, շնորհիւ ինգրոյ առարկայ առողջապահական անձնակազմին, երեք հարիւր ութը թունաւորուածներէն մէկ հոգիի մահուան գժրախտութիւն եղաւ (սրտի տագնապի հետեւանքով): Այս եղաւ մեծ յաղթանակը «Մշակութային եւ Ընչագութիւններու (պրոլետերական) Մեծ Յեղափոխութեան»: Եթէ այս ինգիրը պատահած ըլլար նախկին զգուշի ընկերութեան ժամանակաշրջանին, երեք հարիւր ութը անձերէն ոչ մէկ վերապրող կ'ըլլար: Նոյնիսկ եթէ մէկ հոգի կորսնցուցինք, այդ կարելոր չէր, քանի որ ան մեռած էր սրտի հիւանդութեան պատճառով:

Ան որ սրտի տագնապի հետեւանքով մեռած էր անծանօթ մէկը չէր, այլ հայր Տիւնի երէց աղջկան ամուսինը, Զհանկ Վուլումի, որ որպէս խոհարար կ'աշխատէր ժողովրդական համայնքի խոհանոցը:

Բայց մեր գիւղին մէջ ամէնքն ալ ըսին, որ ան մեռած էր եզան միսի անմարսողութեան հետեւանքով:

Հայացուց՝ 3. Պ.

(Հատուած, վերջին էջերը)

* Ընկեր Տոնկ համայնքի անասնաբոյժն է:

** Արջառի հսկողութեան պարասխանապտուն է:

*** Զինական դիցաբանութեան դէմքը, որ առաջինը դուրս եկած է սկզբնական քառուէն (Մօ Եան):

**** 1956-ի շարժման չորս դասերը. Կայուածարէրները, հարուստ գիւղացիները, հակա-յեղափոխականները, որոնց վրայ հեղափոխական անվտանգութեան «զէշ փարքերը» (Մօ Եան):



ԳՐԱԴԱՐԱՆ


ԲԱԲԳԻՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ
«ԽԱԶՔԱՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ՍՐՏԻ ԵՒ ՄՏՔԻ ԱՆՄԱՐ ՂՕՂԱՆՋՆԵՐ

2012 թվականին «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց «Խաչքար» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուն, որի հեղինակը Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի Հանրապետության Պատուոյ Հիւպատոս Բաբգին Սիմոնեանն է:

Ընթերցողը մի պահ կարկամում է, տարակուսում. գիւանագէտ եւ բանաստեղծ՝ իրար անյարիր մասնագիտություններ, որոնք մէկտեղուել, միախառնուել են մի անձի մէջ, բայց անգամ ակնթարթային ծանոթութիւնը գրքում գետեղուած բանաստեղծություններին ընթերցողի մէջ փարատում է բոլոր տարակոյսերը: Դրա հետ միասին կարծես աւելի լաւ ես ճանաչում հեղինակին. նա հոգով ոչ միայն Հայ է, մեծատառով Հայ, այլ նաեւ՝ սերբ: Հայաստանում ստացած բարձրագոյն կրթութիւնից յետոյ հեղինակը Սերբիայում ստացել է բանասիրական կրթութիւն, սերտօրէն շփուել սերբական գրականութեանը, գրա միջոցով նաեւ այդ ժողովրդի պատմութեանը, աղբիւրներ գտել երկու երկրների պատմութեան ողբերգական իրադարձութիւնների մէջ, առաւել ծանր է ապրել հայրենազրկման զգացումը:

Ժողովածուն գարերի միջով անցած հայ մարդու հաւատարմութիւնն է իր ազգային աւանգույթներին, խոր յարգանք եւ անհափելի սէր գերգաստանի աւագների նկատմամբ:

մամբ: Այն սկսւում է մի քառեակով, որն ընթերցողին պարզում է հեղինակի գիրքը «Խաչքար» վերնագրելու խորհուրդը: Ազգային աւանգույթներին հաւատարիմ Հայը ժողովածուն նուիրել է հօր եւ մօր կողմի գերգաստանի աւագներին՝ «լուսահոգի ննջեցեալներ» տատիկ-պապիկներին, ծնող-



ներին՝ հօրը եւ մօրը, կեանքից վաղաժամ հեռացած երկու քոյրերին: Գիրքն ընթերցելուց յետոյ հաւատում ես, որ ոչ մի նիւթական յուշարձան, յուշաքար կամ շիրմաքար չեն կարող յաւերժանալ այնպէս, ինչպէս այս «յաւերժող խաչքարը», յորգացող զգացմունքների այս ժողովածուն:

Գիրքն ըստ բովանդակութեան բաղկացած է հինգ բաժնից: Ամէն մէկը զգացմունքների միանափ պոռթկում է, յոյսերի, յոյզերի, կորստի ու ցաւի, բայց եւ՝ հաւատի ու յաւերժութեան արտայայտութիւն: Առաջին խորագրի բանաստեղծութիւնները նուիրուած են Հայաստան երկրին: Նոյեան տապանը, Արարատը, Անին, Կարսի Առաքելոցը, կորուսեալ հայրենիքի տարրեր սրբավայրերը, ճարտարապետական կոթողներն ու մասունքները փոթորկում են հայրենաբաղձ բանաստեղծի խռովայոյզ հոգին: Յոյսի ու անմար հաւատի ուժգին զգացումով բանաստեղծը մտորում է, որ անպայման կը վերանայ մեր եւ Արարատի միջեւ առկայ «սահմանը» եւ ամէն հայ կը հասնի «սրբազան լեռան ճերմակ թագը համբուրելու» իր երազին: Արարատին հետեւում են մեր կորուսեալ երկրի «որը» մնացած վայրերը՝ Վանը, Անին ու Կարսը, չքնաղ Վարազը, Սիփանն ու Սիսը, եւ հեղինակի հօր հաւատը՝ քանի զեռ կայ մեր անափ սէրը, ամբողջական Մայր Հայաստանը մերը պիտի լինի: Այգ բաժնի բոլոր բանաստեղծութիւնները հայրենակարօտ բանաստեղծի հոգու ճիչն են, որ համակում է ընթերցողին նոյն զգացմունքներով, հեղինակի հետ նա չըջում է Հայաստան երկրի սուրբ վայրերում: Մաքրավանք, սուրբ մատուռներ, խաչքար գարձած նոյնիսկ սովորական քարեր, Ծիծեռնակաբերդ, ուր պէտք է բարձրանաս ոչ թէ արցունքով, այլ՝ բռունցք գարձած, Արարատեան հողն ամբողջական տեսնելու անմար հաւատով:

Յուզիչ է երկրորդ խորագիրը՝ առաջինի անմիջական շարունակութիւնը: Այն

նուիրուած է պատմական Հայաստանի նուիրական նահանգներից մէկին՝ Վասպուրականին: Ընդամէնը հինգ բանաստեղծութիւն եւ քառեակների շարք: Վասպուրականը Բարգէն Սիմոնեանի համար «գրախտի փակ գուռն է», գերուած ու աւերուած: Մեր հին կարօտին ու անմեռ յոյսին հաւատարիմ, Հայր պիտի բացի Մհերի փակ գուռը: Դիմելով գերուած Վասպուրականին, մեր Վանայ ծովին ու երկրին, հեղինակը հաւատքով մտորում է. Վասպուրական պիտի գնանք ոչ թէ իրրեւ գթօսաչըլիկ եւ օտար, այլ՝ «սուրբ աղօթքով, ոտքով կրկին յետ գնալու յոյսով»:

Բանաստեղծ-հեղինակը Վանի մասին խօսելիս եւ գրելիս վերապրում է «այգեստանցի տատի հոգու կսկիծը», որ Վանում թողած օջախ, վանք, անուշաբոյր հացի թոնիրը, ծաղկուն Այգեստանի իրենց տունը, Արտամէտի համբաւաւոր խնձորների այգիները, անրնգհատ տնքում է հոգու ցաւից, մրմնջում «Գլէ եամանը», Աստծուց պատիժ ու գատաստան խնդրում աշխարհում յաղթած, բայց միշտ սարսափով լցուած չար ոգու համար եւ հաւատով յայտարարում, որ վանեցին վերջապէս պէտք է տէր գառնայ իր հայրենի տանը: Վարակիչ է հեղինակի հաւատը, իսկ ընթերցողը մտորում է՝ բռնագրաւողների առաջ փակուած Մհերի գուռը իրրեւ փրկութեան գուռ կը բացուի հայութեան համար:

Ընթերցողը բանաստեղծի հետ վերապրում է կորստի ցաւը, վշտամորմոք կարօտը եւ լոյսով օծուած հաւատը, որ Վասպուրական աշխարհի յուսոյ գռները բացուելու են մեր առաջ: Այգ մորմոքներից, անհուն կարօտից, պատմութեան գաժան քառուղիներում, Բարձրեալի՝ Աստծոյ Աջն է փրկել հայութեանը: Բարձրեալին, Աստծուն եւ Աստուածամօրը հեղինակը գնում է նոյն հորիզոնականում, որտեղ հարազատ Մայրն է, բազմաթիւ արի գաւակներ կորցրած «աստուածուհի» հայ մայրերը: Այգ է

ԲԱԳԻՆ

հաւաստում ժողովածուի միւս՝ «Շրջադառնալից քաղաքացիական պայքար» խորագիրը, ուր տեղ գտած բոլոր բանաստեղծութիւններն ու քառեակները հեղինակը նուիրել է կեանքից հեռացած մօրը, իսկ ամէն մի ընթերցող դրանց մէջ տեսնում է իր մօրը: Բանաստեղծութիւններն ընթերցելիս համակում ես նոյն խորը վշտով ու թախիծով, ինչ հեղինակը, բայց միեւնոյն ժամանակ հողիդ կարծես մաքրում է պիղծ աղտերից, ամոքում ես վշտից ու թեթեւացած շունչ քաշում: Ինչ լաւ կը լինէր, որ բոլոր որդիներն այդպէս խորը սղակին իրենց մօր կորուստը եւ մեծատառով Մօր առաջ լինէին մաքրամաքուր, մեծատառով Որդի՝ արժանի մօրը:

Ժողովածուի բանաստեղծութիւնների ստուար մասն ամփոփուած է «Սերբական դողանջներ» խորագրում՝ քսանհինգից աւելի յուզիչ ստեղծագործութիւններ, որոնց շնորհիւ հայ ընթերցողը հաղորդակցւում է սերբ ժողովրդի պատմական դառը ճակատադրին, հարազատ երկրի մի հատուածը կորցնելու անմոռմոք ցաւին, եւ կարծես թէ նրանց հետ ապրում է հայրենի հողի կորստեան տառապանքը, այն տարբերութեամբ, որ հայերը կորցրել են իրենց պատմական հայրենիքի շուրջ 9/10 մասը, իսկ սերբերը՝ մի մարզը միայն: Ինչպէս ժամանակին Սերգէյ Գորոդեցկին Ղարաբաղը համարում էր Հայաստանի դարպասը, այնպէս էլ սերբ ժողովրդի հայ գաւազը Կոսովոն համարում է Սերբիայի դուռը, վանք ու մատուռը, սերբերի անմեռ կարօտը, փրկութեան լոյսն ու յոյսը: Քանի որ աշխարհում դործում է հզօր պետութիւնների շահերի օրէնքը, ապա սերբական Կոսովոն բռնադրաւել են ալբանները, եւ դերտէրութիւններն ընդունել են բռնադրաւում Կոսովոյի անկախութիւնը: Մինչդեռ պատմական Արցախ-Ղարաբաղը՝ Մեծ Հայքի նահանգներից մէկը, իր հերոս ու մաքառող զաւակների ճիղով եւ աշխարհասփիւռ հալածեան օղնութեամբ ազատադրուել է

կովկասեան թուրք-բարբարոսներից, սակայն նոյն դերտէրութիւնները հեն ընդունում Արցախի անկախութիւնը: Մեզ ինչ է մնում՝ սպասել իրադարձութիւնների ընթացքին՝ մտորելով Անդրիայի վարչապետ Պալմերստոնի խօսքերը. «Չկան յաւերժական բարեկամներ եւ թշնամիներ, կան յաւերժական շահեր»: Ահա այս կարդախօսով են առաջնորդւում աշխարհի հզօրները, որից յետոյ մնում է բարձրաձայնել արեւմտահայ հանճարեղ բանաստեղծի խօսքերը. «Ո՛վ մարդկային արդարութիւն, թող որ թքնեմ քո ճակատիդ» (Սիամանթօ, «Պարը», Բ.):

«Սերբական դողանջներ» խորագիրը ցնցում է հայ ընթերցողի հողին, երբ տեղեկանում է բարբարոս ալբանացու ձեռքով Գրաշանիցա վանքի որմին պահպանուած 14-րդ դարի սերբ թագուհի Սիմոնիայի ռմբանկարի եղծմանը, հայեացք յառում սերբական տարբեր սրբավայրերին, Դուշան արքայի հինաւուրց հողին, սերբական հրաւրանչ Պրիզրենում երկինք խրուած մինարէթներին, մտաբերում հեռաւոր 1389-ի Վիդովդանեան արիւնալի ու անհաւասար ճակատամարտը սերբ իշխան Լազարի եւ դահիճ թուրք Մուրատի միջեւ: Սերբերին, հայ-սերբական բարեկամութեանը, նրանց պատմական ճակատադրերի զուգահեռներին, սերբական Աւարայրին (Կոսովոյին) եւ հայկական Կոսովոյին (Աւարայրին) նուիրւած բանաստեղծութիւնները յուզում են ընթերցողին մինչեւ հողու խորքը, մինչ արցունք եւ ուրախութիւն: Այս բանաստեղծութիւնների շարքն ընթերցողին ծանօթացնում եւ հաղորդակցում է Սերբիայի պատմութեանը, մշակոյթին, ազգային-ազատադրական պայքարին: Այդ խորագրի բոլոր բանաստեղծութիւնները կարելի է վերլուծել առանձին-առանձին, այնքան յուզիչ են, որ ցանկութիւն է առաջանում հողու տուայտանքի պահերին բարձրաձայնել դրանցից իւրաքանչիւրը, որով կը

դարմանունեն հոգուդ ցաւերը եւ ապրելու ցանկութիւնը վերստին կը վերադառնայ: Եւ, սակայն, այս խորագրից չեմ կարող չնշել ու չընդդժել «Վերջին թռիչք» բանաստեղծութիւնը, որ նուիրուած է 1988-ի Սպիտակի կործանարար երկրաշարժի ժամանակ հայ ժողովրդին օղնութեան շտապած սերը օղաչունների ողբերգութեանը: «Եօթ քաջորդի սերը»՝ եօթ պայծառ մարդիկ, որ դեկտեմբերի 12-ին զոհուեցին Հայաստանում: Երախտապարտ մեր ժողովուրդը զոհուած սերը հերոս օղաչունների անուններն անմահացնող յուշարձան կանդնեցրեց: Կորստից տաս տարի անց մեր հայ սերը կամ սերը-հայ բանաստեղծ Բարդէն Սիմոնեանը «Վերջին թռիչք» վերնադրով սքանչելի մի բանաստեղծութիւն նուիրեց զոհուած օղաչունների յիշատակին, որը յաւերժ է որպէս յուշարձան:

Ժողովածուն աւարտուած է «Խօսք առ Աստուած» խորագիրը ունեցող բաժնով: Դա ինքնատիպ մի աղերսադիր է, մշտամոմումք պաղատանք՝ ուղղուած Աստծուն, որ նա փրկի աշխարհը անհաւատներից ու կաւատներից, օտար ու կեղծ դաւանանքներից, նիւթապաշտներից ու եղբայրադաւերից, որ հողով մաքրուած բոլոր մարդկանց սրտում «դաշուի Աստծոյ սուրբ պատկերը»: Աստծուն ուղղուած այդ բանաստեղծութեանը յաջորդում է «Ընդհատուած աղօթքը»՝ նուիրուած քահանայ Խաչատուր պապի յիշատակին, որը աղօթքով ու հոգու վէրքով, դահճի արիւնոտ ձեռքով սահմուկեցուցիչ 1937-ին, վիրաւոր ու խռովուած, հեռացաւ այս աշխարհից՝ մնալով անշիրիմ ու անքար: Պապին նուիրուած այս բանաստեղծութիւնը մի յաւերժ շիրմաքար է 1937-ի բոլոր անմեղ զոհերին: Այդ բաժնի բանաստեղծութիւններն աղերս են առ Աստուած, նրա օրհնանքով մաքրուելու, անբիծ ու անարատ ապրելու, վայելելու Աստծոյ պարգեւ ընկերութիւնը՝ «յուսոյ տաճարը, դրախտի դուռը, անամոք ցաւին դեղ ու ճարը»:

Բացառիկ ուշադրութեան է արժանի «Իմ կեանքի մանիֆեստը»՝ բանաստեղծութիւնը, որն ընթերցողին ներկայացնում է բանաստեղծի հոգու հարստութիւնը, ամբողջ կեանքում շիտակութեամբ առաջնորդուող, «բարուն ու արդարին» ծառայող, տմարդին ու աղահին այպանող, մաքրամաքուր օրէնքներով առաջնորդուող մարդուն: Այդ խորագրի (ընդհանրապէս ամբողջ ժողովածուի) բանաստեղծութիւնները ընթերցողի առաջ պարզում են մեծատառով մարդու հոգու ծալքերը, աստուածային պատգամներով առաջնորդուող անհատի անեղծ հոգին, մարդկային բարձր առաքինութիւնը: Կարելի է երկար դրել «Խաչքար» ժողովածուի մասին, առանձին առանձին վերլուծել ու արժեւորել յրքում տեղ դտած բոլոր բանաստեղծութիւնները: Խորապէս համոզուած եմ, սակայն, այսքանն էլ լիովին պատկերացում է տալիս բանաստեղծական ժողովածուի, նրա հեղինակի հոգու եւ մտքի բարձր արժանիքների մասին:

Ժողովածուի վերջում զետեղուած են հայ բանաստեղծներ Սիւվա Կապուտիկեանի, Դէորդ Էմինի, Լիւդուիգ Դուրեանի, Ռաֆայէլ Սահակեանի, ինչպէս նաեւ սերբ անուանի բանաստեղծ Բրանիսլաւ Պետրովիչի եւ բանասիրութեան դոկտոր, լեզուաբան Սուետոգար Ստիյովիչի դնահատանքի եւ արժեւորման արտայայտութիւնները, որոնք բնորոշում են Բարդէն Սիմոնեան մեծատառով մարդու կերպարն ու բանաստեղծական աշխարհը, նաեւ՝ դիւանադէտին: Մնում է ցանկալ մեր բանաստեղծին աստուածային պարգեւների մի մեծ բոյլ՝ հոգու հարստութիւն, անարատութիւն, անկաշառ հայրենասիրութիւն, տոկուն աշխատասիրութիւն... Ցանկութիւնների այս շարքը կարելի է անվերջ համալրել: Դրանց միջոցով եւ շնորհիւ մենք իրաւունք ունենք ակնկալելու մեր բանաստեղծից նորանոր աստուածային պարգեւներ:



ԲԱԳԻՆ

Հատուածներ Բաբգէն Սիմոնեանի
«ԽԱՋԲԱՐ» բանաստեղծութիւններու գիրքէն

ԳՐԱԴԱՐԱՆ

ԸՆԴՀԱՏՈՒԱԾ ԱՂՕԹՔ

Պապիս՝ Տէր Խաչատուրի
պայծառ յիշատակին

* * *

Սի լուսէ, խաղաղ առաւօտ,
Երբ պապս աղօթք էր անում,
Խուժեցին ձեռքերով արնոտ
Դահիճներ լկտի, անանուն:

Պոկեցին սուրբ խաչը կրծքից,
Կարկամեց երգը շուրթերին,
Հառաչանք մնաց աղօթքից,
Ու մնաց աղօթքը թերի:

Հոգին միշտ խաղաղ էր, պայծառ,
Բայց ցնցուեց կալանքի բոթից
Ու անմեղ մի զոհ նա դարձաւ
Արիւնոտ երեսունեօթին:

* * *

Օ՛, աշխարհ, պարտւորուած դաւով,
Գալու է դատաստանն արդար,
Իսկ երգս շաղախուած ցաւով,
Թող դառնայ պապիս շիրմաքար:

11.11.2000

ՎԱՆԱՅ ՀՈՂ

Ծուարել է հոգուս խորքում մի ցաւատանջ կարօտ,
Լոյս է տալիս յոյսը անմեղ յառնումի ու կեանքի,
Ու ձգուում է ձամբաս երկար, փշոտ ու քարքարոտ,
Տանում է ինձ ու հասցնում վսեմ երազանքիս:
Վանայ հողին է աչքիս առջեւ ու մեր Խաչփողանը,
Այս, գնայի ու փարուէի իմ հայրական տանը:
Տասնհինգն էր մահասարսուռ, տարին սեւ էր ու չար,
Ահով բռնեց զաղթի ձամբան տատս այգեստանցի,



Վանում թողեց օջախ ու տուն, եւ վանք, եւ շիրմաքար,
եւ թոնիրր, ուր էլ չկայ անուշ թոյրը հացի...
Առանց Վանի, առանց իր տան ցաւախառն էր հոգին,
Վաղուց արդէն հանգչում է, նա քարծուքներում Նորքի:

* * *

Ականջիս մէջ երգն է հնչում «Դէ, եամա՛ն, եամա՛ն...»,
Թրթռում են իմ շուրթերին սուրբ անուններ լուսոյ,
Կր փշրունն մեզ քաժանող փշալար ու սահման,
Աղթամարից կ'արձագանգեն դողանջները յուսոյ...
Ապասելուց որ չոգնի մեր վիրաւոր Վանը,
Որ նորովի այգաբացոյի հայոց Այգեստանը:

24.7-24.10.2002

ԽԱԶՔԱՐ

Հայոց հողում ուր էլ նայես՝ քա՛ր է, քա՛ր,
Ամէն քարը յիշեցնում է մի խաչքար:

Ամէն խաչքար՝ ժանեկահիւս մի նշխա՛ր,
Մաքրամաքուր ու խնկաբոյր մի աշխա՛րհ:

... ..

Հայոց հողում ուր էլ նայես՝ քա՛ր է, քա՛ր,
Ամէն մի քար դարձել է սուրբ մի խաչքար:

20.03.2011



ՇԱՐԿԱԹՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ (ՅՈՒԼԻՍ 20 - ՍԵՊՏ. 3 1931)

Կը հրատարակենք անտիպ գիրքի երկրորդ գլուխէն շահեկան հատուած մը, խորհրդային առաջին շրջանի Հայաստանի ներքին եւ մշակութային կեանքին եւ դէմքերուն մասին:

Մեզի յանձնուած գիրքը ձեռագիր է, եւ միայն վրէպներու սրբագրութիւն ըրած ենք:
Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ ՁԵՒԱԿԵՐՊՈՂ ԵՒ ՊԱՅՄԱՆԱԻՐՈՂ ԳՈՐԾՕՆ ԱԶԳԱԿՆԵՐԸ

Բ. ՀԱՅ ԿԵՆՑԱՂԸ ԵՒ ՄՏՔԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄԸ

Հայ կենցաղը եւ մտքի կերպարանափոխումը յառաջ կը բերէ հայ նկարագրի ներակերտումը: Այս հարցի ուսումնասիրութիւնը կարելի է միայն ձեռնհասօրէն կատարել պատկերացնելով մեր աշքին առջեւ հայ ժողովուրդի նկարագրին ընդհանուր գիծերը նախքան անոր պետականութեան տիրացումը: Այս բնոյթի աշխատասիրութիւն մը պէտք է հիմնուած լինի պատմական տուեալներու վրայ, եւ ընթանայ, որքան կարելի է, գիտա-հետազօտական ուղիով՝ շաղկապելու հայ ժողովուրդը ձեւակերպող եւ անոր կեանքին մէջ երեւան եկած հոգեբանական, ընկերա-հասարակական, կուլտուրական եւ քաղաքական երեւոյթները: Այսպիսի խնամեալ եւ իրականութեանց հարազատ պատկերը ներկայացնող ուսումնասիրութիւն մը ցարդ ծնունդ չէ առած հայ գրականութեան էջերուն վրայ: Մեր ներկայ գրութեան նպատակէն դուրս է զբաղիլ այդ հարցով, միայն պէտք է գոհանանք հոս յիշատակել, որ հայ ժողովուրդը ապրած ըլլալով տարբեր պայմաններու տակ, նա անոնցմէ ժառանգած է անխուսափելիօրէն տար-

քին մէջ երեւան եկած հոգեբանական, ընկերա-հասարակական, կուլտուրական եւ քաղաքական երեւոյթները: Այսպիսի խնամեալ եւ իրականութեանց հարազատ պատկերը ներկայացնող ուսումնասիրութիւն մը ցարդ ծնունդ չէ առած հայ գրականութեան էջերուն վրայ: Մեր ներկայ գրութեան նպատակէն դուրս է զբաղիլ այդ հարցով, միայն պէտք է գոհանանք հոս յիշատակել, որ հայ ժողովուրդը ապրած ըլլալով տարբեր պայմաններու տակ, նա անոնցմէ ժառանգած է անխուսափելիօրէն տար-

*Փրոֆ. Մանասէ Սելակ (1896-1967) եղած է ՎՍՆի Փենսիլիվանիա Նահանգի համալսարանին մէջ մանրէաբանութեան դասախօս:

բեր նկարագրի գիծեր: Նաեւ գաղութներ ապրելով տարբեր ժողովուրդներու մէջ, յառաջ բերած են տարբեր տրամադրութիւններ, տարբեր խառնուածքներ, ցանկութիւններ եւ երեւոյթներ հայ կեանքի մէջ: Այս հարցերու ներքեւ բարդութեանց դրսեւորումը այնքան խրթին է, որ ես նոյնիսկ չեմ յանդգնիր զայն ներկայացնել իր ընդհանուր գիծերով եւ կամ որոշ ֆորմիւլներու վերածել: Բայց անոնք որոնք ապրած են հայ ժողովուրդի մօտ եւ զբաղած են անոր հարցերով գիտեն թէ որն է հայ ժողովուրդը: Այս վերջին ըմբռնողութիւնն է որ պէտք է ունենանք իբրեւ յենակէտ մեր հայ ժողովուրդի նկատմամբ կազմած դիտարկութիւններուն, առանց խաբելու մենք զմեզ, կարենալ գնահատելու լիովին Խ. Հայաստանի հայ ժողովուրդի կենցաղին ու մտքին կերպարանափոխումները:

Նախքան այդ կերպարանափոխումներուն եւ այդ պրոցէսին մէջ եղող երեւոյթներուն շօշափումը, կ'արժէ որ հոս յիշատակենք կարգ մը դէպքեր եւ աշխատանքներ, որ կը կատարուին Խ. Հայաստանի մէջ:

Երեւանի մէջ, Աբովեան փողոցի վրայ, թիւ 18 «Կուլտուրայի Տուն» անունը կրող ընդարձակ շէնքի մը մէջ գետեղուած է, ի մէջ այլոց, Հ.Ս.Խ.Հ. Լուսժողկոմատի օրկաններէն Գիտութիւններու Ինստիտուտը: Այս հաստատութեան նպատակն է աջակցիլ բնապատմական, մաթեմատիքական, տեխնիկական, պատմական, հասարակական եւ գեղարուեստական խնդիրներու գիտական ուսումնասիրութեանը Խորհր. Հայաստանի մէջ եւ իր աշխատանքներով նպաստել հանրապետութեան նիւթական եւ մտաւոր կուլտուրական շինարարութեան: Առաջին հերթին ուսումնասիրութեան նիւթ դարձնել

երկրին բնական եւ կուլտուրական միջավայր, ինչպէս նաեւ անոր շինարարութեան խնդիրները: Ինստիտուտ արդէն կատարած է շարք մը լուրջ ուսումնասիրութիւններ, անոնցմէ ոմանք թարգմանուած են կեանքի: Երկար պիտի լինի հոս թուել եղած ուսումնասիրութիւնները: Անոնց նշանակութիւնը լիովին ըմբռնելու եւ գնահատելու համար, պէտք է այցելել երկիրը եւ կամ որոշ գաղափար մը կազմելու համար աչքէ անցնել Գիտութեան եւ Արուեստի Ինստիտուտի եւ Հ.Ս.Խ.Հ. Պետական Համալսարանի Գիտական Տեղեկագիրներու շարքը: Այս կէտը ուշադրութեան յանձնել կ'ուզեմ մասնաւորաբար գաղութահայ մտաւորականութեան հետ հոգեկան կապ ստեղծելու արտասահմանի հայութեան եւ Հայաստանի ժողովուրդին միջեւ:

Գիտութեան Ինստիտուտի գրասենեակներէն ներս եմ: Կը ծանօթանամ առաջին առիթով փրոֆ. Հ. Աճառեանի հետ, որ ձեռքերը սօթած, իր երկու օգնական հայուհիներուն հետ, կը զբաղէր իր Հայերէն Արմատական Բառարանին հինգերորդ հատորին ապակերպութեամբ: Ա. Բ. Գ. եւ Գ. Հատորները - 1.232+1.350+1.492+1.350 էջեր -, որոնք կը պարունակեն Ա-Յ տառերը, արդէն լոյս տեսած են: Ընդամենը պիտի ըլլայ վեց հատոր: Ամբողջ ապակերպութիւնը նոյնութեամբ կը կատարուի ձեռագիր բնագիրէն, եւ հին (իմա՝ դասական նախախորհրդային, Բ.) ուղղագրութեամբ: Փրոֆ. Աճառեանին ծանօթանալէ եւ տպագրութեան մեթոտին տեղեկանալէ յետոյ, կը հարցնեմ.

- Ինչո՞ւ տպարան չէք յանձներ, եւ այս մանրակրկիտ, բիրեղեայ կերպով այսպիսի մեծ աշխատանք մը ձեռագրելու հոգէն ազատ լինել:

[illegible]

Prof. Williams Allen.

[illegible]

*Temp fuer myz Procyon mearnsi - Vapors: In myz myz Procyon mearnsi
Vapors: In myz myz Procyon mearnsi - Vapors: In myz myz Procyon mearnsi*

1. General 2. Particular 3. Particular 4. Particular 5. Particular 6. Particular 7. Particular 8. Particular 9. Particular 10. Particular 11. Particular 12. Particular 13. Particular 14. Particular 15. Particular 16. Particular 17. Particular 18. Particular 19. Particular 20. Particular 21. Particular 22. Particular 23. Particular 24. Particular 25. Particular 26. Particular 27. Particular 28. Particular 29. Particular 30. Particular 31. Particular 32. Particular 33. Particular 34. Particular 35. Particular 36. Particular 37. Particular 38. Particular 39. Particular 40. Particular 41. Particular 42. Particular 43. Particular 44. Particular 45. Particular 46. Particular 47. Particular 48. Particular 49. Particular 50. Particular 51. Particular 52. Particular 53. Particular 54. Particular 55. Particular 56. Particular 57. Particular 58. Particular 59. Particular 60. Particular 61. Particular 62. Particular 63. Particular 64. Particular 65. Particular 66. Particular 67. Particular 68. Particular 69. Particular 70. Particular 71. Particular 72. Particular 73. Particular 74. Particular 75. Particular 76. Particular 77. Particular 78. Particular 79. Particular 80. Particular 81. Particular 82. Particular 83. Particular 84. Particular 85. Particular 86. Particular 87. Particular 88. Particular 89. Particular 90. Particular 91. Particular 92. Particular 93. Particular 94. Particular 95. Particular 96. Particular 97. Particular 98. Particular 99. Particular 100. Particular

Ակնոցը աչքին վերցուց, թողուց իր գործը վայրկեանի մը համար, տպուած թերթ մը վերցուց եւ ցոյց տուաւ ինձ բացատրելով.

- Ըսէ՛ք, ո՞ր տպարանը կարող է այս տպել,- ուշադրութիւնս հրաւիրելով ստուգաբանական բառերու վրայ, գրուած պարսկերէն, պահլաւերէն, արաբերէն, ֆրանսերէն, հրեայերէն (եբրայերէն, Բ.), յունարէն եւ բազմաթիւ այլ լեզուներու տառերով: Հիացումով հետեւեցայ կատարուած հսկայ եւ խնամեալ աշխատանքին, եւ թերթատեցի հարեւանցի կերպով 5.500 հսկայ էջերու կոյտերը, որոնք արդէն ապակերպուած էին այնպէս ինչպէս որ նա ձեռագրած էր:

Խօսակցելով մէկ անկիւն կ'անցնէինք եւ հարցումներ տուի ծանօթանալու իր ուրիշ աշխատասիրութիւններուն: Պատրաստման մէջ է Ընդհանուր Քերականութիւն մը Բոլոր Լեզուներու, որ պիտի ըլլայ միակը իր տեսակին մէջ աշխարհի բոլոր լեզուներուն մէջ: Նա արդէն գրած է երկու հազար էջեր եւ հարկաւոր է գրել երկու հազար էջեր եւս: Փրոֆ. Աճառեանը կը պատրաստէ «Բառարան Յատուկ Անուններու», որ կը զբաղի յատուկ անուններու ծագումով, անոնց գրականութեամբ եւ պատմութեամբ սկիզբից մինչեւ մեր օրերը: Կ'ուրուագծէ անուններու հոլովոյթը եւ անոնց ներկայիս գործածուած ձեր, եւ այդ անուններով եկած բոլոր անձերու կենսագրութիւնները եւ յիշատակագրերը: Այստեղ պէտք է յիշատակեմ, որ իր բոլոր աշխատանքները կը տպուին հին ուղղագրութեամբ:

Փրոֆ. Աճառեանի հետ կը քալենք Գիտութեան Ինստիտիտի քարտուղար Կարօ Մելիք-Օհանջանեանի հետ: Կը խօսակցինք մի քանի վայրկեան, նօթատետրս կը բանամ եւ կը հարցնեմ.

- Այս պտոյտի առիթով ծանօթացայ Հայաստանի մէջ կատարուող Գիտական եւ Ճարտարարուեստական աշխատանքներուն, հասկնալ կ'ուզեմ նաեւ, թէ ցեղային կոլտուրայի տեսակէտէն ի՞նչ աշխատանքներ կը կատարուին: Հասկընալ կ'ուզեմ, թէ ներկայ ախշատանքները ի՞նչ կերպով եւ ո՞ր չափով կ'ապուած են հայ ժողովուրդի անցեալին եւ ժառանգներուն հետ, եւ ի՞նչ նոր ուղի կը գծուի մեր առջեւ ետ չմնալու կոլտուրապէս: Նա շտկուեցաւ իր աթոռին վրայ եւ սկսաւ պատմել.

- Մեր ներկայ մտահոգութեան կեդրոնը կը կազմեն Էջմիածնի 8.000 գրչագրերը, անոնցմէ ոմանց հրատարակութիւնը եւ կամ անոնց խնամեալ գրացուցակի մը պատրաստութիւնը: Մեր ամբողջ անցեալը եւ կոլտուրան անոնց մէջ թաղուած են, եւ պէտք է կանգնեցնել (վերականգնել, Բ.) մեր ներկան, ծանօթ անցեալի մեր ցեղային կոլտուրային եւ հարստութիւններուն (վրայ, Բ.), հրատարակել մանրանրկարները եւ անոնց պատմութիւնը, ահա մեր հոգերէն ոմանք (մէկ մասը, Բ.):

- Ունինք մեր տրամադրութեան տակ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանի «Հայ Մանրանկարչութեան Պատմութիւնը», Գիտութեանց Ճեմարանը որոշեր է համառօտակի հրատարակել այս աշխատասիրութիւնը, որ քսան տարիէ ի վեր կը սպասէր: Նա ունի մի ուրիշ աշխատութիւն «Հայ Գրչագրերու Յիշատակարանները» անունով: Նա արտագրած է 10.000 գրչագրերու յիշատակարանները: Եթէ իւրաքանչիւր յիշատակարան գրաւէ կէս էջ, մենք կ'ունենանք առնուազն 5.000 էջեր եւ կամ վեց հատորներ: Նա զբաղած է այս գործով երեսուն տարիէ ի վեր: Ահա անոնց մէջ թաղուած են Հայաստանի քաղաքական եւ

ԲԱԳԻՆ

կուլտուրական պատմությունը: Մեր հոգն է լոյս բնծայել զանոնք եւ յանձնել հայ ժողովուրդին: Կարիք կայ արտակարգ աջակցութեան: Ունինք նաեւ անտիպ հէքիաքներու հաւաքածոյ մը, 1.500 հէքիաքներ Ռուսահայաստանի, Էրզրումի, Պիթլիսի, Մուշի եւ Վանայ հայոց կեանքէն, հաւաքուած Երուանդ Լալայեանի կողմէն, որ մեռաւ անցեալ Փետրուարին: Այս հէքիաքները մեր ժողովուրդին ստեղծագործութիւնն են, անոր աշխարհայեացքի հայելին: 1.500 հէքեաքներ, որոնք (գորս, Բ.) առնուազն կարելի է գետեղել 50 հատորներու մէջ: Ու ունինք մօտաւորապէս 1.000 ժողովրդական երգեր հաւաքուած Հայաստանի Գոնսերվաթուարի տեսուչ Սպիրի Տօն (Սպիրիտոն, Բ.) Մելիքեանի ջանքերով: Անոնց մի մասը հրատարակուած է, մի ուրիշ մաս կը հրատարակուի, եւ ապա ամբողջը՝ եթէ թլայ հնարաւորութիւն: Ու մենք ունինք ժողովրդական վէպերու հաւաքման գործը. 19 վարիանք (տարբերակ, Բ.) լոյս տեսած են պատերազմէն առաջ՝ ցրուած աստիճանդին: Նաեւ Սասմայ Ծոներ (Սասունի խենթեր, Բ.) 25 հատ ձեռագիրներ եւ 19 հատ տպուած, բայց հոս ու հոն ցիրուցան:

Ես հետեւեցայ անոր ուշի ուշով եւ մօթագրեցի եւ տարուեցայ այն օրերու երագներով, երբ այս զանձերը ոգի կ'առնեն եւ կ'ըլլան մեր կուլտուրական օճախներու հարստութիւնները՝ խառնելու մեր ուղիին, մեր իրաւակարգերուն, որ մեզ կը տանի դէպի անակնկալ բարձրութիւններ: Մեր խօսակցութիւնը կ'ընդհատուէր շարունակ դիմումնագրերով, պաշտօնական գործերով, եւ մէջ ընդ մէջ կը հարցնեմ՝ կարիքներու շուրջ:

- Մեր առջեւ բացուած է աշխատանքի մեծ դաշտ, բնագիտական, պատմական, հնագիտական, երկրաբանական, եւլն:

Պէտք է մեր պատմութիւնը անցնել մաղէ, պէտք է դասաւորել նիւթերը, եւ զանոնք ներկայացնել ժողովուրդին մատչելի եւ հարազատ ձեւով: Ահա անսպառ աշխատանքի աղբիւր: Մեր տպարանը ծանրաբեռնուած է, մեր պիտճէն սահմանափակ, ահա կարիքներ որոնք (գորս, Բ.) պէտք է մեղմացնել թեւեր տալու մեր հոդին տակ թաղուած զանձերու վերաքննական աշխատանքներուն եւ շաղախելու զանոնք մեր կեանքին որ կ'ընթանայ թափով:

Խօսակցութեան ընթացքին փրոֆ. Աճառեանը վերադարձած էր իր աշխատանքը, մի քիչ յետոյ եկաւ դարձեալ թանգարանի աշխատակիցներէն մէկուն հետ, իրենց հետ բերելով զաճի վրայ կադապարուած սեպածեւ արձանագրութիւն մը, որ փրոֆ. Աճառեանը սկսաւ ընդօրինակել թուղթի մը վրայ եւ ապա ուսումնասիրել: Նոյնպէս բերին թանկագին քարերէ շինուած համրիչ մը, որոնցմէ երկուքը քառակուսի տախտակներ էին, եւ կը կրէին արաբական գիրեր, գորս մա կարդաց: Երբ լրացուց իր ընթերցումները, շտկուեցաւ աթոռին վրայ, նայելով թանգարանի աշխատակիցին, սկսաւ կատակել իր վրան (անոր հետ, Բ.):

- Սեղրակ, մեռնիմ մէ դո՞ւ պիտի գրես կենսագրութիւնս:

- Դու չես մեռնիր դեռ,- կը պատասխանէ Սեղրակ խնդրով մը:

- Գիտեմ որ շատ զաւեշտական կենսագրութիւն մը պիտի գրես, կը կրկնէ փրոֆ. Աճառեանը:

- Ի՞նչ ունիք, անհանգի՞ստ էք,- կ'ընդմիջեմ:

- Ոչինչ, մի քիչ փորհարութիւն ունիմ,- կը պատասխանէ:

- Մահուան մասին մի՛ մտածէք, խնդրեմ, առանց ձեր գլուխ-գործոցները

կատարելագործելու,- կ'աւելցնեն:

- Թերի մնացածները պիտի կտակեն Սեդրակին,- կը կատակէ նա դարձեալ աչքին տակէն խնդալով եւ նայելով Սեդրակին:

ՀԱՅ ԳՐԶԱԳՐԵՐԸ

Մի քանի վայրկեան մտերմական տաքուկ խօսակցութենէ յետոյ ոտքի կ'ելլենք, շնորհակալութիւն կը յայտնեն Կարօ Մելիք-Օհանջանեանին, եւ փրոֆ. Աճառեանի հետ կ'ուղղուինք թանգարանի գրական բաժինը, եւ կը ծանօթանամ Լիսիցեանին հետ:

Աչքէ կ'անցնենք Արեւելահայ գրողներու թանգարանը, ուր հաւաքուած են Նալպանտեանի, Աբովեանի, Քամառ-Քաթիպայի եւ ուրիշներու լուսանկարները, անձնական իրերը, նամակները, եւլն: Իւրաքանչիւր գրողին յատկացուած է անկիւն մը եւ իրերը կ'դրուած են փեղկերու ետին: Ապա աչքէ կ'անցնենք Թանգարանի հայ գրչագրերը: Հոն հաւաքուած են 1.200 գրչագրեր՝ ամէն սեռի, որոնցմէ ամենահինը կը պատկանի 986 թուականին: Աչքիս առջեւ փեղկի մը մէջ բաց կը ցուցադրուին մեծագիր էջերով եւ մանրանկարներով գրչագրեր. կը հետեւիմ այդ նորք արուեստի գիծերուն, աչքս վեր կ'առնեն եւ կը հարցնեն փրոֆ. Աճառեանին եւ Լիսիցեանին:

- Ընդամենը քանի՞ գրչագրեր ունինք աշխարհի զանազան մասերուն մէջ:

Վերիվերոյ հաշուեցին իրենց մէջ եւ տուին ինձ թիւերը:

- Էջմիածին՝ 8.000, Հայաստանի Պետական Թանգարան՝ 1.200, Վենետիկ՝ մօտ 5.000, Երուսաղէմ՝ մօտ 5.000, Վիեննա՝ մօտ 1.000, եւ զանազան հոս ու հոն ցրուած ձեռագիրներ, որով կը կարծենք

թէ հայ գրչագրերու ընդհանուր թիւը կը հասնի 25.000-ի:

Ինձ համար հարստութեան այս թիւը նորութիւն մըն էր: Հիացումէ եւ մտատանջութենէ ինքզինքս ընկճուած զգացի: Ականջիս մէջ դեռ կը հնչեն. «Մեր ամբողջ անցեալը եւ կուտորան անոնց մէջ թաղուած են, եւ պէտք է կանգնեցնել (վերականգնել, Բ.)» մեր ներկան ծանօթ անցեալի մեր ցեղային կուտորային եւ հարստութիւններուն (վրայ, Բ.): Հայ ժողովուրդը ապրած է դարերով, ստեղծագործած, արձանագրած է իր աշխատանքներն ու զգացումները: Անոնք դիզուած են իրարու վրայ, եւ երբեք առիթ չէ ունեցած զանոնք վերագնահատելու, պարզաբանելու եւ անոնց էական մասերը յայտնաբերելու: 25.000 գրչագրերու հարստութեան թիւը կը թրթռացնեն ականջս, անոնց տպագրութիւնը այնպէս ինչպէս որ են, անոնց մեկնաբանութիւնը, գոյգէ՝ ահա 25.000, կամ կրկնակի թիւով հատորներ եւս, ու ապա կառուցանել մեր քաղաքակրթական հսկայ յիշատակարանը՝ հիմնուելով անոնց վրայ, ահա աշխատանքներ որոնք դեռ սաղմնային վիճակ իսկ չեն առած: Միւս կողմէն, ես կը պատկերացնեմ գաղութահայերը, որ ամէնակէտտոտ սեռի բիզանդականութեամբ կը զբաղին, իրարու արիւնը կը խմեն Սուրիա եւ այլ տեղեր. գաւաթ մը ջուրի մէջ փոթորիկներ կը յարուցանեն, իսկ անդին մեր մեծածաւալ պատմութիւնը թաղուած կը մնայ փոշիի տակ եւ կը սպասէ կազմակերպուած ոյժերու՝ փութացնելու վերակառուցումը մեր պատմական յիշատակարաններուն:

Այս մտածումներու մէջ թաղուած փրոֆ. Աճառեանի հետ կ'անցնինք թանգարանի անցքերով եւ կ'ուղղենք մեր քայլերը Խորհր. Հայաստանի Հանրա-

ձևեր են ձևամբացի Վրթ. հց. ձևացված ԱԲ. ձեռքակալ 34. կաթ. ձառնետ. ձեռքացի ԱԲ. Սրանցից առանձնապես կարևոր է ձեռք, որ եզ. գրծ. հոլով է և երևան է հանում նախադր Ձեռ «ձեռք» ուղղականը: Յետին ուսմիկ ձև է ձեռնաց «ձեռքի գործիք, միջնորդ», նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. կե. «Հրամայէ բզտուեալն հաց յկատուծոյ հասարակ ուտել, զի ոչ ասէ զհաց իմ, այլ թէ մեր. վասն զի մեծատունք ձեռքոց են կատուծոյ, որք պարտին զինչս իւրեանց բազմաց բաշխել և աղքատաց»: Նոր բառեր են ձեռնափայտ, ձեռնաղաղակ, ձեռնամեայ, ձեռնամալութիւն, ձեռնաղաց, ձեռնառումբ, անձեռնմխելի, ձեռագրական, ձեռագրատուն, ձեռնոց, ձեռքակալութիւն ևն:

— Բնիկ հայ բառ. ցեղակիցներն են յն. չեւթ «ձեռք», յգ. տր. չեւթ, դոր. արկ. կիպր. չիթ, ևու. հյց. յգ. չեւթ «գձեռք», չեւթ-ուգ «ձեռք լուալու ջուր», Եւ. չեւթ «գիրին ձեռնարկելի գործ», ալրան. dore «ձեռք» (Pedersen KZ 36, 341), լտ. hīr «ձեռքի ափ», օսկ. heriad «բռնել», սանս. hārati «առնել, բռնել», harāga «բազուկ», թոխար. tsar, քուլ. šar «ձեռք», šarne «միջոցաւ (ճիշտ ինչպէս հյ. ձեռամբ. այսպէս նաև ասոր. ܒܝܪܐ bāyad «ձեռամբ, միջոցով», որ գալիս է ܒܝܪܐ idā «ձեռք բառից»), Այս բոլորը տալիս են հնի. g'her- և g'hers- ձևերը, որոնց նախնական նշանակութիւնն է «բռնել»: Առաջինից ծագում է հյ. *ձեր-, որ յետոյ կորչելով՝ պահուել է միայն ձերք- գործիականի մէջ, իսկ երկրորդից գալիս է հյ. ձեր-, որից և մասնիկով՝ ձեռն և ք յոգնակերտով ձեռն (Pokorny I, 603, Walde 174, Ernout-Meillet 433, Boisacq 1054):—Հիւր. 470:

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չի. և կշռ. էջ 120, որ համեմատում է յն. չեւթ ձեռ հետո նոյնը յետոյ Klapproth, As. polygl. էջ 101. Brosset JAs. 1834, 383 ևն յն. չեւթ, վրաց. խելի, թրք. el «ձեռք»: նշք և Peterm. 23 յն. չեւթ, սանս. kara-

Windisch, 13, 39 և Հիւր. KZ 23, 25 յն. ձեռ. Böttich. ZDMG 1850, 357, Arica 71, 163 և Lag. Urgesch 250 հց. har արմատից, սանս. hasta, harana, յն. չեւթ, Müller SWAW 38, 578 զնգ. zasta, սանս. hasta- նոյն, Kuhns u. Schleich. Btrg. 3, 253 ածանցուած zasta «ձեռք» բառից, ինչպէս մեռն <zi-ma-ից> Տէրվ. նախալ. 81 ուղիղ է մեկնում: Հիւր. մեռն բառից, Bugge, Lyk. Stud. I. 32 և 2, 86 նոյն է դնում լիւկ. tern «բանակ»: Jensen 2Ա 1904, 183 հաթ. t'r=dyer: Բ. Վ. Գէորգեան, Խորենացին Խորենացիով, Վարդպտ. 1899, 60 ձեռնէ (յգ. հյց. ձեռնէ) մեկնում է ռէս «գիրդապետ» բառով (արար. راس ras «գլուխ» բառից է): Թիւրքաբան, Արիահայ բո. 257 ձեռքագատ մեկնում է իբր պրս. ځړ وړ sarv-azā «աղաա աճող նոճի»:

Գիւր.—Ալլ. Ոգմ. Ջղ. ձեռ, Մշ. ձեռ, Երև. ձեռ, Ննի. ձեռ, Ախց. Ակն. Կր. Մշ. ձեռ, Ազլ. ձեռ, ձեռ, Տի. ձեռ, ձեռնիք, Մլմ. ձեռ, Վն. ձեռ, ձեռն, Մկ. ձեռ, Մրդ. ձեռ, ձեռ, շմշ. Գոր. Ղրք. ձեռ, Տիգ. ցէռ, Խրք. ձեռ, Ջթ. ձեռ, ձեռ, Ասլ. ցռռ, Պլ. ձառ, յգ. ձառվեէ (կեղծ գրական ձևով ցռռ), Սեք. ձեռ, Սվեդ. ձեռ (յգ. ձեռվա), Ռ. ցռռ, շռ. ձառ, շռ. ձեռ, Շմ. ցէռ: Նոր բառերից՝ որ շատ բազմաթիւ են, յիշենք ձեռաց, ձեռամաց, ձեռնուկ, ձեռնարաց, ձեռնդէք, ձեռնցաղ, ձեռնաղ, ձեռնաքար, ձեռնակալայ, ձեռնալազ, անձեռածատալ, որոնցով երևում է թէ ինչ ու ինչ ձեռնով մտնում է բառս ածանցման մէջ:

ՓՈԽ.—Հյ. *ձեռնուկ ձեռից փոխառեալ եմ կարծում արար. زرنوك zarnuk «առձեռն փոքր աղօրիքի կոթ. շուտուիկ՝ որով աղօրիքն են պտտացնում» (թրք. el. ֆրանս. manivelle, որոնք բուն նշանակում են «ձեռք») (Կամուսի թրք. թրգմ. Գ. 91). արարելէն բառը՝ որ քառատառ ! է, բուն արարական արմատով չի մեկնում:—Marquardt, Die Entstehung, էջ 5 հայերէնից հին փոխառութիւն է համարում թոխար. tsar «ձեռք» և

Հրաշեայ Աճառեանի ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԷՆ էջ մը. 1926

յին Մատենադարանը: Կը ծանօթանամ Արամ Պապայեանին, որ իսկոյն կ'ընկերանայ մեզի՝ ծանօթացնելու մատենադարանը:

- Ունինք մօտ 35.000 հայերէն հատորներ,- կը սկսի նա,- 200.000 Ռուսերէն, 15.000 Եւրոպական լեզուներով, 130.000 ամսագրեր եւ ուրիշ բազմաթիւ թերթեր, որոնց ընդհանուր թիւը կը հասնի 600.000-ի: Մենք ունինք խորհրդային հանրապետութիւններուն մէջ պարտադիր փոխանակութեան սխտեմ, որով մեր գրադարանը ինքնաբերաբար յաւելում կ'ունենայ ամէն տարի 100.000 հատորներով:

- Գաղափար մը կարո՞ղ էք տալ, թէ ինչ թիւով յաճախորդներ (յաճախողներ, Բ.) ունիք ամէն տարի,- կը հարցնեմ:

- 1938-ին մատենադարան յաճախած են 120.000 անձեր, իսկ մօտ 135.000 գիրքեր տրամադրուած են ընթերցողներուն:

- Իսկ անոնցմէ ի՞նչ (անոնց ո՞ր, Բ.) տոկոսը գիտական ընթերցողներ են:

- Ունինք 6.000-7.000 գիտական յաճախորդներ եւ տրամադրած ենք 10.000 գիտական գիրքեր:

- Ուրիշ ի՞նչ նորութիւններ ունիք մեզ հաղորդելու,- կը հարցնեմ մատենադարանի գետնայարկ բաժնի մէջ ման գալով եւ դիտելով գիրքերու ու ամսագրերու եւ լրագրերու կոյտերը, որոնք դեռ պէտք է կազմուին, դասաւորուին, դարակներու մէջ տեղադրուին:

- Առայժմ մենք անհամբեր կը սպասենք նոր մատենադարանի շէնքի շինութեան, որ կարենանք այս խճողուած դրութեան վերջ տալ եւ օգտագործելի պայմաններ ստեղծել (վերախմբագրւած, Բ.): Իսկ այժմ կը մտադրուի կեդրոնական ընթերցողական պիպլիոթէքի պիւրոն յաջորդ տարի վերածել առան-

ձին մատենադարանային բաժնի:

- Ուրիշ մասնաւոր ի՞նչ մատենադարաններ ունիք:

- Շարք մը նուիրուած քոլլեքսիոններ, ինչպէս, Արդուքեան Երկայնաբազուկ իշխանէն գնուած շքեղ հրատարակութիւններ, Ղորղանեանի գրադարանը, յայտնի իր իւթոպիական (ընկերաբանական) գրականութեամբ, Ադեքսանդր Միասնիկեանի անձնական գրադարանը, առանձին սենեակի մը մէջ, որ ճոխ է նոր խորհրդային հրատարակութիւններով, նախկին Լազարեան Դեմարանի գրադարանը, գլխաւորաբար արեւելագիտական եւ կովկասագիտական հրատարակութիւններով, կան նաեւ անհատական նուիրուած գրադարաններ Գ. Զոհրապի, Շահնազարեանի եւայլն:

- Վերջին հարցում մը, Մատենադարանի պիւտճէն եւ աշխատանքներուն թիւը:

- Մատենադարանի պիւտճէն 60.000 ռուբլի է, այս տարի յիսուն տոկոսով յաւելում գտած է, իսկ աշխատողներու թիւն է երեսուն եւ վեց:

ԳՐԱՊԵՍԼԱՏԸ

Փրոֆ. Աճառեանը կը ստիպեմ որ վերադառնայ իր աշխատանոցը եւ չյոգնի: Նա կը պնդէ ընկերանալ, բայց նոյն պահուն կը հանդիպիմ փրոֆ. Յովհ. Յակոբեանին, որով (ուստի, Բ.) փրոֆ. Աճառեանէն հրաժեշտ կ'առնեմ, եւ փրոֆ. Յակոբեանի հետ կը մտնենք Մատենադարանին գրապալատը: Անոր վարիչն է օր. Թումանեանը, դուստրը բանաստեղծ Թումանեանի: Կը ծանօթանանք եւ կ'ընենք հարցումներ: Նա կը պատասխանէ ինծի այսպէս.

- Գրապալատը կազմակերպուած է

ԲԱԳԻՆ

1925-ին եւ ունի հետեւեալ աշխատանքի բաժինները. ա) Հայաստանի մէջ տպուած ռետ (որեւէ, Բ.) գիրքէն պարտադրաբար ստանալ 5 օրինակներ, որոնք կը գործածուին միւս խորհրդային հանրապետութիւններու հետ հրատարակչական փոխանակութիւններ կատարելու: բ) Հաւաքել՝ հոս, խորհրդային ժամանակի բոլոր գիրքերը եւ հանդէսները, եւ միւս հանրապետութիւններու մէջ հրատարակուած հայերէն գիրքերն ու հրատարակութիւնները: գ) Երեք ամիսը անգամ մը լոյս ընծայել Խ. Հայաստանի մէջ հրատարակուած յօդուածներու եւ ուսումնասիրութիւններու վերնագրերուն ցանկերը գրքոյկի ձեւով: դ) Տասը օրը անգամ մը հայերէն լեզուով եւ ռատիոյի միջոցաւ հաղորդել մասսայական հրատարակութիւններու ամփոփումը: ե) Պատրաստել Մամուլի մանրամասն վիճակագրութիւնները, հայերէն լեզուով հրատարակուած բոլոր պարբերականները կը ստացուին անխտիր, եւ անոնց պիպլիոկրաֆին (մատենագիտութիւնը, Բ.) պատրաստել, եւ ստեղծել արտասահմանի հայ հրատարակութիւններու հետ փոխանակման կապ:

Մինչ կը նօթագրեմ ստացած տեղեկութիւններս, վայրկեան առ վայրկեան շուրջս կը դարձնեմ աչքս եւ կը տեսնեմ հայուհիներ որոնք ծռած սեղաններու վրայ մանրակրկիտ կերպով աչքէ կ'անցնեն հայերէն հրատարակութիւնները եւ կ'արձանագրեն: Ժամը մօտ էր 12-ին, ժամադրուած էի Լուսժողովմատի կոմիսար Դրաստամատ Սիմոնեանի հետ: «Տպագրութեան Տարեգրի» բոլոր թիւերէն մէկ մէկ նմոյշ ծրարուած, թեւիս տակ կ'անցնեմ, շնորհակալութիւն կը յայտնեմ Օր. Աշխէն Թումանեանին եւ կ'անցնիմ երկրորդ Կնունի (°), չկրցանք ճշդել) փողոցով դէպի Լուսժողովմատը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍՃՈՂՎՈՒՄԱՆ ԿՈՄԻՍԱՐԻՆ ՄՕՏ

Ըստ մեր ժամադրութեան ժամը 12-ին կը մտնեմ Լուսժողովմատի Կոմիսար Դ. Սիմոնեանի գրասենեակէն ներս: Նա հազիւ երեսուն վեց տարեկան է, լուրջ արտայայտութեամբ, եւ ծանրաբեռնուած Հայաստանի Կրթական խրթին աշխատանքներով: Շրջանաւարտ Թիֆլիսի Ներսիսեան Վարժարանէն, դասընկեր Խորհրդային Հանրապետութիւններու Միութեան Ժողովրդային Կոմիսար Միկոյեանի: Համալսարանական կրթութիւնը ստացած Քիէվի Համալսարանի Առեւտրատնտեսական ինստիտիտէն, եղած է Ֆրանսա եւ Գերմանիա: Կը բարեւենք զիրար, ձեռք կը թօթունք, աթոռ մը կը հրամցնէ, իր քարտուղարը դուրս կ'ելլէ, եւ երկուքս կը մնանք առանձին: Իրեն ծանօթացած էի Երեւան հասնելուս առաջին օրն իսկ, երբ նա օթոմպիլ մստած կը մեկնէր Թիֆլիս եւ իր մեքենան, կանգնած փողոցի մը անկիւնը, դէմ դիմաց եկաւ եզան կառքի մը հետ, ստեղծելով հակապատկեր մը հինի եւ նորի, որ քիչ յետոյ պիտի անհետանայ Երեւանի տեսարանէն: Նօթատետրս կը բանամ եւ կը հարցնեմ.

- Հետաքրքրուած եմ իմանալ ձեզմէ թէ ի՞նչ փոփոխութիւններ յառաջ եկած են հայ ժողովուրդի կեանքին եւ մտքին մէջ այս վերջին եօթ-ութ տարիներու ընթացքին:

- Ամենաաչքառու փոփոխութիւնը որ տեղի կ'ունենայ, այն է, որ 1932-ի վերջը Հայաստանը պիտի դառնայ համատարած գրագիտութեան երկիր: Ամէնուրեք կը կիրարկուի պարտադիր ուսում: 1930-1931-ի ուսումնական տարւոյն ընթացքին Հայաստանի դպրոցներուն մէջ կային 85.000՝ 8-11 տարեկան երախաներ,

1931-ի Սեպտեմբերին պիտի ունենանք 90.000 երախայ: Երկրի ամբողջ բնակչության մեջ միայն 140.000 անգրագետ էր և կիսագրագետներ կան, սկսած 1931-ի Սեպտեմբերին մինչև 1932-ի վերջը ասոնք պիտի դառնան գրագետ: Այն բոլոր որ 50 տարեկանին վար են պիտի դառնան գրագետ, իսկ այս տարիքին վեր եղողներուն համար կը սարքուին կրթական, քատերական եւ կուլտուրական արշաւներ: Իսկ մեր պիտճէն 1930-1931-ին 15.000.000 ռուբլի էր, 1931-1932-ին պիտի ըլլայ 30.000.000 ռուբլի:

- Գիտերու եւ քաղաքներու մէջ գոյութիւն ունեցող կուլտուրական ճեղքուածքը վերացնելու համար ի՞նչ աշխատանքներ կը կատարուին:

- Մասնաւոր ուշադրութեան առարկայ կ'ըլլան գիտական վարժարանները եւ ազգային փոքրամասնութիւններու կրթական խնդիրները: Կեդրոնական գործադիր կոմիտէի որոշումով 1932-ի զարման սկիզբէն շրջանային բոլոր կեդրոններուն մէջ պիտի կառուցուին մշակութային տոմներ, որոնք պիտի բաղկանան գրադարանէ, քատրոնէ, ընթերցասրահէ եւ հաւաքոյթներու սրահներէ, այսպիսով մենք պիտի կարողանանք վերացնել անջրպետը գիտի եւ քաղաքի միջեւ: Բացի ասոնցմէ գիտական երիտասարդութիւնը փոխադրել քաղաք առժամեայ եւ կամ երկու տարուան համար ուսուցանելու դպրոցներու մէջ: Սարքել կարճատեւ դասընթացքներ եւ այդ կերպով երեսն քերել գիտի գործունեայ դասակարգը եւ քերել զանոնք քաղաք, շփման դնել զանոնք քաղաքի հետ եւ ապա դրկել գիտ իրենց հետ տանելով փոխանակուած գաղափարներ եւ ծրագիրներ: Միւս կողմէն քաղաքէն փոխադրել գիտ անհատներ առժամեայ եւ կամ

տեւական աշխատանքներու համար: Ես ինքս երեք օրէն կը մեկնիմ գիտ վեց շաբաթ ապրելու գիտացիներու հետ եւ մօտէն ծանօթանալու անոնց կեանքին եւ կարիքներուն:

- Խորհրդային Միութեան սահմաններէն ներս մտնելէս ի վեր հարցում մը զիս զբաղեցուցեր է: Հասարակութեան կենցաղին յառաջդիմական բնաշրջումը կ'ընթանայ աստիճանէ աստիճան: Ես կը տեսնեմ որ դուք զանց էք առած պատմութեան այս ընթացքը, եւ կ'ուզէք 100 կամ աւելի տարիներ պահանջող բնաշրջական պրոցէսը խճողել տասր տարուան եւ կամ նուազ ժամանակամիջոցի մը մէջ: Դա մի քիչ անիրականալի եւ անհեթեթ կը թուի, կարո՞ղ էք ըսել թէ ձեր դիտարկութիւնները ինչ են այս մասին:

- Այն անկիւնակէտը, որուն վրայ կը հիմնէք ձեր հարցումը, թէ՛ ժողովուրդներու յառաջդիմութիւնը կ'ընթանայ բնաշրջական պրոցէսի համաձայն աստիճանէ աստիճան, դրամատիրական իրաւակարգերու ընկերաբանական գաղափարախօսութիւն է: Մենք արդէն փորձով ցոյց կու տանք, որ կարելի է ազգերու յառաջդիմութեան մէջ ուսուցումներ կատարել: Յիսուն եւ կամ աւելի երկար տարիներ յառաջդիմութեան ճամբան անցնել սրընթաց, առանց կանգ առնելու կարգ մը հանգրուաններու վրայ: Այդ կերպով միայն մենք կարող ենք մեր ժողովուրդի ասիական անշարժութիւնը միանգամընդմիջտ հալեցնել ստեղծուած կեանքի թափի հնոցին մէջ: Դուք արդէն տեսած եւ պտտած ըլլալու էք մեր գործարանները, հինգ տարուան ընթացքին կարելի եղաւ նախապատմական հողագործութեան գերի երկիրը փոխել եւ անոր ճարտարարուեստական երկրի տարողութիւն տալ, դուք տեսած

ԲԱԳԻՆ

ըլլալու էք եւ գաղափարի փոխանակութիւն ունեցած մեր երեկուան ամէկոտ, քաշուող եւ անհատականութենէ զուրկ իզական սեռի հետ, այսօր նա ազատած է գերութենէն, իջած է կեանքի ասպարէզ եւ պատասխանատու պաշտօններ ստանձնած: Ու անոնք կը վիճին ձեզ հետ կուտորական եւ քաղաքական բոլոր հարցերու շուրջ: Անոնց աշխարհայեացքը ընդարձակուած եւ իրենց անհատականութիւնը նորակերտուած է: Ուրեմն կարելի է այս նախապատմական ժողովուրդը քշել դէպի առաջ՝ քաղաքակրթութեան ճակատի առաջին գիծը, եւ չդանդաղիլ ճամբու վրայ, որ դուք կը կոչէք «յառաջդիմական բնաշրջումի անհրաժեշտ աստիճաններ»: Այն ժողովուրդները, որոնք դաստիարակուած են մի, սապէս կոչեալ, անսխալական խտելոյնէն, անոնք չեն ուզեր հաւատալ, որ կարելի է ուրիշ կարճ եւ ուղիղ ճամբաներ գտնել ձեռք բերելու արդիւնքներ որ համահաւասար են արժէքով, եւ աւելի քան իրենց իրաւակարգերու եւ կենցաղի յառաջ բերած արդիւնքները: Ու արդէն ժամանակը եկած է յեղաշրջելու այսպիսի մտքի կեցուածքի տէր ժողովուրդներու ընկերաքանական խտելոյնիան:

Մի քիչ այս կարգի գաղափարի փոխանակութիւններ ունենալէ յետոյ, հասկնալ ուզեցի իր տրամադրութիւնը գաղութահայերու շուրջ եւ հարցուցի.

- Կարո՞ղ եմ ձեր կարծիքներուն եւ ցանկութիւններուն թարգման հանդիսանալ ի մօտ գաղութահայութեան:

- Պէտք ունինք տեխնիկական պատրաստութիւն ունեցող երիտասարդներու, փրոֆեսորներու եւ մտաւորականութեան, որ զան եւ ի սպաս դնեն իրենց ոյժը երկրի շինարարական աշխատանքներուն համար: Սալօնական հետաքրք-

րութիւնը մեզ համար անհաճոյ բան է. շօշափելի, քօնքրէթ արտայայտութիւնները՝ ցանկալի: Զգայնական տրամադրութիւնները աւելի լաւ է որ ցոյց չտան: Գաղութահայութեան շովինիստ եւ հակառակորդ մասին հետ գործ չունինք: Մեր իշխանութիւնը կը տրամադրէ հաւասար իրաւունք եւ ազատութիւն, թէ՛ հայուն, թէ՛ թուրքին, թէ՛ վրացիին եւ ռուսին, ու այս ձեւով կ'ուզենք ընթացք տալ մեր քաղաքակրթութեան:

- Ըսել կ'ուզէք որ գաղութահայ մտաւորականութիւնը ցարդ սալօնական հետաքրքրութիւն է ցոյց տուած հանդէպ Հայաստանի:

- Ըսել կ'ուզեմ շեշտել որ քօնքրէթ տրամադրութիւնները մեզի համար ցանկալի են եւ ոչ զգայնական արտայայտութիւնները:


Ես զգացի որ խայթ մը անհանգիստ կ'ընէր զիս: Ես հակաթոյն չգործածեցի, որովհետեւ զգացի որ ես եւ իմ նմանները չափազանց մեղաւոր ենք այն ազգի ու հայրենիքի առաջ, որոնց մասին մենք շատ խօսեցանք, իսկ այդ քօնքրէթ շինարարական եւ պատմական խոշոր աշխատանքներու մէջ, որոնք կը կատարւին մայր երկրին մէջ, մենք անմասն կը մնանք:

Այս մտածումներու մէջ խորասուզած կը քալեմ պատերու շուրջին մէջ հրակէզ արեւուն դէմ պաշտպանուելու, եւ կ'անցնիմ վանեցի բարեկամներէս Մովսէսեան-Գալֆայեան ընտանիքին մօտ վայելելու իրենց ճաշի հրաւերը: Վանեցի մամիկը եփած էր տեսակ տեսակ կերակուրներ՝ համեղ եւ առատ: Ըմբռնւնէլով գինիի գաւաթները, կը վայելեմ այն պատուական հայկական հիւրասիրութիւնը, որ ժամանակի փոթորիկները չեն կարողացած անոր ոգին քանդել:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱԴԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ ՓՈԽԱՆՑՈՒԵՅԱՆ ԳՈԹԱԿԱՆ ՈՃԻՆ

Հայկական ճարտարապետությունը ծա-
նօթ է միջազգային հանրության: Պատ-
մունքները կը յիշէ մեծանուն ճարտարա-
պետներ, ինչպէս Տրդատը, Սինանը, Պալ-
եանները: Հայաստանը, արեւելեան եւ
արեւմտեան, բաց երկինքի տակ բեմ է հայ
ճարտարապետներու հանճարէն ծնած
զլուխ գործոցներու: Հայկական մշակոյթի
հիմնական արտայայտութիւններէն է ան:
Կարպիս Արմէն ճարտարապետ է եւ
միշտ ուսումնասիրած է հայկական ճար-
տարապետութիւնը: Ան կ'ընդգծէ այն
ուշագրաւ երեւոյթը, որ մեր փոքրիկ ժողո-
վուրդը միջազգային քաղաքակրթութեան
մէջ ունեցած է կարելորդ դեր: Արդի ժամա-
նակներուն ալ ունեցած ենք մեծ ճարտա-
րապետներ, ինչպէս Թորոս Թորաման-
եանը եւ Ալեքսանդր Թամանեանը: Յիշել
Մովսէս Խորեղանցիի խօսքը, որ փոքրիկ
ածու մըն ենք, բայց հոն կան մեծութեան
գործեր:

Բ.



Սբ. Հռիփսիմէ 618-ին շինուած տա-
ճարին վրայ, երկու նշանաւոր հնարքներ
երեւցան -
ա. Կամարաջլեր, որոնք գմբէթի ներքնա-
մասին հիմն-գագաթ բարձրանալով՝
կ'օգնէին անոր ծանրութիւնը կրելու - ԳԾ
1:

բ. Թումբ-յենարաններ, որոնք գմբէթի
արտաքնամասին չորս կողմը կանգնե-
լով՝ կ'արգիլէին անոր ընդլայնումը երկ-
րաշարժի պարագային - ԳԾ 2 :

Եօթներորդ դարու հայ ճարտարապե-
տութեան Ոսկեդարէն ետք, Արաբներու
705-ին գրաւումը եւ եկեղեցիներու շինու-



ԲԱԳԻՆ

քեան արգիլումը՝ կարգ մը ճարտարապետներու արտագաղթը պատճառեցին դէպի Պոլիս եւ Պալքանեան քաղաքներ։

Սուրբ Հռոմէական Կայսրութեան Շարլմաներ կայսեր (768-814) թագուհին՝ Բիզանդիոնի հայածին կայսեր դուստրը թլլալով՝ հայ ճարտարապետներ հրաւիրեց որ Ռեկենզպրիկ քաղաքին մէջ եկեղեցիներ կանգնեն։

Բիզանդիոնի կողմէ 1055-ին Թոնդրակեցիներու արքայի դէպի Պալքաններ, նոյնպէս սատարեց հայ ճարտարապետական կարգ մը յատկանիշներու տարածման։

Ստեփանոս Ասողիկ պատմիչը կը վկայէ թէ Պոլսոյ 983 թուականի երկրաշարժին՝ Սր. Սոփիայի գմբէթը ամբողջովին փոլ եկաւ։ Վասիլ Բ. հայածին կայսրը մինչեւ 986 փորձելով յոյն ճարտարապետ գտնել, հրաւիրեց Տրդատ Անեցին։ Ան երեք տարի աշխատելով՝ 989-ին կրցաւ գմբէթի հիմքերէն մինչեւ գագաթը վերագծել ու կանգնել այդ։ Ան օգտագործեց Սր. Հռիփսիմէի երկու վերոնշեալ հնարքները՝ ԳԾ 3-ի ցոյց տուած ձևով։ Բիւրեւ հասած Ռուս իշխան մը տեսնելով «երկնակախ» գմբէթը՝ հիացած մըմբաց «Անկարելի է ժխտել Աստուծոյ ներկայութիւնը՝ այս տաճարին մէջ»։... Ու 1000 թուականին՝ Ռուսերը բնդունեցան Բրիստոնէութիւնը։

Հետաքրքրական է, որ Հարվարտ համալսարանի Նասիպողլու թուրք ճարտարագիտութեան ուսանողը, որպէս իր թեզի նիւթ՝ երեք տարի է ի վեր մանրամասն չափագրութեամբ՝ հետեւեցաւ այդ գմբէթի ձեւափոխութեան՝ փոքր երկրաշարժներու ենթարկուելով։ Իր եզրակացութիւնը այն էր, թէ գմբէթը իր առաձգականութեամբ՝ յաղթահարած էր երկրաշարժները՝ 989-էն մինչեւ 1963։ Առաձ-


գական շինանիւթը՝ հայերու 591-602 թուականներուն հնարած ձուաշաղխն էր, երբ Մօրիկ Հայկազնի հրամանով՝ շինեցին Աւանի յունադաւան կաթողիկոսարանը ԳԾ 4։


Վերադառնալով Հայաստան, Տրդատ 989-1001 թուականներուն շինեց իր գլուխ-գործոց Անիի Մայր եկեղեցին, որուն կառոյցը հետեւեալ Գորական յատկանիշները ցոյց կու տայ ԳԾ 5 -

գ. Դիւղաւորուած մոյթեր - խտրճի վերածուած խումբ մը բարակ սիւներ որոնք տեսքով աւելի նուրբ կ'երեւին քան նոյն տրամագիծով հաստ սիւնը։

դ. Սուր կամարներ - աւելի երկնասլաց քան կիսաբոլորակ կամարները։

Այս երկու յատկանիշները՝ միասնաբար նոյն տաճարի մէջ գործածուած՝ Գորական ոճի անժխտելի յատկանիշը





այդքան հպարտացաւ ան, որ մեր օրերու շատ մը քննադատներ կը խորհին, թէ իր անունով ուզեց որ ճանչցուի նոր մասին ոճը: Բայց երկար տարիներ վերջ, բոլորովին անձանօք պատճառներով՝ այդ ոճը «Գոթական» կոչուեցաւ: Կարեւորը այն է թէ այդ ոճի երկու յատկանիշները՝ վերոյիշեալ գ. եւ դ. (մոյթերուն եւ կամարներուն) կը վերաբերէին:





Իսկ հայութեան համար մասնաւոր յիշատակութեան արժանի է երկու թուականներու 1141 - 1001 = 140 տարբերութիւնը, որ Անիի Մայր եկեղեցոյ առաջնահերթութիւնը կ'արտայայտէ այդ ոճի կազմութեան մէջ:


Բաբերդի գաւառի Վարգահան գիւղին մէջ՝ սուրբան Համիտի հրաւիրած Չերքէզ ներգաղթողներ, փլատակի վերածած են գոթականի ուղղահայեաց կշիռքը ցոյց տուող ութաբսիղ եկեղեցի մը: Արտաքինամասը իր եռանկիւնաձեւ խորշերով եւ գալարած եւ կիսասիւններով՝ Գոթականի կը

կը նկատուին Եւրոպացի քննադատներու կողմէ:

Իւ-տը-Ֆրանսի Սուկեր եպիսկոպոսը, 1141-ին, իր եկեղեցին երգչախումբի մասը կը փափաքէր քնդլայնել եւ գտաւ «Արեւելքէն եկած վարպետ շինարար-ճարտարապետ մը...»:


Անոր անունը երբեք չյայտնեց ան - իբրեւ թէ «Եկեղեցոյ օրէնքին համաձայն», բայց շինութեան արդիւնքով





09 ՇԵՐԻ ԵՎԱՐԱՆՈՒՄԸ, ՈՒՐՈՐՈՒՄ, ԹԵՐՈՐՈՒՄ, ԳԱՎԱՐՈՒՄ

Կ. Յուզյան-Կոնստանտին, օրհնակ
Հայրենիքի Կոնստանտին Կոնստանտին
Կոնստանտին Կոնստանտին Կոնստանտին
Կոնստանտին Կոնստանտին Կոնստանտին
Կոնստանտին Կոնստանտին Կոնստանտին
Կոնստանտին Կոնստանտին Կոնստանտին
Կոնստանտին Կոնստանտին Կոնստանտին
Կոնստանտին Կոնստանտին Կոնստանտին



12th century. Gothic prince's residence Vorzahan complex, used as stone quarry by Circassian immigrants, invited by Abdul-Hamid II to reduce Armenian majority

նմանի, իսկ սիմետրիկ ու գմբեքներով ներքնամասով՝ 12-րդ դարու առանձնապատկեր կեղծոնագմբեք կառույց մըն է: ԳԾ 6

Վենետիկ, 1204-ին, իր նախադրմիտր տրամադրեց Չորրորդ Խաչակրության բայց Երուսաղեմի ճամբուն վրայ, որպես շահաբեր շեղում՝ Խաչակիրները հասան Պոլիս ու պարտք մը հաւաքելու պատրի-

ւակով՝ ներսէն գրաւեցին քաղաքը: Արուեստի գործեր - արձանէն մինչեւ խճանկար - գողցուեցան ու փոխադրուեցան Վենետիկ ու Եւրոպա:

Հիացումով դիտեցին Տրդատի «երկնակախ» գմբեքը, բայց բարեբախտաբար այդ... փոխադրելի չէր:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Արդար պիտի ըլլար Տրդատ Անեցիին վերագրել ճարտարապետական երեք ոճերու նախակարապետ շինութիւններու կառույցները յղանալը -

ա. Անիի Մայր եկեղեցին՝ մեր հայկական ոճին,

բ. Սբ. Սոփիայի գմբեքը՝ Բիզանդական ոճին եւ

գ. Իլ տը Ֆրանսի երգչախումբի մասը՝ Գոթական ոճին:

Դժբախտաբար ներկայ դարուս՝ ոչ յոյները, ոչ ֆրանսացիները եւ ոչ մանաւանդ բուրքերը կը նշեն Տրդատ Անեցիի անունը եւ հնարամտութիւնը:

Մեզի կը մնայ որպէս իրողութեան տեղեակ հայեր, ամէն առիթով յիշել Տրդատ Անեցիի մեծութիւնը:

Վանգուլըր, Բանասիրա

ԱՂԲԻՒՐՆԵՐ

- Արմէն, Ա. (1992): An Architecture of Survival (Urban Research & Design)
Bachmann W.(1913): Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan (Leipzig)
Buckminster F(1924): A History of World Architecture (London)
Goodwin, G. (1971): A History of Ottoman Architecture (Alden Press, Oxford)
Hasratian, M (2000): Early Christian Architecture in Armenia (Moscow)
Strzygowsky J (1918): Die Baukunst der Armenier und Europa (Vienna)
Թորամանեան Թ: (1942-8): Նիւթեր Հայ ճարտարապետութեան Պատմութիւն (Երեւան)



ՄԵԾ ԳՐՈՂԻՆ 100-ԱՄԵԱԿԸ

ԱԼՊԵՐ ՔԱՄԻՒ՝ ՀԱՄԱԱՐԴԿԱՅԻՆ ԵՒ ՄԻՇՏ ՆԵՐԿԱՅ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Ալպեր Քամի գրեթե ժամանակակից շատ մեծ գրող էր եւ ան կր պատկանի համաշխարհային մշակույթին եւ խիղճին: Ֆրանսական գրականության 20-րդ դարու առաջին կեսի պայծառ դեմքերէն հանդիսացաւ ան, բայց մարդ-ընթերցողը, որ ժողովուրդին ալ պատկանի, զայն կ'ընդունի որպէս իր հարազատը: Անմիջականի ակնթարթային հեքով ապրողներ իրենք զիրենք կը գրկեն մեծերու մտերմութենէն, հետեւաբար նաեւ կը ջարդեն այն հայելիները որոնց մէջ իրենք զիրենք կրնան տեսնել: Սպառողական շնչասպառութիւնը եւ կարգախօսային աղմկարարութիւնը մեզ կ'օտարացնեն, կ'այլասերեն մարդը, որուն համար կր հաւատայինք որ Աստուծոյ պատկերով էր:

Այս մեծ գրողը ծնած էր 7 նոյեմբեր 1913-ին, Ալժերիոյ մէջ, ուր ստացած էր նաեւ իր ուսումը: Հայրը ալգասցի էր եւ մայրը սպանական ծագում ունէր: Հայրը Հոկտեմբեր 1914-ի կը սպաննուի, Առաջին Համաշխարհային պատերազմին, Մառնի կռիւներուն: Հազիւ պատերազմը սկսած, մայրը ապաստանած էր իր մօր քով, Ալժէրադաքը: Հայրը չէ ճանչցած: Մայրը տա-



ռապած է գրեթե խլութենէ եւ խօսելու դժուարութենէ, եւ ոչ կարդալ ոչ ալ գրել գիտէր: Իր ուսուցիչին թելադրութեամբ կրթաթոշակ ստանալու քննութիւններուն կը ներկայանայ, որպէսզի կարենայ հետեւիլ երկրորդական եւ համալսարանական ուսման: Այդ ուսուցչին նկատմամբ

2013. ՅԱՍՏԻՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱԳԻՆ

պիտի մնայ միշտ երախտագետ:

Կը մեռնի ինքնաշարժի արկածի հետեւանքով, Յունուար 1960-ին, Վիլլըպլեվեն, Ֆրանսա:

Ալպեր Քամի իմաստասէր է, վիպագիր, քատերագիր, նորավիպագիր, յանձնառու լրագրող է, ուսումնասիրող: Մաս կազմած է Ֆրանսայի դիմադրական շարժման, որ կը պայքարէր գերմանական գրաւման ուժերուն դէմ: 1957-ին ստացած է գրականութեան Նոպէլեան մրցանակը, իր «Ժանտախտը» վէպէն ետք:

Դժբախտաբար, մեծ գրողները, ժամանակը երբ կ'անցնի, կը դառնան դասագիրքերու էջ, կամ թոշակառուներու ընթերցման նիւթ (եթէ հեռատեսիլի ոճիր-արկածի կրկնուող պատմութիւնները ժամանակ ձգեն):

Մեծ գրողին ծանօթացման «փորձ»ը կը միտի ըլլալ խորացման հրաւեր մը, երէկ էւ այսօր մեր ժամանակը յուզող մեծ հարցերուն մասին մտածելու: Նախ մտածելու: Յաճախ կը կարծենք լուծումներ գտնել առանց մտածած ըլլալու, առանց գրոյցի նստած ըլլալու գաղափարներու աշխարհի ընտրեալներուն հետ: Այդ ընելու ճամբան կը բանան գիրքերը եւ անոնց ընթերցումը:

Ալպեր Քամիի աշխարհը ըմբռնելու մարդկայնութիւնն է, հիւմանիզմը, որ կը բխի անհեթեթի ըմբռնումէն, անհեթեթութիւնը մարդու գոյավիճակին: Բայց Ալպեր Քամի չի խեղդուիր անհեթեթին մէջ, քանի մարդկայնութիւնը կը թելադրէ չընդունիլ անհեթեթը, պայքարիլ անոր դէմ: Իր գիրքը, «Ըմբոստ Մարդը» (L'homme révolté) այդ պայքարին իմաստասիրութիւնն է, գործի եւ արարման ճամբով, որոնք իմաստ կու տան աշխարհին, որուն մէջ ենք առանց ընտրած ըլլալու, եւ մարդու կեանքին նոյն այդ աշխարհին մէջ: Այս պայքարն է որ կեանքը կը դարձնէ մարդկային, քանի որ «այն ատեն կը ծնի տա-

րօրինակ ուրախութիւնը որ կ'օգնէ ապրելու եւ մեռնելու»:

Տեղ մը կը նկարագրէ իր ընտանեկան կացութիւնը. «Օր մը կին մը կար, որուն ամուսնոյն մահը զինք թշուառութեան մատնած էր: Ան ապրած էր իր մօրը քով, նոյնպէս թշուառ, տկար եղբօր մը հետ որ բանուոր էր: Ան ապրելու համար աշխատած էր, տոներ մաքրած էր, իր գաւակներու կրթութիւնը յանձնած էր իր մօր: Կոշտ, հպարտ, տիրապետող, ան զանոնք կրթեց կարծրութեամբ»: Ուրիշ տեղ մը, իր երկրորդական վարժարանի տարիներուն մասին կ'ըսէ. «Ամօք կը զգայի աղքատութեան եւ ընտանիքիս համար»: Կը շարունակէ. «Առաջ ամէնքը ինծի պէս էին եւ թշուառութիւնը ինծի կը թուէր ըլլալ այս աշխարհի կարգը: Երկրորդականի մէջ է որ սորվեցայ տարբերութիւնը...»:

Դժուար պատանութիւն մը ունեցած է: Թողբախտէ տառապած է: Մսավաճառ հօրեղբայրը եւ անոր կինը տէր կ'ըլլան իրեն, կ'ունենայ առանձին սենեակ մը: Այդ տարիներուն կը ծանօթանայ Նիցշէի գրականութեան:

Ալպեր Քամի միշտ կապուած եղած է թշուառներուն եւ աշխատատեղներուն, որոնց մաս կազմած է, որոնք ներկայ են իր գրականութեան մէջ:

Այս մեծ գրողը, առանց խուսանաւելու քննադատած է ամբողջատիրական կարգերը: Հիմա դիւրին է այս մասին խօսիլ: Բայց Երկրորդ Աշխարհամարտէն ետք, Երրորդ Աշխարհի ազատութեան կարգախօսով հրապարակին տիրած Խորհրդային Միութեան դէմ խօսիլ մեղանշում էր, մանաւանդ որ այդ օրերուն Ֆրանսայի մէջ իր հզօրութեան գագաթնակէտին հասած էր համայնավար կուսակցութիւնը: Անոր շարքերուն կը գտնուէին մեծանուն դէմքեր: Ալպեր Քամի եւս, պահ մը անդամակցած է անոր շարքերուն: Երբ հրաժարած է համայնավար կուսակցութենէն,

գծադրում է Ժան-Փոլ Սարբերի հետ:

Մէկ բան որոշ է: Այս արտակարգ գրողը պայքարած է Ալժերիոյ մահմետականներուն պարտադրուած անհաւասարութիւններուն դէմ, աւելի ուշ պաշտպանած է որպէս չարաշահող ներկայացուող նոյն Ալժերիոյ ֆրանսացիները, հակաֆաշիստ սպանացի գաղթականները, ստալինականութեան զոհերը, եւ գաղափարի կամ իրաւունքի համար պայքարող այլ փոքրամասնութիւններ:

Ապրած է ալժերիական պատերազմի հակասութիւնները: Կոչ կ'ընէ կողմերուն միջեւ զինադադարի եւ կը քննադատուի երկու կողմերէն միաժամանակ: Կեցուածք ունեցող մտաւորական է: Ֆրանգոյի Սպանիան երբ կը դառնայ UNESCO-ի անդամ, կը հրաժարի այդ կազմակերպութենէն որպէս բողոք:

Ալպէր Բամիւ մերժած է բանտարկուիլ այս կամ այն գաղափարախօսութեան մէջ, մարքսիզմի եւ գոյապաշտութեան: Իրեն համար մերժելի եղած են ամէն կարգի վերացականութիւնները, որոնք մեզ կը հեռացնեն մարդկայինէն:

20-րդ դարու արտակարգ խիղճն է Ալպէր Բամիւ, որ ձեւաւորուած է մարդկային պատմութեան յոռեգոյն պահերով:

Բամիւի իմացական աշխարհը կարելի չէ ամփոփել ծանօթացումով մը: Բայց կան առաջնորդող գիծեր: Եթէ մէկ կողմէ կը կարդանք որ «անհեթեթը կը ծնի բախումէն մարդկային կոչին եւ աշխարհի անբանականութեան միջեւ», որ կը ձգտի իմաստաւորել կեանքը, միւս կողմէ կայ ըմբոստացումը. «Իմաստասիրական յարակից կարելի դիրքորոշումներէն մին, այսպէս ըմբոստացումն է»: Եւ ի վերջոյ, ըստ իրեն, անհեթեթը պէտք չէ դադրի, քանի որ անոր մէջ կը գտնուի այն ուժականութիւնը, որ կը սնուցանէ ըմբոստացումը:

Մեծ գրող մը եւ լայնածիր գրականութիւն մը: Միշտ ժամանակակից: Եւ անհեթեթ է այդ լայնածիր աշխարհը ամփոփելու փորձութիւնը: Պէտք է յուսալ, որ ներկայի հակասութիւններուն մէջ քաթխուած մարդիկ, կը կարդան Ալպէր Բամիւի գիրքերը:

Համադրում՝ **Յ.Պ.**

Խորհրդածե՛նք իր կարգ մը մտածումներուն հետեւելով:

- ❑ **«Ուսուցիչին էական դերն է արթնցնել աշխատելու եւ ձանձնալու ուրախութիւնը»:**
- ❑ **«Արհամարհանքի ամէն ձեւ, եթէ միջամտէ քաղաքականութեան մէջ, կը պատրաստէ կամ կը հաստատէ ֆաշականութիւնը»:**
- ❑ **«Ան որ ոչինչ կ'ընէ, երբեք ժամանակ չունի ոչինչ ընելու»:**
- ❑ **«Դժբախտութեան պահուն է, որ կը վարժուինք ձմարտութեան, այսինքն՝ լռութեան»:**
- ❑ **«Ատեղծել կը նշանակէ ապրիլ երկու անգամ»:**
- ❑ **«Տխմարութիւնը միշտ կը պնդէ»:**
- ❑ **«Այդ է սէրը, տալ ամէնը, գոհել ամէնը, առանց փոխադարձութեան յոյսի»:**
- ❑ **«Կասկածները, անոնք ամէնէն մտերիմներն են մեր ունեցածին»:**
- ❑ **«Քաղաքակիրթ ժողովուրդի մը հակառակը ստեղծագործող ժողովուրդ մըն է»:**

ԲԱԳԻՆ



Մեծ գրողի ծննդեան 100-ամեակին թելադրուած, պրպտումներ կը կատարէի, զինք եւ իր գաղափարները յիշելու եւ յիշեցնելու համար: Մեծ եղաւ զարմացումս հանդիպելով Ֆրանսական Մամլոյ Գործակալութեան (AFP) 8/8/2011-ի լուրին, որուն միջազգային հանրային կարծիքը պատշաճ ձեւով չէր արձագանգած: Մօտիկ անցեալը, նաե՛ւ մեր, հասկնալու համար, լուրը կը հրատարակենք, թարգմանաբար: Ինչպէ՞ս կարելի է իմանալ ճշմարտութիւնը: Վերագրումը, այդ օրերու մթնոլորտին մէջ, ճշմարտութենէն կրնայ հեռու չըլլալ: Ան մեզ կրնայ մղել զուգահեռներ տեսնելու նաեւ մեր «փոքրիկ ածու»ին համար. յիշեցում մը: Պարոյր Սեւակն ալ մեռաւ ինքնաշարժի արկածի հետեւանքով: Հայաստանի Հանրապետութիւնը դեռ չէ արտօնած որ այդ օրերու արխիւները բացուին:

Բ.



ՀԱՌԱՄ - ՍԱՀ ԱԼՊԵՐ-ՔԱՍԻԻԻ. Չհրապարակուած հեղք մը՝ Քա. ԺԷ. ՊԷ.Ն (ԽՄՀՄ-ի Ազգային Անվարանգութեան Կոմիտէն) խնդրոյ առակայ դարձնող:

ՀԱՌԱՄ.- Ճամբու արկածը, որուն հետեւանքով ֆրանսացի գրող Ալպեր Զամիւ մեռած է 1960-ին, 46 տարեկանին, կրնայ կազմակերպուած ըլլալ Քա.ԺԷ.ՊԷ.Ն գործակալներուն կողմէ, ըստ իտալացի համալսարանականի մը, Երկուշաբթի օր վերապահութեամբ ընդունուած հաստատումներուն:

Ճովաննի Զաթելլի, Արեւելեան Եւրոպայի մասնագետ մը, որուն տեսութիւնը ներակայացուած է իտալական **ԻԼ Զորրիէ-րէ տելլա Սերա** օրաթերթի սիւնակներուն մէջ, դէպքերու այս մեկնաբանութիւնը գտած է Չեխ բանաստեղծ Եան Չապրանայի «Ամբողջ Կեանքը» խորագրուած յետմահու լոյս տեսած օրագրութեան մէջ: Ան կը հաստատէ, «որ ճամբու արկածը, որուն հետեւանքով Զամիւ մեռած էր 1960-ին,

կարգադրուած էր խորհրդային լրտեսական ցանցին կողմէ: Անոնք գործիքով մը վնասած են ինքնաշարժի անուաղողերէն (pneu) մէկուն, որ արագացման ընթացքին կտրատուած կամ ծակած է»: Կ'աւելցնէ, որ «այս գործողութեան հրահանգը անձնապէս տրուած է նախարար Շեփիլովին կողմէ (Տիմիդրի, խորհրդային արտաքին գործոց), որպէս «պարգեւ» Արձակագէտներ թերթին մէջ Մարտ 1957-ին լոյս տեսած յօդուածին համար, ուր Զամիւ յարձակած էր այդ նախարարին վրայ, Հունգարիոյ դէպքերուն առիթով, յստակօրէն անոր անունը տալով:

Այս տեսութիւնը որքան որ ալ ուշագրաւ թուի, իր ճէյմս Պոնտի յատուկ մանրամասնութիւններով, չի համոզեր ֆրանսացի իմաստասէր Միշել Օնֆրէն, որ Յունուարին հեղինակին մասին կենսագրութիւն մը պիտի հրատարակէ: «Չեմ խորհիր այդ ընդունելի ըլլայ, Քա.ԺԷ.ՊԷ.Ն միջոցները ունէր այլապէս վերջ տալու Ալպեր Զամիւի», յայտնած է ան Մամլոյ Գոր-



ծակալութեան: Մանաւանդ, «այդ օր Զամի գնացքով պիտի վերադառնար: Նոյն սիսկ իր տոմսը ուներ, եւ վերջին պահուն է որ ան որոշած է վերադառնալ Միշէլ Կալիմարի հետ (հրատարակիչ Կասդոնի եղբորորդին): Աւելին. ինքնաշարժը կը պատկանէր Կալիմարի», ընդգծելով միաժամանակ, որ **Ֆասէլ Վեկան** ինքնաշարժ մըն էր, որ «լաւ վիճակի մէջ չէր»: Ընդգծած է նաեւ, «որ խորհրդայինները ցանկութիւն ալ ունենային անկէ ձերբագատուելու (Զամիւէն), այդպէս չէին վարուեր»:

Վոյթէք Ռիբքա, Փրակայի ամբողջատիրական կարգերու ուսումնասիրութեան հիմնարկի աշխատակիցներէն, ինք եւս խիստ վերապահ է այդ տեսութեան հանդէպ, զոր «կարելի չէ ճշդել... Բոլոր հետաքրքրական բաները զորս Էսդէֆէն (STP, չեխական գաղտնի ոստիկանութիւնը) գտած է եւ խորհրդայինները կ'ու-

զէին, ուղղակի հոն գացած են (Մոսկուա): Ռուսերը թոյլ պիտի չտան, որ ձեր քիթը հոն կոխէք», Մամլոյ գործակալութեան ըսած է ան:

Խորհրդաւորութիւնը, եթէ կայ, դեռ կրնայ երկար ժամանակ տեւել, պատմութեան Նոպէլեան ամենէն երիտասարդ դափնեկիրի մահուան մասին (1957-ին 44 տարեկան էր), Ֆասէլ Վեկա ինքնաշարժի մը մէջ, որ բախած է ծառի մը, Սանս քաղաքէն 24 քիլոմէթր հեռու, վերջ տալով փայլակային ասպարեզին «Ժանտախտ»ի (La Peste) եւ «Անկում»ի (La Chute) հեղինակին:

Յանձնառու գրող, ան բողոքած էր Արեւելեան Պերլինի (Յունիս 1950) եւ Պուտափեշտի համայնավարական ծաւալապատութեան դէմ (1956):

Հայացուց **Յ.Պ.**



ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ Կ'ԱՆՋԱՏՈՒԻ՞ ԶԲՕՍԱՇՐՋԻԿԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԷՆ

Գալուստ Պապեանի
լուսանկարներու ալպոմը* թերթատելով

Ամէն ոք կրնայ լուսանկարել: Այն-
քան կատարաւ գործուած մեքենաներ
կան, որ ճիգ չեն պահանջեր, ինչպէս
անցեալին, երբ կը հաշուէին լոյսի զօ-
րութիւնը, լաւ նկարողները կամ սիրո-
ղական լուսանկարիչները, պզտիկ գոր-
ծիքով մը: Հիմա մեքենաները իրենք
կ'ընեն այդ աշխատանքը: Նկարներու
ալպոմի ալ կարիք չկայ, քանի որ զա-
նոնք ուղղակի կրնանք տեղադրել հա-
մակարգիչի պաստառին վրայ:

Հակառակ այս դիրտութիւններուն,
զբօսաշրջիկի մը նկարած Արարատին
եւ իրայատուկ «աչք» ունեցող լուսան-
կարիչի Արարատին միջեւ տարբերու-
թիւն կ'ըլլայ: Այդ «աչք» ունեցող լու-
սանկարիչը կամ հարցում ունի իր
«բնորդ»ին ուղղուած, կամ անկէ անդին
ըսելիք ունի: Ի՞նչ հարկէ՝ ապրում ունեցող
վաւերականներու պարագային: Վեր-
ջիններու լուսանկարը կը ձգտի գեղան-

կար ըլլալ: Այդ ուստումը հագուադէպօ-
րէն կը պատահի:

Եւրոպա եւ Ամերիկա մրցանակներ
կը տրուին լուսանկարներու: Բոլորին
ծանօթ է Եռստօֆ Բարշի «Չերչիլ»ը
առանց իր սիկառին: Քոլոմպիոյ երկ-
րաշարժին ժամեր տեսած գետնին տա-
կը սուգուող մանուկին դատապարտը-
ւածի անյոսութիւնը ինքնին խօսուն է:
Բայց լուսանկարիչը «բռնած» էր ման-
կան աչքերը: Պաղեստինցի յողարկա-
ւորներու գիրկերու մէջ տարուող զոյգ
մանուկներու թաղման ընկերացող թա-
փօրի գերագոյն յուզման ակնթարթը
գրեթէ յաւերժացուցած էր լուսանկարի-
չը եւ արժանացաւ մրցանակի:

Լուսանկարները կրնան ըլլալ պար-
զապէս սեւ-ճերմակ կամ գունաւոր, ար-
ժէքի տեսակէտէ անոնք գրեթէ անխօս
են, երբ բացակայ է ոսպնեակի ետին
կանգնած որոնողը, երկխօսութեան

ձգտողը: Երբ քնդհանրացած արձակուրդի օրերուն «կ'այցելենք», մեծ ու պզտիկ, անմիջապէս կը լուսանկարենք: Ապա, այդ նկարներուն նայելով կը յիշենք կամ կը պատմենք: Ջրօսաշրջիկին լուսանկարը պատահական հանդիպում մը կը սառեցնէ:

Արուեստագէտ կամ մամուլի լուսանկարիչը կ'երթայ դէպի առարկան զայն խօսեցնելու համար: Օրինակ, անոնց «բռնած» դիմանկարները անցագրի մէջ դրուելու համար չեն, նոյն դիրքով, նոյն չափերով:

Այս երկար ներածականը անհրաժեշտ համարեցի խօսելու համար Գալուստ Պապեանի լուսանկարներու մեծադիր էջերով ծաւալուն ալպոմին մասին: Ի հարկէ, իւրաքանչիւր անձ որ կը դարձնէ այդ ալպոմին էջերը, նոյն հետաքրքրութեամբ կանգ չ'առնէր բոլոր էջերուն վրայ: Եթէ այդ նկարներուն մէկ մասը «բան մը քսէ» դիտողին, որ անպայման լուսանկարողին ըսածը կամ ըսելիքը չէ, լուսանկարը կը դադրի մեքենական վերարտադրութիւն մը ըլլալէ: Կը դառնայ այլ բան: Այսինքն, եթէ սառած իրականութիւնը խօսի, լուսանկարը այլ մակարդակ կը բարձրանայ:



Կոնոթ Բաղամաս, Գալուստ Պապեան, (լուսանկար)

Ի հարկէ, լռելեայն հասկնալի է, որ Գալուստ Պապեանի լուսանկարելու «արկածախնդրութիւն»ը ազգային-հայրենասիրական է: Կը տողանցեն սփիւռք-մարդիկ, արուեստագէտներ, մտաւորականներ, յատուկ անուններ, որոնք իրենք զիրենք կը յիշեցնեն... զիրենք ճանչցողներուն: Կը տողանցեն նաեւ հայրենի արդէն գէթ անունով ծանօթ մարդիկ, գրողներ, բանաստեղծներ, արուեստագէտներ, յուշարձաններ:

ԲԱԳԻՆ

Գալուստ Պապեան, իր ձեռով, մեր պատմությունը կր փռել էջերու վրայ, ոմանց համար նորություն, հպանցիկ ծանոթացում, ուրիշներու համար՝ յուշեր արծարծող, կայի եւ չկայի յիշատակներ: Ինչ որ կր տեսնենք հին օրերու պատմություն չէ, անմիջական ներկան է:

Երբեմն նաեւ՝ հայրենի կեանք՝ որպէս բնական, դաշտ, մարգագետին ոչխարներով, որոնք հողին սէրը կր պատմեն, թերեւս նաեւ իւրաքանչիւր սփիւռքահայու հոգիին մէջ տեղ մը մոխիրի տակ քնացող հայրենադարձութեան զգացումը կր ջերմացնեն, որ հագուադէպօրէն կր վերածուի արարման:

Այս լուսանկարները, սեւ-ճերմակ, ծիածնային գոյներէ անդին, խորքը սեւեռելու հրաւեր են, աչքերու խտիղ պատճառող կարմիրէ, կապոյտէ, կանաչէ տարբեր:

Երբեմն տեսնուածի ետին թաքնուածին չհասնելու անբաւարարութիւն կայ, իւրաքանչիւրի նայուածքին ակնկալութեան յարաբերաբար: Այսպէս, յանկարծ կրնաք կանգ առնել Կոնտ թաղամասին մէջ, երբ բառերու ընթերցումը կր յուշէ, որ այդ Կոնտն է: Դռներու մուտքին կանգնած մանուկը կր գրաւէ համակ ուշադրութիւնը, Կոնտը կը կորսուի:

Կոնտը եթէ խօսէր իր պատերով, ժամանակի գիծին վրայ կանգ առած բաւերով, այլապէս «բաներ» կրնար պատմել: Բայց Գալուստ Պապեան կը սիրէ մարդիկը, ժողովուրդը, իրենց կեանքով, իր ոսպնեակը զանոնք կը փնտռէ:

Եթէ իրեն ընկերացած ըլլայի, պիտի յիշեցնէի, որ Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան վերջին վարչապե-

տը հոն թաքնուած էր համայնավարական հալածանքի օրերուն: Թերեւս այդ տունը դեռ կայ, քանի որ Կոնտը Երեւանի կուլտին վրայ սառած տեսակ մը ճարտարապետութիւն է...

Երեւան եւ Սեւան այցելող զբօսաշրջիկները չեն տեսներ գիւղի, գիւղացիին եւ հոն միօրինակ եւ միաժամանակ զանազանութեամբ բաբախող կեանքը: Որքա՛ն դրական գործ կատարած է Գալուստ Պապեանի ոսպնեակը, զանոնք յիշեցնելով:

Կ'ապրինք ձայնի եւ պատկերի համաշխարհայնացած քաղաքակրթութեան մէջ: Գալուստ Պապեանի լուսանկարները արագութեամբ տեսնելու հնարաւորութիւն կու տան էջերը դարձնողին: Եթէ շատեր ծանօթ են Սարգիս Փարաճանեանին, թերեւս ցանկութիւն կ'արթննայ ճանչնալու նաեւ բանաստեղծ Արտեմ Յարութիւնեանը, անոր լուսանկարին եւ անունին հանդիպելէ ետք, նաեւ՝ բանաստեղծութիւն կարդալու:

Գալուստ Պապեանի լուսանկարներու ալպոմը սոսկ գրադարանի մը մէջ գեղեցիկ ներկայութիւն մը ըլլալէ աւելին պէտք է ըլլայ: Ան ինքզինք փնտռելու սփիւռքահայու փորձն է, փորձութիւնը, որ կը ցանկայ իր նմանները հրաւիրել ինքնատիպ «մեղսակցութեան» մը:

Սեղսակցութիւն ի՞նչ բանի...

28 Փետրուար 2013
Նուազի-լը-Կրան

.....

* Թորոնթո, 2011, 324 էջ

* Հրատարակութիւն

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԳԼՈՒԽ» մասնահիւղի



ՔԱՂԱՔԸ ԼՍՈՂ ԵՒ ՎԵՏՎԵՏԱՅՈՂ
ԳՈՅՆԵՐՈՎ ՉԱՅՆ ԴԱՋՈՂ

ՄԻՐԷՅ ԿՈԿԻԿԵԱՆ

ՄԵՌԵՍ



Միրէյ Կոկիկեանի կտաւները տեսած էի «Նոս՛գ Արք» (Նոյեան Տապան) ար-
ւեստի ցուցասրահը: Քաղաքներու տու-
փիկանման պատերու ետին բարախող
կեանքը կարծած էի բռնել: Ուզած էի
հանդիպիլ իրեն: Ապա Համագգայինի
«Լիւսի Թիւթիւնճեան» պատկերասրա-
հին մէջ կրկին դէմ առ դէմ գտնուած էի

իր աղմկող աղեւնատան լուսամուտնե-
րով բնակուած տուներուն:

Մեծ քաղաքներու իրարու վրայ դիգ-
ւած շէնքերու մէջ մարդիկը բանտար-
կած բնակարաններ, ուր առանձնու-
թիւնը կարծէք կը նուագուէր կտաւնե-
րուն վրայ: Գտած էի, որ ժամանակակից
մարդու տեսադաշտը եւ հոգեկան աշ-


խարհը կը պատկերացնէին անոնք, առանց աղմուկի եւ առանց ըսն չնշանակող պոռոտ գոյներու խառնուրդի:

Իր տան սենեակներուն եւ անցքերուն մէջ իր գեղանկարները կը շնչէին, կողք կողքի, դէմ դիմաց, մէկը միւսին վրայ՝ սպասելով մեկնումի: Կը պատրաստուէր ցուցահանդէսի: Խանդավառ եւ յարաշարժ կին մըն է Միրէյ Կոկիկեան, վստահութիւն ներշնչող ազնուութեամբ, թափանցիկ, ըաց դէպի ուրիշները: Կարծէք իր ստեղծագործական աշխարհին մէջ ընթացիկ եւ մանրուք հարցերուն տեղ չկար:

Իր շուրջ աղմուկ ստեղծելու ցանկութիւնը ընդհանրապէս էր: Անտարագելի եւ մեղմ խորհրդապաշտութիւն մը կը պատմէին իր գործերը:

Ինքնատիպ ուղեծիր մը ունեցած է Միրէյ Կոկիկեան: Գեղանկարչները ընդհանրապէս մանկութեան օրերուն իսկ կը դրսեւորեն իրենց հակումը, ընտելութիւնը: Ինք անկեղծութեամբ կը պատմէ, որ ուզած են որ ըփիշկ ըլլայ, ատամնարոյժ, ուզած է հիւանդապահուհի ըլլալ եւ ծնողքը ընդդիմացած են: Ի վերջոյ թելադրած են, որ Լիբանանի Գեղարուեստից Ակադեմիան (ALBA) երթայ եւ հետեւի ներքին ճարտարապետութեան: Երեք տարի ետք, պատահմամբ, կը մտնէ կերպարուեստի ուսանողներու աշխատանոցը: Հոն է որ կը ընկնի հիացումով եւ ինքնիրեն կ'ըսէ. «Եթէ ես ալ անոնց պէս կարենայի ըլլալ»... Իր կոչումին ձայնը կը լսէ:

Ծնողքը կրկին կ'ընդդիմանան եւ չեն



Nuit Magique 90x140 oil



Cygne! Me voila 90x140 oil

ուզեր որ իր ուսման երեք տարիները կորսուին, ծախսերը ի դերեւ ելլեն: Աւելին նաեւ. ինչպէ՞ս կարելի է կեանքը շահիլ նկարչութեամբ:

Կր յաջողի, առանց իր ուսման երեք տարիները կորսնցնելու, հետեւիլ կերպարուեստի չորրորդ տարուան դասընթացներուն: Իր ընատուր ձիրքը կը յայտնարերուի: Գերմանացի ուսուցիչ մը գինք տպաւորած է, որուն հետ աշխատած է, սիրած է երփնամատիտով պատկերներ (pastel) գծել եւ իր առաջին փորձերը յաջողութեամբ պսակուած են: Անակնկալ մրցանակ մըն ալ շահած է: Երախտագիտութեամբ կը յիշէ իր ուսուցիչը, որ իրեն տուած է երփնամատիտով աշխատելու ճաշակը: Իր սե-

րունդէն շատերու վաստակաւոր ուսուցիչը՝ Կիւվտէր՝ գինք տպաւորած է: Իր ուսուցիչներէն տիկին Հարֆուշ, իր գործը գնահատելով, իրեն թելադրած է երփնամատիտով (pastel) ստեղծագործել:

Կր յիշէ այդ տարիները: Փոլ Կիրակոսեանէն, որ եղած է իր ուսուցիչը, կը պահէ յուզումնախառն յիշատակ: Ան ըսած է. «Գուն պիտի յաջողիս»: Ժողովրդական արուեստի աշխատանքներու մրցանակ ստացած է:

Կը սիրէ ժամանակակից նկարիչները, ինչպէս Փիքասոն: Կր սիրէ Պեթհովէնը եւ կ'ունկնդրէ երբ կ'աշխատի:

Շրջան մը ապրած է Փարիզ:

Կը գրուցենք եւ կը հարցնեմ.

ԲԱԳԻՆ

- Իւրաքանչիւր ստեղծագործող կրողն է անցեալի մը, մշակոյթի, հայոց պարադային այժմ նորոյթ է խօսիլ «գոյգ մշակոյթներու» մասին: Ինչպէ՞ս կը սահմանէք դուք ձեզ: Ինչպէ՞ս կը կենակցին գոյգ մշակոյթները, խզո՞ւմ թէ՞ հարստացում: Այն որ չէք կրնար հաղորդակցիլ եւ հաղորդուիլ ձեր ծագման

լեզուով գոյութենական խնդիր մը կը ստեղծէ՞ եւ այդ կը ժայթքէ՞ ձեր գործին մէջ:

Հասունացման հասած Միրէյ Կոկիկեան հարկ էր որ խօսէր իր աշխարհին, գոյներուն, ապրումներուն եւ անոնց դրսեւորման մասին: Ըսէր թէ ինչո՞ւ կը նկարէ, ի՞նչ ըսելու համար: Հայերէն դժուարութեամբ հասկցող եւ չխօսող Միրէյ Կոկիկեան կը զարմացնէ.

- Գործերուս տիրական կարմիրը իմ մէջ է, հո- գիս խորը, եւ այդ Հայաստանն է:

Իր անձին եւ գործին հանդէպ վերապահ Միրէյ Կոկիկեան կը բաց-ւի:

- Ես կը կրեմ գոյգ մշակոյթները: Արդէն կ'ուսուցանեմ Համազգայինի կերպարուստի դպրոցը, ուր աշակերտներուն իննիսուն տոկոսը հայեր են: Երբ հայերէն կը խօսին կը հասկընամ: Իրենց ալ այդ կ'ըսեմ:

Պարզ է. ինք-գինք դուրսէն դի-




Nature morte 40x30 oil

ԲԱԳԻՆ



ԱՐԱՒԵՍ



Կեյս 40x60 սմ

2013, ԾԱ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1

տող չի համարեր Միրէյ Կոկիկեան:


Քաղաքը կը գտնուի Միրէյ Կոկիկեանի երանգապնակին մէջ: Զիրար սեղմող եւ մարդը թաքցնող այդ շէնքերը մղձաւանջ կ'առնեն, ընդլծենէն կը հեռացրնեն: Անոնք նաեւ կ'արտայայտեն իր թաքուն աշխարհը, զոր ինք չ'ուզեր ըսել: Եւ երբ դիտել կու տամ, որ ընդլծիւնը ըստակայ է, կ'ըսէ:

- Շէնքերուն միջեւ կան ծառեր, այդ ընդլծիւնն է, ըստ նաեւ այդպէս է արդի կեանքը: Ես կ'ապաստանիմ իմ նկարչութեանս մէջ, գոյները կ'արտայայտեն իմ հոգեվիճակներս: Ես իմ ներաշխարհս

ունիմ եւ անտարբեր չեմ աշխարհի ցաւերուն եւ տառապանքին: Ամերիկայի «11 Սեպտեմբեր»ը կամ Լիբանանի մէջ Ռաֆիք Հարիրիի դէմ կատարուած ահարեկչութիւնը խորապէս ցնցած են զիս, եւ այդ խոր ապրումներս վերածած եմ գեղանկարի: Ես ազատ նկարիչ եմ, եւ մարդիկ արգելք եղած են «11 Սեպտեմբեր»ը ներկայացնող գործս ցուցադրելու, անոր մէջ քաղաքական դիրքորոշում տեսնելով, խուսափած են:

Կը խօսինք Միրէյ Կոկիկեանի գործերուն մէջ երեւցող «չարժու»ին մասին:

- Ես ըրածրացման եւ թուիչքի շար-



Beyond Timbuctu 80x100 oil



Impulsions Eclectiques 22x25 mixed media

Ժողովը ունի իմ մեջ, եւ այդ կը դրոշմեմ գործերուս: Այդ կու գայ նաեւ անկէ, որ ես ունեցած եմ կրօնական եւ հաւատքի արտակարգ ապրում եւ փորձ, Աերպիոյ մէջ, Արքուհի Կոյսին հետ, որ վերացման շնորհ է: Ըսի, որ Պեթհովեն կրլսեմ, դասականները, բայց նաեւ կրօնական երգերը, չարականները: Կը

զգամ, որ ես կ'առաջնորդուիմ ուժով մը, որ շնորհ մըն է տրուած Աստուծոյ կողմէ: Կը սիրեմ կարմիրը, որ կեանքի գոյնն է, յոյսի գոյնն է:

Միշտ խորհած եմ, որ արուեստագետին կարծիքը պէտք չէ հարցնել իր գործին մասին: Գործը ինք պէտք է խօսի արուեստասէրին կամ ան ուզէ լսել: Կը

ԲԱԳԻՆ

հարցնեմ, թե Միրէյ Կոկիկեան ունի՞
գործեր գորս ինք իրեն համար կը պահէ,
որպէս իր «գաղտնի պարտէզը»: Անցոյց
կու տայ ճերմակով գործեր, որոնք ինք-
նատիպ թելադրականութիւն ունին,
անոնցմէ մին գորշ եւ խորհրդաւոր ան-
տառ մըն է, հովէն ծածուած ծառերով:
Կը պատմէ, որ իրեն համար հաճելի
եղած էր իմանալ, որ գործերը փոխանց-
ւած էին մէկ արուեստասէրէն ուրիշի
մը: Այսինքն, իր գործը չէր վերածուած
սոսկ գեղօրի, այլ կ'ապրէր մարդոց գի-
տակցութեան եւ վայելքին հետ:

Պահ մը առանձին կը մնամ: Կը շրջիմ
պատերուն վրայ կախուած կտաւները
դիտելով: Ինզինքիս թոյլ կու տամ պա-
տի մը կռթնած, իրարու վրայ գիրքերու
պէս շարուած նկարները բանալու:
Տպաւորութիւն մը. Միրէյ Կոկիկեան
կարծէք չի գծեր դուրսի համար, նախ
կը գծէ իր իսկ վայելքին համար, քանի
որ կը խաղայ գոյներու հետ, որոնց
երանգները կը փոխուին լոյսին հետ,
նաեւ իրմէ ճառագայթող լոյսին հետ:

Արեւելքը, կանացի մեղմ գգայնու-
թիւնը, մարդոց կեանքով ապրող քաղա-
քը, ինչո՞ւ չըսել, իր մէջ միշտ առկայ
պատկանելիութեան ազգային-մշակու-
թային երկուութիւնը, նաեւ շատերու
կողմէ ժամանակավրէպ համարուող իր
նրբագգաց «միսթիզիզմ»ը կը գումար-
ւին իր ներաշխարհի երանգապնակին
վրայ: Այդպէս ալ տեղի կ'ունենայ «ալ-
շիմի»ն եւ կը ծնի գործը:

Եւ ջերմացած գրոյցի ընթացքին, քա-
ղաքի աղետնատան լուսամուտներէն

եկած արուեստասէրը կը մասնակցի
այդ «ալշիմիստ»ի խաղին:

Կը մտածեմ, որ եթէ Միրէյ Կոկիկեա-
նի, ինչպէս տաղանդաւոր ուրիշներու,
«տիրութիւն ընող» կառույցներ ըլլային,
զանոնք հասցնէին արուեստի մեծ «չու-
կաներ»ը, ան կրնար ինքզինք այլապէս
արժեցնել եւ մեծնալ:

Կրնայ զարմանալի թուիլ: Երբ ար-
դէն հրաժեշտ տուած էի եւ կը սպասէի
ինքնաշարժ մը, ցանկութիւն ունէի վե-
րադառնալու, թափանցելու եւ թա-
փանցուելու արուեստի ուրախութեան
առթած միամտութեամբ:

Շատեր արուեստի գործեր կը գնեն
որպէս գեղօր, իրենց տան կարասինե-
րուն յարմարող, ներդրում ընելու կամ
տուրքէ խուսափելու համար: Իսկ ես կը
մտածեմ, փողոցին անկիւնը, թէ ինչ-
պէ՞ս կարելի է արուեստ սիրել, հաշուա-
պահական տիրութիւններէն հեռանա-
լով, միամիտ եւ պարզ հոգիով:

Իմաստասէր մը կ'ըսէր, թէ իրերուն
պէտք է մօտենալ պարզ եւ միամիտ
հոգիով (Il faut aller aux choses avec une
âme nue et ingénue - Husserl):

Այդպէս է Միրէյ Կոկիկեանի ստեղ-
ծած գոյներու եւ շնչացող գիծերու
խաղը:

Թ. Պ.

7 Մարտ 2013, Պէյրութ



RETROSPECTIVE
«ՆԵՐԱՇԽԱՐՅԻՍ ՈՍՊՆԵԱԿԷՆ»
ԳԱԼՈՒՍՏ ՊԱՊԵԱՆ
Թորոնթո, 2011

«5 ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ»
Հեղինակ **ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ**
Պեյրուք, 2012




«ՊՏՈՅՑ ՄԸ ՀԱՅՈՑ ԼԵՃՈՒԻ ԲԱՌԱՐԱՆԻՆ ՄԷՋ»
ՅՈՒՇԱՏԵՏՐ - 78
Հեղինակ **Ռ. ՀԱՍՏԷՃԵԱՆ**
Հատոր Ա.
Իսթանպուլ, 2012




«ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 5»
Հեղինակ **ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ**
Նիւ Ճըրզի, 2012



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»
Հեղինակ **Մ. Յ. ՊՈՒՆՏՈՒԳԵԱՆ**
Փոխ-կառավարիչ Լիբանանի Կեդրոնական դրամատան 1985-1990
Պեյրուք, 2012




«ՈՐԲԱՄ ԵՒ ԾԻԾԱՂԻՄ»
Հեղինակ **ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԿՈԱՆԵԱՆ**
2013



«ԷՕԺԷՆ ԵՈՒՆԵՍՔՕ» ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿ
«ԱՆՋԵԹԵԹ»Ի ԴԻՄԱԿՈՎ ՆՈՐԻՐԱՊԱՇՏ ԳՐՈՂԸ ԵՒ
«ԱՐՔԱՆ ԿԸ ՄԱՐԱՆԱՅ»
Հեղինակ **ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ**
Պեյրուք, 2012

«Guide de la Mémoire Arménienne en France»
Հեղինակ **HRANT NORSEN**





ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ